



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




Ltn  
V471



1p  
2/ - 4.









1999

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ

Ն Ը Խ Ն Ե Ը Ց

1800

UNIVERSITY OF TORONTO

8 11 10 11 11

# ՃԼՈՒՔ


ԵՒ ԻՌՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԻ ԿԱՒԱՏՈՅ

ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՅ ԿԵՐՅ ՄԵՐՈՅ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ

ԵՒ

ՎԱՀՐԱՄԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԻ



## ՏՊԵԱԼ

Ի ԿԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԵՍԻ  
ՎԵՀԱՓԵՌ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂՈՍԻՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՈՒՈՅՍ  
ԵՐՈՒՍԱԿԵՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՊՕԼՍՈՅ Տ. ՅԱԿՈԲԱՅ  
ՍՐԲԱԶՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



## ՅԵՐՈՒՍԱԿԵՄ

Ի ՏՊԱՐԱՐԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎՐԵԱՆՅ



1244

Handwritten blue ink scribbles.



9-11-76

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

2 11 76

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13




4471-60

2B.472

8023-124- 93-140-1022, 10200-1 13

8023-124- 93-140-1022, 10200-1 13



## ՅԱՌԱՅԱԿԱՆ

**Յ**ԱՃԱԽՈՒԹԻՒՆ ազգային մատենա-  
գրութեանց՝ փառաւոր իմն ցոյցք են  
մտահարուսան լինելոյ Ազգին և կրթա-  
գոյն յուսումն հանձարոյ և բանի . և ոչ  
դոյզն զգրասիրացն գործէ փոյթ զմիաս  
յուշով ընթերցանութիւն նոցին, և աչ  
խոյժ ոգւով քաղել անտի զնախնեաց իւ-  
րեանց պատկառելի յիշատակս խոհուն  
դատողութեանց և զգաղափարացն յիրս  
իրս իմաստասիրութե և կրօնի . զորոց  
փոյթ տարեալ վեհ իմն ոգւով նախան-  
ձաւորութեան թողին յեկեղեցւոջ յիւ-  
րաքանչիւր դարս, յորս ոչ սրահասեցին  
բնաւ երբէք տարածայն վարդապետու-  
թիւնք և այլափառ հրահանգութիւնք  
կրօնի՝ յուզել յառնել ընդդէմ Հայաս-  
տանեացս նախահաւատ և առաքելա-  
կան Եկեղեցւոյ :

Աի է յայսպիսեաց դարուց և մամա-  
նակն յորում կամքս, տեսարանն առաջի

բայեալ մեր տարադէպ բանակաւու  
թէց, յորս զտահեա վարեալ միանգամ  
և յալվիցս անձնահաճք ոմանք յաճախ  
եալք յայլալեզու ազգս և ոչ ճշմարտա  
խնդիրք, որոց սրտորուակեալ զուզիլ  
տեսու թի հաւատոյ՝ ՚ի վեր հանեն զօ  
տար ուսմունս հակառակս սրբոց հարցն  
վարդապետութեց, ՚ի նոյն հեփամու  
լեալ և զմեզ խտրդաւանել՝ ՚ի շարժումն  
հաստատութեան հիման եկեղեցւոյ կա  
ռուցելոյ ՚ի վերայ վիմին Քրիստոսի յա  
ռաքելոցն սրբազանից: Աստի սրտա  
ճառք մեզ այս իսկ եղեն, հայելով ՚ի  
հարկաւորութիւն ժամանակիս, ՚ի լոյս  
ընծայել զառաջիկայ մատենիկս, ոչ նօ  
րոգ ինչ հեղինակութեամբ, այլ զառ ՚ի  
Հոգւոյն սրբոց ազգեցեալս ՚ի միտս ե  
րանելի հարցն մերոց սրբոց ՚ի վաղ ժա  
մանակաց՝ կրկին վերանորոգել ՚ի հաս  
տատութիւնս սուրբապատ հաւատոյս:

Առաջինն է սրբոց Գրիգորի Նարեկա  
ցւոյ արացեալ Բան ուղիղ հաւատոյ և  
բարի վարուց. որոց թէ և գոն յազգիս  
կրկին տարագրութիւնք, այլ առ դիւրա  
գնի առնել զայն և առձեռն սրտորաս  
ամենեցուն, զերրորդ իմն փոյթ կալար  
առ ՚ի մէնջ ընծայել տարագրութեամբ՝  
բազդատեալ ընդ այլ ձեռագիրս:

Երկրորդն է վահրամայ վարդապե-  
տի Բաբուն կոչեցելոյ, այն է քարտու-  
ղար Վեոնի Բ. Հայոց արքայի, արարեալ  
ճառ հոգեւից 'ի սուրբ Երրորդութիւնն՝  
լստ խնդրոյ բարեպաշտ Թագաւորին :  
'Իարձեալ նորին ճառ երկրորդ 'ի Մար-  
դեղութիւնն Քնի : Յերկոսին իսկ ճառս  
փայլէ լուսաւոր միտք և խորին հմտու-  
թիւն երևելի մատենագրիս 'ի խնդիրս  
աստուածաբանականս : Առաջնոյ ճառ իս  
չորք օրինակք էին առ մեզ՝ սր բոլորգիր  
և որ նօտրագիծ, զորս ընդ հին տպա-  
գրին բաղդատութեամբ ուղղեցաք : Իսկ  
երկրորդին մի և եթ օրինակ՝ գրեալ 'ի  
թուին Հայոց Ռճժէ . վասն որոյ ուրեք  
ուրեք յանկամս Թողաք լստ բնագրին՝  
կարօտ այլոյ օրինակաց : Հատացեալ  
առ այժմ այսօրիւք մատուցանել 'ի ջամբ  
մտաց հոգեսիրաց, Թողումք այլում ժա-  
մանակի ընծայել 'ի լոյս և զայլ աշխատա-  
սիրութիւնս սրբոց հարց մերոց յայսմ  
կարգի, ջանալով զայնս 'ի ձեռս բերել՝  
եթէ ողջախոհ ուսումնասիրաց 'ի նոյն  
օգնեցեն մեզ յօժարութիւնք :

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to its orientation and fading. It appears to be a list or a series of entries, possibly related to a historical or administrative record.



ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՅՈՒՆԵՐԱՆԵԱՆ ՄԵՆԱՒՈՐԻ

ԳՐԻԳՈՐԻ ՆԸՐԵԿԸՑԻՈՅ

ՀԱՄԱՌՕՏԻՒՔ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ

ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ

Ե Ի

ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Ի Խ Ն Դ Ր Ո Յ

ՆՈՐԻՆ ՀԱՐԱԶԱՏԻ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Յ

ԴԻՒԱՆԱԴՊԻ

ՎԵՋՐԱԳՐԱՆԻ ՏՈՒՐԱՍ

ՎԻՈՒՆՏԵՍ ՏԵՄԵՏԱՐԱՆԵՐԻ

ՏՈՒՆՆԻՆՆԵՐ ՎԻՈՒՆՏԵՍ

ՎՈՒՄԻՆՆԵՐ ԵՄԵՐՈՒՄՆԵՐ

ՏՈՒՆՆԻՆՆԵՐ ԵՄԵՐՈՒՄՆԵՐ

ԴՅ

ՏԵՄԵՏԱՐԱՆԵՐԻ ՎՈՒՄԻՆՆԵՐ

ՏՈՒՆՆԻՆՆԵՐ

ՎՈՒՄԻՆՆԵՐ ԵՄԵՐՈՒՄՆԵՐ

ՏՈՒՆՆԻՆՆԵՐ

ՎՈՒՄԻՆՆԵՐ

ՄՐԻՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

# ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Բ Ա Ն

ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ

ԵՒ ԽՐԱՏ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՑ

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

ՏԵՐՈՒՆԵԱՆՆ Հաւանեալ խրատու՝ որ ըստ պարզեւասէր և յոքնառատ բարեբարութեանն տայ ամենայնի առատապէս և ոչ նախատէ . ըստ որում և աւսացն . « Ամենայն որ խնդրէ՝ առնու , և որ հայցէ՝ գտանէ »<sup>1</sup> : Ար և զիմանալիսն սեղանաւորեաց հաց գխտութեան և գինի իմաստութեան՝ գեղեցկապէս նմին քաղցելոց բանական անձանց . և բարձր ձայնիւ քարոզչացն՝ կոչեաց ՚ի խրախճանու թիւն հոգևոր ըստ առաւելողին . և մեզ զնոյն օրինադրեաց ասելով . « Ամենայնի որ խնդրէ ՚ի քէն՝ տուր »<sup>2</sup> : Եւ եթէ զմարմնականն բարւոք է տալ կա-

1 Մատթ . Է . 8 :

2 Անդ . Ե . 42 :

բօսեւոցն պէտս , որոյ և փոխարէն զիս  
կզբանէ պատրաստեալ արքայութիւնն  
պարգևեաց . ո՞րչափ ևս առաւել զհո-  
գւոցն ՚ի բարեաց աղքատութիւն լցու-  
ցանել է գովելի : Այլ այնքան առաւել  
լստ որում առաջին և մեծ և պատուա-  
կան է ոգի քան զմարմին՝ տիրականին  
գորով պատկեր . և սա երկրորդ նմին և  
հոգանիւթ , զոր և աէրն գործով յայտ  
արարեալ : Քանզի զհետեւեալսն ինքեան  
ժողովուրդս՝ երկիցս միայն գրեալ էթէ  
կերակրեաց հացիւ . բայց կենարար բա-  
նին վարդապետութեամբ՝ (որ է հոգւոց  
կերակուր՝ ըստ այնմ , « Եթէ ոչ հացիւ  
միայն կեցցէ մարդ , այլ ամենայն բա-  
նիւ որ ելանէ ՚ի բերանոյ Աստուծոյ »<sup>1</sup> . )  
միշտ զհոգիս նոցա կերակրէր ՚ի ժամու  
և տարածամու : Այլ և առակաւ իմաս-  
տուն ծառային տալ ՚ի ժամու ծառայա-  
կցացն զկերակուր . և քանքարացն օրի-  
նակաւ՝ կրկնապատիկ շահողին և զլացու-  
ղին՝ զնոյն նշանակեաց էթէ պարտ է  
տալ ամենայնի որ ինգրիցէ :

Իսկ ինձ առ քեզ ո՞վ սիրեցեալ ան-  
 ձին իմոյ, կրկին և ոչ մեկին է հար-  
 կաւորութիւն տալոյ: Սի՛ր ըստ վերտ-  
 գոյն ցուցեալ Տեառն հրամանին, որ  
 ամենայն խնդրողի օրինադրէ զտալն .  
 և երկրորդ՝ ըստ բնաւոր արեանառու  
 մերձաւորութեան և սննդակցութեան:  
 Օ, որ 'ի հեղգալն՝ երկնչիմ 'ի ձայնէ մե-  
 ծաբարբառ փողոցն, մարգարէին՝ և ա-  
 ռաքելոյն: Սի՛ոյն՝ զի ասէ. « Յընտան-  
 եաց զաւակի քո՝ զակն 'ի վայր մի արկտ-  
 նիցես ո՞՞ անտես առնելով. և միւսոյն՝  
 « Եթէ ոք իւրոցն՝ մանաւանդ և ընտա-  
 նեացն խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոցն  
 ուրացեալ է, և չար և ս. քան զանհաւատ-  
 սըն է ո՞՞: Ի՛այց դու զգոյշ լեր՝ գործով  
 փութալ 'ի կատարումն ասացելոցս, ըստ  
 նմանութեան ժիր և հաւատարիմ ծա-  
 ռային՝ որ արթնութիւն սպասէր տեառն  
 գալստեան: « Օ, ի ոչ եթէ լսելիք օրինա-  
 ցըն արդարասցին, գրէ առաքեալն, այլ  
 առնելիք օրինացն ո՞՞: Օ, ի ըստ որում ես

1 Եւայի . ԾԸ . 7:

3 Հռովմ . Բ . 13:

2 Ա . Տիմ . Ե . 8:

'ի յոչ տալն դատապարտիմ՝ իբր զանցող  
 տէրունեացն, նոյնպէս և դու յոչ հետե-  
 ւիլն գործով՝ տուեցելոցն : Օ, ի որ ըզ-  
 տէրունեանն թագուցանող զբանին ար-  
 ծաթ՝ ասաց հանել յարտաքին խաւա-  
 րըն, նոյն և զարկեալն 'ի սեղանաւորս  
 'ի լսելիս մարդկան՝ 'ի լսողացն տոկո-  
 սիւք ասաց պահանջել . և գիտողացն  
 զկամս տեսուն իւրոյ և ոչ արարողացն,  
 գան բազում ըմպել : Այլ որ շտեմա-  
 րանապետն է ամենայն բարեաց, և  
 զամենեցուն կամի զկեալն և 'ի գիտու-  
 թիւն ճշմարտութեան զհասանելն, տա-  
 ցէ և մեզ յիւրոցն առնուլ արժանա-  
 պէս ըստ բարեսէր կամացն, որպէս հա-  
 ւատարիմ տնտես գիտութեան բանին,  
 որ է հաց յերկնից իջեալ՝ կերակուր հս-  
 գւոց, և օրինօք մատակարարել : Այլ  
 ձեզ մտադրութեամբ և բարւոք հա-  
 ւանութեամբ ընդունել, և տալ զպը-  
 տուղ ըստ յօքնաբեղուն և պարարտ  
 երկրին, յաննախանձ սերմանողէն ըզ-  
 չորրորդն ընկալեալ մասն կենացն սեր-  
 ման :

Եւ արդ սկսեսցուք՝ ուստի սկսանեն է արժան՝ ՚ի դաւանութիւնն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն և արմատ ամենայն բարեաց: Քանզի և Տէրն զայս եղ հիմն եկեղեցւոյ իւրոյ՝ ասելով առ նախնի դաւանողն Պետրոս, թէ դու քո խոստովանութեամբդ՝ ես իբրև զվեմ հաստատուն և անշարժ. և ՚ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ՝, այսինքն՝ զամենայն հաւատացեալս և ճշմարիտ խոստովանողս համազոյ և զուգական Երրորդութեանն: Աս և շինիչն եկեղեցւոյ Պօղոս՝ ասէ. « Շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց և մարգարէից »<sup>2</sup>: Եւ թէ՛ « Իբրև իմաստուն ճարտարասէտ հիմն եղի »<sup>3</sup>, զհաւատսրն որ ՚ի սուրբ Երրորդութիւնն. յորոյ վերայ գեղեցկապէս յարմարի շինուած ամենայն առաքինութեան:

Եւ արդ՝ այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն: Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, գոյ կատա-

1 Մատթ. Ժ. 2. 18:

3 Ա. Կորն. Գ. 10:

2 Եփես. Բ. 20:

րեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ,  
անսրատճառ, անիմանալի, անտեսանելի,  
անճառելի, անհաս, սրարզ, անզննին,  
անկէտ, անսահման, աներբ, անուր,  
անբովանդակելի, անայլայլելի, անփո-  
փոխ, գերաբուն, գերազոյ, գերալոյս,  
գերանճառ : Ոչ յումեքէ եղեալ, և ոչ  
ինքն զինքն արարեալ. ոչինչ յառաջ քան  
զնա, և ոչ զոյգ ընդ նմին. այլ ինքն գո-  
լով սկիզբն և սրատճառ ամենայնի. հա-  
մագոյիցն՝ ծննդեամբ և ելողութեամբ,  
և եղականացն՝ արարչութեամբ :

Իսկ զՄիածինն Բան նորին և ծը-  
նունդ՝ ՚ի վեր քան զբան : Կերսրարան  
և ճառագայթ էութեանն, նկարագիր  
և կնիք կենդանի. իմաստութիւն և զօ-  
րութիւն. ամենայն աստուածաւայել-  
լուչ կոչմանցն Հօր՝ էապէս ունող որ-  
պէս նոյնագոյ բնութիւն : Աստուած  
յԱստուծոյ, անեղ յանեղէ, անժամա-  
նակ յանժամանակէ, կեանք ՚ի կենաց,  
լոյս ՚ի լուսոյ : Ոչ կրտսեր քան զՀայր՝  
Թէ և ծնունդ, այլ որքան հայր՝ հայր,  
և որդի՝ որդի : Օ, ՚ի և հայր՝ որդւոյ



հայր . և որդի ոչ ունելով , և ոչ զհայր  
ուսթիւնն ունել կարէ . ըստ որում և  
ոչ որդի՝ առանց հօր . այլ յատկութի  
երկաքանչիւրոցն ՚ի միմեանց ճանաչի :

Եւ Հոգին սուրբ՝ բղխումն ՚ի Հօրէ  
անձառաքար . ոչ ըստ Որդւոյ ծնըն-  
դեամբ , այլ ելումն յէութենէն . ըստ  
որում , « Հոգին ճշմարտութեան որ ՚ի  
Հօրէ ելանէ » . էակից Հօր , և փառակից  
Որդւոյ : Այն բնութեամբ՝ համագոյիւ  
ցըն ամենայնի հաղորդ և զուգական ,  
որ ինչ զՀօրէ և զՈրդւոյ ասացաւ անե-  
զութեան , և որ ՚ի կարգին : Այսն զի  
ոչ ինչ առաւելութիւն և կամ նուա-  
զութիւն ՚ի պաշտելի Երրորդութեանն  
տեսանի . այլ համայնիւք գոլով զոյգ և  
հաւասար միաւոր՝ բաց յանձնաւորու-  
թեանցն յատկութեանց , և որ նոցին  
հետեի : Այսինքն , զի հայր՝ հայր . և  
որդի՝ որդի . և հոգի՝ հոգի : Եւ ոչ է  
իմանալ և կամ ասել զհայր՝ որդի և  
կամ հոգի . և ոչ զորդի՝ հայր կամ հո-  
գի . և ոչ զհոգի՝ հայր և կամ որդի :

Այլ հայր՝ միշտ հայր . և որդի՝ միշտ որդի . և հոգի՝ միշտ հոգի Աստուծոյ :

Եւ ըստ առանձնաւորութեանցն՝ և յատկութիւնքն զանազանեալ . այսինքն՝ ճնողութիւն , և ճնելութիւն , և ելողութիւն : Օ՛ր ոչ երբեք հայր՝ ծնունդ կամ ելողութիւն . և ոչ Որդի՝ ճնող կամ ելումն , և ոչ հոգի՝ ճնունդ կամ ճնող :

Այլ միշտ պատշաճի ճնողութիւն հօր , ճնելութիւն Որդւոյ , և ելողութիւն հոգւոյ , զի որպէս առանձնաւորութիւնքն անփոփոխելի , այսպէս և յատկութիւնքն : Ա՛յ հայր պատճառ և սկիզբն համագոյիցն ճննդեան և ելողութեան : Ի՛այց եթէ ՚ի ժամանակահան ոք այսու զիջանէ ՚ի կարծիս , և՛ անպատճառ և անսկիզբն , մշտնջենաբար ընդ սկզբանն գոլով և պատճառի՝ նոյնագոյ բնութեամբ : Եւ ոչ երիցութիւն և կրտսերութիւն , ոչ մեծութիւն և փոքրկութիւն , ոչ անեղութիւն և եղելութիւն ՚ի համարունսն իմանի . այլ ամենայնիւ բաց յառանձնաւորու-

թեանցն՝ հաւասար և միաւոր . բնու-  
 թեամբ , աստուածու թեամբ , անեղու-  
 թեամբ , զօրու թեամբ , մեծու թեամբ ,  
 փառօք , պատուով , անհասու թեամբ ,  
 անտեսու թեամբ , անճառու թեամբ , ի-  
 մաստու թեամբ , բարու թեամբ , արար-  
 չու թեամբ , և նախախնամու թեամբ :  
 Անեղ՝ և եղելոցս էակ՝ իմանալեաց և  
 զգալեաց . լոյս՝ և լուսոյ արարիչ . կեանք՝  
 և կենդանարար ամենայնի . իմաստու-  
 թիւն՝ և իմաստարար բոլորից . սուրբ՝  
 և սրբոց սրբարար . բարի՝ և բարեաց  
 պարգևաբաշխ . զօրաւոր՝ և զօրացու-  
 ցիչ զօրացելոց . կատարեալ՝ և կատա-  
 րելոց կատարելագործ . լի՝ և լցուցիչ  
 կարօտելոց . յաւիտենական՝ և յաւիտե-  
 նից գոյացուցիչ . անժամանակ՝ և սահ-  
 մանիչ ժամանակաց : Այսն զի ժամա-  
 նակք և յաւիտեանք , և որ ընդ նոքօք  
 իմանալիք և զգալիք՝ նովաւ և ՚ի նորին  
 ակնարկելոյ եղեն և կառաւարին , և կան  
 մնան յանլոյծ հաստատու թեան :

Այսոքիկ համառօտիւք երրորդու-  
 թեանն խոստովանութի , յորս պարտ է

յարել և զխորհուրդ Բանին անօրէնու-  
 թէ . Քանզի՛ մինն ՚ի յերից այս անբա-  
 ւից անձնաւորութեց՝ ծնեալն ՚ի Հօրէ  
 անժամանակ և անմարմին նախ քան ըզ-  
 յաւիտեանս , էակից և փառակից Հո-  
 գւոյն , կամաւ և հաճութիւն համաբնիցն՝  
 խոնարհի յանձառ փառացն և յանբաւ  
 բարձրութենէն ՚ի խնդիր եղծեալ և  
 աստիճանեալ իւրաստեղծ սլատկերին .  
 ոչ զբնաւոր զօրութիւն ամենակարող  
 իշխանութեանն արկեալ ՚ի կիր , այլ  
 զամենահնար բազմասլատիկ իմաստու-  
 թիւնն : Աւետեօք հրեշտակասլտին  
 բնակի յարգանդի հոգւով մաքրելոյ ա-  
 մեներջանիկ և փառաւորեալ կուսին  
 Մարիամու . և ՚ի նորին բնութենէն ըզ-  
 գենու մարմին հոգւով և մտօք . մարդ  
 կատարեալ , և Աստուած ճշմարիտ . ան-  
 շփոթ միութեամբ խառնեալ զանխառ-  
 նելիսն՝ նոր և սքանչելի խառնմամբ .  
 Քազի ոչ սարգութիւն անյօդ և ան-  
 մարմին էութեան աստուածութեանն՝  
 փոխեցաւ ՚ի նիւթական և յօդաւոր  
 թանձրութիւն մարմնոյ . և ոչ հիւթա-

և որ և թանձր բնութիւն մարմնոյն՝ յե-  
 ղաւ յանօր և աննիւթ աստուածու-  
 թեանն սրարզութիւն. այլ երկաքանչիւ-  
 րոցն յատկութիւն բնութեանց պահ-  
 եալ անշփոթ, և միացեալ անճառապէս՝  
 ՚ի վեր քան զամենայն խառնումն և մի-  
 սութիւն: Մի որդի, և մի տէր Յիսուս  
 Քրիստոս յերկուց կատարելոց: Այլ ՚ի  
 քրայս հրակիր որովայնին ձուլեաց ա-  
 մենարուեստն վերստին զբնութիւնս յա-  
 ռաջին անապականութիւնն: Այլ զի ոչ  
 մասամբ էր ապականեալ մեղօք մարդ-  
 կութիւնս, այլ բոլորովին հոգւով մար-  
 մնով և մտօք, վասն այնորիկ զբոլորս ըզ-  
 քեցաւ Քանն և միաւորեաց յինքն. զի  
 իւրով անմեղութեամբն և անապակա-  
 նութեամբն՝ արասցէ զմեղանչականն  
 անմեղ, և զապականեալն անապական,  
 և զամենայն կիրս մարդկային կրեալ  
 բաց ՚ի մեղաց:

Այսինքն, քաղցեալ՝ որ տայ կերա-  
 կուր ամենայն կենդանեաց: Օտարա-  
 ւեցալ՝ որ զկենաց ջուրն սրարգևէ հա-  
 ւատացելոց իւրոց: Վաստակեցալ՝ որ

հանգիստն է աշխատելոց : 'Նջեաց' որ  
 պահէրն զԽորայէլ անքուն : Արտաս-  
 ուեաց՝ որ եբարձ զամենայն արուօր  
 յամենայն երեսաց : Շրջեցաւ յաշխար-  
 հի զամս երեսուն , լուեալ և ոչ յայտ-  
 նեալ զփառս աստուածութեան իւրոյ՝  
 մինչև 'ի լրումն կատարեալ հասակին :  
 Վայ այնուհետև 'ի մկրտութիւն ա-  
 մենասուրբն 'ի մեղաց և անկարօսն  
 մտքրութեան : Վկրաի 'ի յամլորդւոյն՝  
 'ի մեզ զչնորհս մտքրութեանն ցուցա-  
 նելով : Վկայի 'ի Հօրէ՝ որդի սիրելի և  
 կատարիչ կամաց նորա , զմեզ յորդե-  
 գրութիւն Հօրն վերածեալ : Յայտնի  
 և յազգակից Հոգւոյն՝ ազաւնակերպ իջ-  
 մամբն , որ 'ի մեզ պարգև իջմանն խոր-  
 հրդածի : Վարի 'ի Հոգւոյն յանապատ՝  
 պահեալ քառասնաթիւ աւուրբք . և  
 յաղթեալ փորձողին մերովս՝ զչնորհ  
 յաղթութեանն և որ 'ի նմանէ բրա-  
 բիոնն՝ մեզ պարգևելով , և զմեզ ուսու-  
 ցանելով՝ պահօք յաղթել փորձողին :  
 Եւ զգոռողն զբռամբ ամեալ և զհսկայն  
 կասեալ՝ դառնայ այնուհետև զօրութիւ

մեծաւ յաւարի առնուլ զստացուածսն  
անիրաւութեան, զոր յափշտակեալ էր  
պատրանօք և ոչ զօրութեամբ : Եւ ըս-  
կիզքն առնէ նշանաց և վարդասլետու-  
թեան, որով զամենայն դարձոյց զկա-  
պուտն 'ի գերողէն : Եւ 'ի լրման այսո-  
ցիկ ըստ նախատեսացն կանխաձայնու-  
թեան՝ 'ի կամաւորն գայ 'ի չարչարանս :  
Օ՛, 'ի թէպէտ և մարմնանալովն և անմե-  
ղութքն սրբեաց զընութիւնս, և ար-  
գարացոյց առաջի Հօր և հրեշտակաց և  
կարծեցեալ իշխանի աշխարհիս, (քան-  
զի ոչ ինչ յիւրոցն 'ի նմա եգիտ,) բայց  
պարտիք նախագործելոյ մեղացն՝ տա-  
կաւին կայր 'ի վերայ բնութեանս : Վա-  
սըն որոյ տայ զիւր անմեղ մարմինն նը-  
ւէր և պատարագ հաշտութեան Հօր  
ընդ արարածոց՝ եզն պարարեալ և գա-  
ռըն անմեղ, և բառնայ զմեղս աշխարհի :  
Եւ զի անհնար էր աստուածային ան-  
չարչարելի և անմահ բնութեանն չար-  
չարանս և մահ ընդունիլ, նմին իրի և  
զչարչարելիս զգեցաւ մարմին, զի չար-  
չարեսցի անչարչարն չարչարելեալն, և

մեռցի անմահն մահկանացուաւն , և  
 ազատեսցէ զպատժապարտքս 'ի դատա-  
 պարտութենէ յանցաւորութեանն : Այլ  
 ոչ եթէ այլ ոք էր անձամբ որ չարչար-  
 իւր , և այլ ոք որ ոչ չարչարիւր . և կամ  
 այլ որ մեռանէր , և այլ որ անմահ մը-  
 նայր . այլ մի և նոյն անձն գոլով 'ի չար-  
 չարսնա՝ էր անչարչարելի , և 'ի մահուն՝  
 անմահ :

Այլ ոչ այսչափ միայն , այլ և անպա-  
 րագիր և անվայրափակ գոլով բնութի՛ն  
 էր 'ի խաչին , և ընդ աջմէ Հօր . 'ի գե-  
 րեզմանին , և յաթոռն քառակերպեան .  
 'ի ստորին վայրս դժոխոց , և գեր 'ի վերոյ  
 քան զամենայն բարձրութիւն : Ի դըպ-  
 րաց և 'ի փարիսեցւոց թշնամանեալ , և  
 'ի սերովբէից ընդ Հօր և Հոգւոյ սրբա-  
 բանեալ : Վարմնովն 'ի գերեզմանի , և  
 հոգւովն 'ի խաւարաբնակ արգելանս  
 դժոխոց . ոչ որոշեալ աստուածութիւն  
 'ի մարմնոյն և կամ 'ի հոգւոյն : Յարու-  
 ցեալ աստուածապէս և ինքնիշխանա-  
 բար նովին մարմնովն՝ որով չարչարեցաւ  
 և մեռաւ : Արեւեալ աշակերտացն , և



հաստատեալ զնոսա 'ի հաւատոս յարու-  
թեանն՝ տեսութեամբ և շօշափմամբ  
և խօսելով և 'ի կերակուրս մերձենա-  
լով: Համբառնայ յերկինս 'ի սեպհա-  
կան փառսն հայրենի, և նստի ընդ աջմէ  
Հօր, յորմէ ոչ երբէք պակասեաց: Խոս-  
տացաւ գալ միւսանգամ փառօքն հայ-  
րենի, և դատողական իշխանութեամ-  
բըն առնել յարութիւն արդեամբք  
յանլուծանելի կեանս և 'ի մշտնջենաւոր  
անմահութիւն ամենեցուն, զոր այժմ  
յուսով նորոգեաց: Այս է հաւատ ու-  
ղիղ դաւանութեան կարճառօտ բանիւ  
'ի փրկական տնօրէնութիւն մարդացե-  
լոյն վասն մեր կամաւ Հօր և Հոգւոյն՝  
միածին Բանին:

Այլ պարտ է գիտել, զի թէպէտ ա-  
նուն հաւատոյն մի է, այլ 'ի բազումս  
զանազանին, զի մեծ և առաջին հիմն և  
արմատ ամենայն հաւատոյ՝ վերոյ գրեա-  
լոց է. այլ հետեւաբար այսօրիկ՝ պարտ  
է յամենայնսն հաւատալ յԱստուծոյ  
տուեցելոցն մեզ փրկական խորհրդոցն:  
Այսինքն՝ հաւատալ զեկեղեցի Քրիստոս

սի որ ընդ տիեզերս , որք ճշմարիտ և աներկբայ հաւատով խոստովանին զհաւմագոյ և պաշտելի Երրորդութիւնն , և զներմարդութե՛ն խորհուրդ Միածնին . Աստուած և մարդ կատարեալ , և վասն մեր չարչարեալ և մեռեալ անչարչարելին և անմահն . յարուցեալ և 'ի յերկինս համբարձեալ , և ընդաջմէ Հօր նստեալ . որ և գալոց է միւսանգամ : Օ՛ւամենեսեան որք ընդ այսպիսի խոստովանութե՛ք՝ մի եկեղեցի Քրիստոսի հաւատալ , և միոյ գլխոյն Քրիստոսի մարմին և անդամք՝ ըստ առաքելոյն : Այ բաժանել և սլատառել հայհոյական բանիւ վասն դոյզն ինչ եկեղեցական աւանդութեան՝ զմարմինն Քրիստոսի , զոր խաչիւ և չարչարանօք ստացաւ , և փրկական արեամբն դնեաց և սրբեաց և միացոյց ինքեան :

Հաւատալ և 'ի Մկրտութիւն սուրբ՝ եթէ մտքրիչ է ամենայն յանցանաց , և զսխտաւոր ծնունդս մարմնոյ՝ անսխտաբար ծնանի յորդիս երկնաւոր Հօրն , և յեղբայրակցութիւն Միածնին , և 'ի հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ , և 'ի ժաւ

ուանգութիւն երկնից արքայութեանն :

Հաւատալ և ՚ի մարմին և յարիւն  
Որդւոյն Աստուծոյ՝ որ սլասարագի ՚ի  
վերայ սրբոյ սեղանոյն , թէ ճշմարտա-  
պէս է նա մարմին և արիւն Քրիստոսի :  
Քանզի այն որ բանիւ ասաց երկնի և  
երկրի , որ անլուծանելիք են և հաստա-  
տունք՝ դիւրաւ անցանել , քան թէ յիւ-  
նէն ասացեալ բանն անկատար մնալ ,  
նովին բանիւ ասաց . “ Ա՛յս է մարմին  
իմ և արիւն , ՚ի քաւութիւն և ՚ի թու-  
ղութիւն մեղաց ”<sup>1</sup> . զոր հաւատով և  
սրբութեամբ ճաշակողացն ետու զսա :  
Արք թէպէտ և մեղաւորք են , այլ խոս-  
տովանութեամբն և ասպաշխարութբն  
սրբեալ՝ մերձենան յիս ճաշակմամբ ՚ի  
ճշմարիտ կենդանութիւնս , և յիս բը-  
նակին՝ և ես ՚ի նոսա : Ար թէ և մար-  
մնով մեռանին , այլ զսերմն ճշմարիտ կե-  
նացս յինքեանս ունելով , ՚ի հոգևոր  
գարունն՝ որ է հասարակաց յարութի ,  
բողբոջեալ վերանորոգին ճշմարիտ և  
անմահ կենդանութեամբ , ոչ առնելով

1 Մատթ . ԻԶ . 26-28 :

զդառնաշունչ հոգւոց մահուն ճաշակ  
յաւիտեան :

Հաւատալ և ապաշխարութեան մե-  
ղաց , զոր մարդասէրն Աստուած՝ « Որ  
ոչ կամի զմահ մեղաւորին , այլ զդառ-  
նալ նորա ՚ի չար ճանապարհէ և զկեա-  
լլն »<sup>1</sup> , օձառ լուացման և սրբութեան  
մեղաց ետ եկեղեցւոյ : Օ՛ի թէպէտ և  
առաջին կամք նորա է մնալն մեր սրբ-  
բութեամբ և արդարութեամբ յանմե-  
ղութիւն , այլ որպէս արարիչ բնու-  
թեանս՝ գիտէ զսկարութիւնս մեր՝ զի  
գիւրազթելի եմք և սխալականք , և հա-  
նապաղ ՚ի վայր հակիմք ՚ի բարձրութե-  
նէ առաքինութեան : Ունիմք և մար-  
տակից թշնամի յոքնահնար և բազմա-  
րուեստ , և ՚ի չար առնելն իմաստուն :  
Վասն այնորիկ երկրորդ կամօք որպէս  
առաջնօին՝ ըստ բազում ողորմութեան  
իւրոյ և անսխալալ գթութեան և այն-  
քան սիրոյն՝ Հայրն բարերար զՈրդին  
իւր ետ ՚ի մահ վասն մեր , և Միածինն՝  
զինքն , և Հոգին սուրբ՝ զիառակիցն :

Եւ զապաշխարու թիւնն, զի նեխեալքն և հատեալքն յանդամոց Քրիստոսի մեղօք՝ առողջացին ասպաշխարու թիւ, և վերստին ՚ի դլուխն պատկանեալ յօղեսցին : Այսն որոյ պարտ է հաւատալ թէ սրչափ և մեծամեղք իցեն, զղջմամբ և խոստովանութեամբ, և արտասուօք և ողորմութեամբ, պահօք և աղօթիւք, և որ ՚ի սոյնս յարմարին բարեգործութիւնք, եթէ իցեն մեղքն քան զձանձախարիթ անլուանալի սևութեամբ՝ իբրև զձիւն սպիտակացին, և եթէ իցեն արեամբ չափ որպէս զներկուած որդան ՚ի գոյն կարմրութեան անելանելի՝ իբրև զասր սրբեցին :

Հաւատալ և յարութեան մեռելոց և դատաստանին յաւիտենից, որ է ըսկիղն և արմատ ամենայն բարեգործութեանց, առանց որոյ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ : Օ՛ր եթէ ոք յարութեան յուսով ոչ է հաստատեալ զհարդտայ զանձն ՚ի ճգունս առաքինութե, և եթէ ՚ի դատաստան մտանելոյ ակն ոչ ունիցի, ե՞րբ դադարէ ՚ի մեղաց : Օ՛ր

եթէ յարու թեան հաւատացեալ և դատաստանի ակն կալեալ՝ օր ըստ օրէ 'ի չարիս յաճախեմք, զինչ ոչ գործէսք եթէ ոչ էր երկիւղ դատաստանին. ապաքէն անխտիր բերէսք յամենայն գարշու թիւնս մեղաց. 'ի սպանու թիւն, 'ի զրկանս, յանիրաւու թիւն, յափշտակու թիւն, 'ի պոռնկու թի, յարուագիտու թիւն, 'ի հպարտու թիւն, 'ի նախանձ, յատելու թիւն, և 'ի սոցին նմանս պէս պէս և 'ի բիւրապատիկ չարիս: Յաղագրս որոյ յոյժ կարեոր է հաւատալ յարու թեան և դատաստանին. զի իբրև սանձս 'ի բերան լինելով՝ զյարձակումն չարու թեան յետս նահանջեալ, յառաջագէմ՝ յառաքինու թիւնս լինիցիմք:

Հաւատալ և յայս՝ թէ յարու թիւն և դատաստան ոչ հոգւոց միայն է լինելոց, ըստ որում ոմանց թուեցաւ, այլ և մարմնոց. և մանաւանդ սմա, քան զի հոգին անմահ է. զի և մահն ոչ այլ ինչ է՝ քան անջատումն հոգւոյ 'ի մարմնոց. այսպէս և յարու թիւնն՝ վերստին նոցա կապիլ 'ի միմեանս անլուծանելի

միաւորութեամբ : Այլ որպէս աստ 'ի միասին քաղաքավարեցան լաւ և կամ վատթար գնացիւք, նմանապէս և յայնժամ 'ի միասին վայելեցեն՝ և կամ տանջեցին : Այլ ոչ ըստ դանդաչելոյ ոմանց՝ եթէ այլ մարմին յարկցէ փոխանակ այնրմ որ մեռաւն, այլ նոյն վախճանեալն : Օ՛ր ոչ անիրաւ է Աստուած զայլ փոխանակ այլոյ սլաոժել և կամ պսակել, այլ ըստ առաքելոյն՝ « Ընդունի իւրաքանչիւրոք իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջագոյն՝ եթէ՛ բարի և եթէ՛ չար »<sup>1</sup> :

Հաւատալ դարձեալ՝ թէ և արքայութիւն երկնաւոր ընդունելոց են այնմիկ արժանացեալքն և կեանս յաւիտենականս, զի այս է որ թեթեւացուցանէ զբեռն օրինաց, և քաղցրացուցանէ ըզլուծ պատուիրանին, և առնէ զգժուարինսն դիւրինս, և զառապարն 'ի հարթ ճանապարհս, և դիւրակոխ՝ զանձուկն և զնեղն՝ քան զլայն և ընդարձակ :

Սոյն այս հաւատ զօրացաւ 'ի վերայ

ամ ընդդիմահարաց մարմնոյ . կոխեաց  
 զհուր . բթեաց զսուր . մարտեալ ընդ  
 գազանս . խզեաց զկապանս . խորտակեաց  
 զղէնս . փշտեաց զաղեղունս . արհամար-  
 հեաց զքաղց . նշկահեաց զմերկութի .  
 ոչ երկեալ 'ի բռնաւորաց . խրոխտա-  
 ցալ 'ի վերայ մահու . և միանգամայն  
 զքոլոր 'ի վերայ յարուցեալ ներհակ զօ-  
 րութիւնն կործանեաց : Օ այս վայել-  
 չական կարգ հաւատոյ գտցես և յընդ-  
 հանրական դաւանութիւն սուրբ և տի-  
 եզերական ժողովոյն Նիկիոյ , զոր օր ըստ  
 օրէ վերագրեն դասք հաւատացելոց  
 բազմազան լեզուօք՝ մեծամեծք և փո-  
 քունք : Վանդի յետ խոստովանելոյ ըզ-  
 համաբուն և սպաշտելի Երրորդութիւն ,  
 և զներմարդութեանն տնօրէնութիւն ,  
 յաւելուն՝ թէ հաւատամք և յայս մի-  
 այն ընդհանրական և առաքելական Ե-  
 կեղեցի . 'ի մի մկրտութիւն , յասպաշխա-  
 րութիւն , 'ի թողութիւն մեղաց , 'ի  
 յարութիւն մեռելոց , 'ի դատաստանն  
 յաւիտենական՝ հոգւոց և մարմնոց ,  
 յարքայութիւնն երկնից , և 'ի կեաննն



յաւիտենից :

Այսօրիկ լի և անթերի հաւատոյ խոստովանութիւն շինեալ 'ի վերայ հիւ ման առաքելոց և մարգարէից : Սակայն ոչ կատարեալ փրկութիւն ինքն ըստ ինքեան առանց գործոց առաքինոսթէ .  
 “ Զի հաւատք առանց գործոց՝ մեռեալ են ”<sup>1</sup>, ասէ առաքեալն . որպէս և գործք՝ առանց հաւատոյ : Օ՛ի և դեք հաւատան գրեալ է . և ոչ միայն հաւատան , այլ և սարսին և ս . բայց ոչ ինչ օգտին առանց գործոց : Այլ պարտ է ընդ մտքուր սակեոյ հաւատոյն՝ և զզանազան քարինս առաքինութեան յեռուլ ըստ Սողոմոնի . որք հանդերձեալ են արքայական թագ յօրինել և ընծայել երկնաւոր թագաւորին . որով մանաւանդ ընդ ինքեանց պսակեսցի գլուխն Քրիստոս : Օ՛ի և այսօրիկ հանճարիչն Պօղոս ասէ . “ Ես իբրև իմաստուն ճարտարապետ՝ հիմն եղի ըդ հաւատոյն վարդապետութի , բայց այլ է որ շինեն . և իւրաքանչիւրոք զգոյշ լինիցի թէ զհարգ շինեսցէ . . . զի թէ որ

շինիցէ, ասէ, 'ի վերայ հիման հաւատոյն  
 ոսկի, արծաթ, ականս սլատուականս,  
 փայտ, խոտ, եղէգն<sup>1</sup>, որ են գործք:  
 Ոսկի՝ խոհական իմաստութիւն. ար-  
 ծաթ՝ բանական առաքինութիւն. սլա-  
 տուական քարինք՝ սէսսսէս և զանա-  
 զան բարեգործութիւնք: Իսկ փայտ խոտ  
 և եղէգն՝ զեղեռնագործութեան բերէ  
 զնշանակ: Փայտիւն՝ զթանձրագոյն և  
 զգործով մեղսն յայտ առնէ, որ է յա-  
 տուկ մարմնոյ. և զիւրաշարժ և ան-  
 հաստատ եղեգամբն՝ զյոգնաշարժ բա-  
 նիւ յանցանսն 'ի ձեռն լեզուոյ. և յոգ-  
 նաբոյս խոտովն՝ զբազմաբեղուն և բիւ-  
 րակերպ մտաւորական շարժմանցն սխա-  
 լանս: Այլ 'ի վերայ ասէ “ Թէ իւրաքան-  
 չիւր գործն յայտնեւոց է. զի օր դատաս-  
 տանին ընտրեսցէ, զի հրով յայտնեւոց է  
 դատաւորն. և զիւրաքանչիւր գործն զի-  
 ւորդ և իցէ՝ հուրն փորձեսցէ ”: Օ՛ր  
 թէ ոսկի է կամ արծաթ՝ ոչ միայն ոչ  
 ծախի 'ի հրոյն, այլ և առաւել ևս զը-  
 տեալ սլայծառանայ. և թէ ունէր դուզ

1 Ա. Կորն. Գ. 10. և այլն:

նաքեայ ինչ խառնուած ժանկոյ, սրբեացի և ճառագայթած և փայլէ : Իսկ եթէ փայտ խոտ և եղէգն, վաղվաղակի ծախեալ ասրականի : Այլ զի մի կարծեսցի, թէ ընդ կիզելի գործոցն և գործողն ծախեալ յոչէուծիւն դառնայ, յաւելլու՝ թէ ինքն կեցցէ : Այլ զի մի այնպէս իմասցիս՝ թէ զճճմարիտ կենաց ասէ, ածէ ՚ի վերայ. այլ այնպէս՝ որպէս թէ ՚ի հուր, զայն յայտ արարեալ թէ անմահուծիւն ունի և կիզելի, միշտ այրի, և ոչ մեռանի :

Այլ արդ՝ ՚ի վերայ այսպիսի գեղեցիկ և աստուածահաստատ և առաքելաչէն հիման, որ ոչ ՚ի շնչմանէ հողմոց շարժի և ոչ յիջմանէ անձրեաց անկանի և ոչ ՚ի յարուցմանէ գետոց կործանի, որ առակեալ են ՚ի զանազան փորձուծիւնք, յայնպիսի նիւթոց պարտ է յարմարել շինուածս, որ ՚ի հուր ընտրուծէ մերձենալով պայծառանայ՝ քան թէ ասրականի. որ են հոգեկան և մարմնական առաքինուծիւնք :

Այլ զի նախադաս է և պատուական

ամենայնիւ՝ անձն բանական քան զմար-  
 վին՝ ըստ իմանալին գոլոյ և ազգակից  
 վերնոցն և տիրականին պատկեր, իրա-  
 ւացի է նախ զնորայն զարդարել մասու-  
 նըս՝ իւրական և բնաւոր առաքինու-  
 թեամբք : Այլ վասն զի եռամասնեայ  
 դոլով ոգի՝ ունի բան, ցասումն և ցան-  
 կութիւն, արարչաստեղծ հրամանաւ և  
 դրութեամբ, որով ուղիղ ըստ բնակա-  
 նին վարեալ՝ ոչ ինչ ՚ի վերնոցն վերջա-  
 նայ նմանութենէ : Այլ իւրաքանչիւր  
 սոքա ունին ինքեանց յառուկ առաքի-  
 նութիւնս : Այլ է բանականին առաքի-  
 նութիւն՝ խոհականութիւնն, և ցաս-  
 մնականին՝ արիութիւն, իսկ ցանկակա-  
 նին՝ ողջախոհութիւն : Այլ խոհականին  
 գործ է խորհելն և ընարելն զլաւն ՚ի  
 վատթարէն : Իսկ արիութեանն՝ զառ ՚ի  
 խոհականէն ընարեալն քաջապէս և ա-  
 րիաբար կատարել : Իսկ ողջախոհութեն՝  
 ըստ ընտրութեանն և կատարմանն՝ ՚ի  
 սէրն որ առ Աստուած բորբոքել, որով  
 զնախադասան ինքեան՝ սիրոյն ջերմու-  
 թեամբք առաւել զօրացուցանէ ՚ի բը-

նաւորսն ունակութիւնս : ~~///~~

Իսոյց տեսանել արժան է և զբարեձե  
տոցա կարգաւորութիւն : Օ ի նախ բա-  
նականն յառաջագասի որպէս վեհ քան  
զայլն , և իշխան և հրաժանատար ՚ի վե-  
րայ նոցա , զի նորա է գործ խորհելն , և  
ըստ նմին աւանդել երկաքանչիւրոցն՝  
ցասմնականին և ցանկականին զարժանն :  
Իսկ ցասմնականին՝ հաւանութեամբ և  
արիութեամբ , հրամայելոցն հետևել :  
ուներ և սաստ ՚ի վերայ ցանկականին :  
զի զաւանդեալն նմա ՚ի բանականէն՝  
ուղիղ ցանկութեամբ առ Աստուած և  
աստուածային պատուիրանսն ամբողջ  
և անարատ պահեսցէ : Եւ է բանակա-  
նրն ինքնիշխան , ոչ ուներով և ոչ մի ոք  
համակարգիցն իշխանութիւն ՚ի վերայ  
նորա : Իսկ ցասմնականն իշխի ՚ի բանա-  
կանէն և իշխէ ցանկականին : Իսկ ցան-  
կականն իշխի ՚ի ցասմնականէն , և ինքն  
այլում ոչ իշխէ : Յայտնէ զոյս և կայ-  
ումն նոցա ՚ի մարմինս : Վասն զի բա-  
նականին կայումն է ՚ի գլուխ և ՚ի խե-  
լապատակ և յուղեղ : Եւ որպէս գլուխ՝

զվեհն և զառաջինն ընկալեալ նախադասու թիւն յանդամս մարմնոյ՝ է իբրև ըզլ թագաւոր և զիշխան և հրամանատար ՚ի վերայ ամենայն մարմնոյն . սյսպէս և խոհականն անդ ունելով զնիստ արքունեայն՝ որպէս զթագաւոր իշխէ ՚ի վերայ խոնարհ կացելոցն՝ ցասմնականին և ցանկականին : Իսկ ցասմնականին կայումն է ՚ի սրտի ՚ի ներքոյ քան զգլուխըն . իշխի ՚ի բանականէն ՚ի վերոյ կացեալ քան զինքն , և իշխէ ցանկականին՝ որ ՚ի խոնարհ քան զնա : Իսկ ցանկականն բնակէ յերիկամուսն և ՚ի ներքին համսն . վասն այնորիկ և իշխի ՚ի ցասմնականէն՝ որ ՚ի վերոյ քան զնա , և ինքն ոչ իշխէ ումեք . զի և ոչ է զօրութիւն ինչ ՚ի խոնարհ քան զնա՝ եթէ հնազանդեսցի նմա :

Այս բարւոք կարգաւորութի տեսանի և յոյժ հրաշափառապէս և սլասկառելի յարացուցիւ : Վասն զի Աստուած ինքնիշխան գոլով և թագաւոր ՚ի վերայ ամենակեցոյ՝ իշխէ ՚ի վերայ բնաւից . որով և ՚ի վերայ մարդոյ , և ինքն անիշխան

գողով: Իսկ զմարդն 'ի պատկեր իւր աւրարեալ՝ ասաց իշխեւել 'ի վերայ երևելի արարածոցս ընդ իշխանութեամբ ինքեան . իսկ զգալիքս ամենայն ընդ իշխանութեամբ մարդոյն , ինքեանք ոչ իշխելով ումեք :

Արդ՝ որքան այս կարգաւորութիւն վայելչապէս ըստ բնաւորն սահմանի ուղղի 'ի մեզ , ամենայն ինչ բարեձև և ըստ առաքելոյ կարգի լինիցի . և տէրունականն 'ի մեզ հրաման պատուիրանի անխափան կատարեսցի : Օ՛ր խոհականն միշտ յաստուածայինսն խոկացի ըստ գրոյն . “ Եղիցին բանքս այսօրիկ 'ի սրտի քում՝ և յանձին քում . և խօսեսցիս նոքօք 'ի նստել 'ի տան , 'ի գնալ 'ի ճանապարհ , 'ի ննջել և 'ի յառնել ”<sup>1</sup> : Այլ ըստ միւսոյն , “ Յօրէնս տեառն խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի ”<sup>2</sup> : Այլ զի ամենայն գործոյ՝ եթէ բարի և եթէ չար , նախ խորհելն է և ապա առնելն , և առանց խորհելոյ ոք ինչ ոչ գործէ , ապա ուրեմն որ բարւոք և ուղիղ խոր-

1 Բ. Օրին . 2 . 6 :

2 Սաղմ . Ա . 2 :

հի , ըստ նմին և զգործն կատարէ : Այլ  
յորժամ խոհականն զիշխանութիւն իւր  
և զգործ ամբողջ ունի , իշխէ 'ի վերայ  
ցասմնականին , և հրաման տայ զամենայն  
բարելաւութեանց իրողութիւնս . և  
ցասմնականն արիութեամբ և քաջու-  
թեամբ ամենայնի հպատակեալ՝ բարւոք  
կատարէ : Այնպէս և ցասմնականն բը-  
նաւորականին հետեւելով՝ կայ 'ի հնա-  
զանդութեան բանականին , և իշխէ 'ի  
վերայ ցանկականին : Իսկ ցանկականն  
ուղիղ և ամբողջ պահելով զբնականն՝  
ոչ տպտամբէ 'ի հրամանէ ցասմնակա-  
նին , այլ որպէս զծառայ հլու հնազան-  
դութեամբ կատարէ զամենայն հրա-  
մանսն , և ինքն ոչ ամբառնայ զեղջիւրս  
'ի վերայ ուրուք . զի չէ՛ ոք ընդ նորա  
իշխանութեամբ :

Այլ և այլ միւս ևս մասն բանականին՝  
որ կոչի արդարութիւն . և է սա կառա-  
վար և ուղղիչ և դատաւոր ամենայն  
մասանցն : Քանզի նովաւ որպէս գոր-  
ծեալ՝ բանականն զբոլորսն ուղղէ , զիւ-  
րաքանչիւրոք յիւրումն անսայթաք պա-



հելլով բնաւոր շարժութիւն : Այլ այսմ  
 այսպէս լինելով՝ այնուհետեւ է բանա-  
 կանն խոհական, և ցասմնականն արիա-  
 կան, և ցանկականն ողջախոհական : Այլ  
 յայսմհետէ ոչ ինչ է խափան և արդել  
 կամացն Տեառն և պատուիրանացն ՚ի  
 մարդն կատարելոյ . ըստ որում և եզ-  
 ղզօրութիւնն ՚ի մեզ, և պահանջէ ըզ-  
 կատարումն : Այսն զի բանականն խոր-  
 հի զուղիղն և զօգտակարն, և արդա-  
 րութիւնն բաժանէ ստորակայիցն, և  
 նոքա կատարեն անխափան : Այսն զի է  
 ցասմնականն ՚ի ձեռին խոհականին՝ որ-  
 պէս զընտանի գազան, այսինքն շուն :  
 Այսն զի նոքա կրկին ունին բնաւոր  
 շարժութիւնս . զտեարսն և զընտանի-  
 սրն սիրեն և շողոքորթեն և քծնին .  
 իսկ օտարաց և անընդելից՝ գազանայ-  
 ին և վայրենի և պատառօղ բարս և  
 գործառնութիւնս ցուցանեն : Այս-  
 պէս և ցասմնականն յորժամ ուղիղ ըզ-  
 բնականն ունի, ամենայն բարւոք խոր-  
 հելլոցն ՚ի բանականէն՝ արիաբար սիրե-  
 լի և բարեկամ և կատարօղ երևի . իսկ

հակառակ և անընտանի և օտար խորհրդոցն և գործոց ընդդէմ յառնէ ցասմամբ մեծաւ, և ՚ի բաց վարէ, և կամ չարաչար սխտառէ, ոչ բնաւ թոյլ տրւեալ դժբեւ ինչ յընտանեացն:

Նմանասպէս և ցանկականն ՚ի բնականին գոլով, լինի և անուանի ողջախոհ հութի և սէր արիականին վերակացութեամբ. անշարժ առ ախտաւորսն լինելով ցանկութիւնս, և դիւրաշարժ առ ամենայն բարեաց սէր և բաղձանս: Աստտարու թեամբ արդարութեանն ուղիղ կարգաւորէ զսիրոյն օրէնս, զառաջինն և զմեծն Աստուծոյ տալով ըստ նորին օրինադրութեան. զի ասէ. «Սիրեսցես զաէր Աստուած քո յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութեանէ և ՚ի մտաց»<sup>1</sup>, և ոչ այլ ինչ նորափոխանակէ յէիցս: Բայտ որում և այսոցիկ տիրասպէս ուղղիչն Դաւիթ ասէ. «Զինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ՚ի քէն զինչ ևս խնդրեցից յերկրէ: Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ յառ

Աստուած սէրն . Աստուած սրտի իմոյ ,  
 բաժին յաւիտեան <sup>1</sup> : Որ ըստ փառ  
 փառման ծարաւոյ 'ի ջուր՝ բաղձայք  
 յանդիման լինել երեսացն Աստուծոյ ,  
 և յաւելոյր՝ « Դու ես յոյս և բաժին  
 իմ յերկրին կենդանեաց <sup>2</sup> : Իսկ զարձ  
 մանալին Պօղոս յոյժ հրաշափառագոյն  
 նրա զիւրոյ սիրոյն ցուցանէ զառաւել  
 լուծիւն . քանզի ասէ համարձակու  
 թեամբ խրոխտացեալ 'ի վերայ ամենայն  
 դժնդակաց . « Ո՞վ մեկնեցէ զիս 'ի սի  
 րոյն Քրիստոսի , նեղու թիւն , թէ անձ  
 կու թիւն , թէ հալածանք <sup>3</sup> , և այլն . զի  
 « Վասն քս ասէ՝ մեռանիմ զօրհանա  
 պազ » : Եւ զի ոչ միայն դառ ինքն և դրժ  
 ւարակիրքն են հակառակ Աստուծոյ սի  
 րոյն , այլ ևս առաւել հեշտականքն և  
 ախորժելիք , յաղագս որոյ և զայնս 'ի  
 վերայ բերէ և ասէ . « Հաստատեալ եմ՝  
 թէ ոչ մահ , ոչ կեանք , ոչ իշխանու թիւք ,  
 ոչ խորու թիւնք , ոչ բարձրու թիւնք , ոչ  
 հրեշտակք , ոչ պետք , ոչ այս աշխարհս

1 Սաղմ. ՀԲ. 20 :

3 Հռոմ. Ը. 33 :

2 Սաղմ. ՃԽԱ. 5 :

յոր կամս, ոչ հանդերձեալ արքայու թինն,  
 և ոչ թէ այլ ինչ արարած լինի քան զեր-  
 կինս և զերկիր . և որ 'ի սոսա բարու-  
 թիւնք զոր մեք ոչ գիտեմք, կարեն մեկ-  
 նել զիս 'ի սիրոյն Քրիստոսի ու : Այլ զոր  
 ասէն՝ այսպիսի ինչ է . եթէ ոք ամենայն  
 չարչարանօք և մահուամբք չարչարէ զիս  
 և սպանանէ վասն 'ի Քրիստոսէ բաժա-  
 նելոյ, յօժարու թեամբ զամենայն չար-  
 չարանսն և զմահունսն յանձն առնում,  
 քան թէ 'ի Քրիստոսի սիրոյն բաժա-  
 նիմ : Այլ դարձեալ ասէ . թէ ոք տայր  
 ինձ զերկինս, և որ յերկնի են բարու-  
 թիւնք, զերկիր ամենայն, և որ յերկրի  
 են ցանկալիք . և ոչ միայն զայս՝ այլ թէ  
 և այլ ինչ լինէր քան զայսոսիկ մեծ և  
 բաղձալիք՝ զոր մեք ոչ լուաք և ոչ տե-  
 սաք, և այսօրիւք կամէր զիս 'ի Քրիս-  
 տոսի սիրոյն մեկնել, զամենայնն արհա-  
 մարհէի և անարգէի, և իբրև զաղբ  
 անպիտան համարէի, և զՔրիստոսի սէ-  
 րըն ընտրէի ինձ սեպհականել :

Այլ յետ այսորիկ՝ ասպա երկրորդ  
 մասն սիրոյն առ մարդիկ ցուցանել, ըստ

որում՝ յօրէնսն և յաւետարանն է կարգեալ : Քանզի յետ ասելոյն՝ « Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէքումմէ » , ապա ասէ՝ թէ՛ « և զընկերքո իբրև զանձնքո » , և յաւելլու թէ՛՝ « Յայս երկու պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան »<sup>1</sup> : Այլ սակայն թէպէտ և երկուս ասէ , վասն զի Աստուած և յընկերն բաժանէ , այլ մի է . վասն զի սէր է : Այլ ճշմարիտ ասաց աղբիւրն ամենայն ճշմարտութեան , թէ ամենայն պատուիրանք ՚ի սէրն բովանդակի : Օ՛ր չէ՛ ինչ պատուիրան որ արտաքոյ սիրոյն գտանի , յորժամ զսէրն ոք ուղիղ և անարատ և առանց կեղծաւորութեան ունի առ Աստուած և առ մարդիկ : Օ՛ր յորժամ զԱստուած ՚ի բոլոր սրտէ սիրէ ոք , զամենայն արհամարհէ որ ինչ խափան լինի Աստուծոյ սիրոյն , այսինքն զփառս և զմեծութիւնըս , զպատիւս և զիշխանութիւնս և զստացուածս , զհայր և զմայր և զեղբարս և զքորս , զկին և զորդիս , նա

1 Մատթ . ԻԲ . 40 :

և զիւր անձն : Ըստ որում և ինքն Տէրն  
 ասաց . « Եթէ որ գայ առ իս , և ոչ ա-  
 տեայ զհայր և զմայր և որ ՚ի կարգին ,  
 ոչ կարէ իմ աշակերտ լինիլ »<sup>1</sup> : Այլ յայտ  
 անտի է , զի որք ճշմարտապէս սիրեցին  
 զԱստուած , ոչ թէ միայն զինչս և ըզ-  
 փառս արհամարհեցին զերկրաւորս , և  
 զընտանիս և զորդիս անտես արարին ,  
 այլ և զանձինս ևս պէսպէս և ազգի-  
 ազգի չարչարանօք ՚ի մահ մատնեցին :  
 Իսկ որ առ ընկերն անկեղծ և անարատ  
 ունի զսէրն՝ ոչ ինչ չար խորհի նմա և  
 ոչ առնէ . այսինքն ոչ ատէ զնա , և ոչ  
 նախանձի ընդ նմա , ոչ զըկէ զնա , ոչ ա-  
 նիրաւէ , ոչ գողանայ զինչս նորա : Այլ  
 խորհի նմա սպանութիւն , ոչ առ ոսն  
 հարկանէ , ոչ նենգէ նմա , ոչ ստէ , ոչ  
 մատնէ՝ թէպէտ և բազում վնասուց  
 պարտաւոր գիտէ զնա : Այլ հպարտանայ  
 ՚ի վերայ նորա , ոչ ամբարտաւանէ , ոչ  
 գրգռի ընդ նմա , ոչ արհամարհէ , ոչ  
 թշնամանէ , ոչ զըպարտէ , ոչ քամօսէ ,  
 ոչ մախայ , ոչ ռիսս պահէ , ոչ բամբասէ ,

ոչ տրանջէ : Ոչ ինքն առնէ նմա չար , և  
 ոչ կամի թէ այլ որ արասցէ . այլ զա-  
 մենայն որ ինչ բարի է՝ կամի նմա . և  
 որչափ կարող է՝ առնէ : Կամի լինել զնա  
 ողջ մարմնով , և առաքինի հոգւով , և  
 ամենայնիւ յաջողեալ ըստ կենցաղոյս  
 բերմանց : Մարմնաւոր գոյիւք փար-  
 թամ , պատուով առաւելեալ , իշխաւ՝  
 նութեամբ բարձրացեալ , յամենեցունց  
 փառաւորեալ , տամբ աջողեալ : Աին  
 ըստ մտի . որդիք բարետեսակք և խրա-  
 տեալք , մտօք խոհական , ՚ի բանս կար-  
 գաւոր , մինչ զի սիրելի լինել ամենե-  
 ցունց : Եւ եթէ աղքատ է՝ ցանկաց  
 ընուլ զկարօտութիւնն . և եթէ տկար  
 է՝ ՚ի բժշկութիւն փութայ . և եթէ  
 ներհակ ինչ ուստեք ՚ի վերայ յառնէ ,  
 որչափ ՚ի կարի է՝ ընդդիմակաց լինի .  
 տրտմութեանն տրտմակից լինի , և խըն-  
 դութեանն խնդակից . և ոչ երբէք է  
 չար զոր կամի նմա , և ոչ բարի զոր ոչ  
 կամի : Եւ ոչ այսչափ միայն , այլ և ըզ-  
 բաղմութիւն մեղացն ծածկէ սէր . որ  
 սէս և ատելութի՛ն զբարեացն : Օ ՚ի զոր

օրինակ՝ զատելին ՚ի բարեգործութեան  
 տեսեալ՝ թուի չար առնել, այսպէս և  
 զսիրելին ՚ի չարագործութեան տեսեալ՝  
 թուի բարի առնել: Օ՛յս ամենայն և  
 առաւել քան զսոյն և առսքեալ թը-  
 ւէ զսիրոյ մասունս: Տեսանէ՞ս ահա զի  
 զամենայն որ օրէնքն և մարգարէքն և  
 աւետարանական վարդապետութիւնն  
 ուսուցանեն, սէրն յինքեան ունի զբռ-  
 վանդակն: Յիրաւի ուրեմն և Քրիստոս  
 ասէր աշակերտացն. «Այսու ծանխցեն  
 զձեզ ամենեքեան եթէ իմ աշակերտք  
 էք, յորժամ զմիմեանս սիրիցէք »<sup>1</sup>: Ոչ  
 ասաց՝ թէ այն է իմ աշակերտութեան  
 նշան, յորժամ զհիւանդս բժշկէք, կամ  
 զկոյրս լուսաւորէք, կամ զանդամալոյծս  
 հաստատէք, կամ զդէս հանէք, կամ ըզ-  
 մեռեալս յարուցանէք, կամ զլերինս փո-  
 փոխէք, այլ յորժամ սիրէք զմիմեանս: Քանզի  
 գիտէր թէ յորժամ ճշմարիտ  
 սիրով սիրեն զԱստուած և զընկերս, ընդ  
 նմին և ամենայն պատուիրանք կատարին:

Արդ՝ որպէս վերագոյն ցուցաք, յորժ



ժամ մասունք հոգւոյն ուղիղ զիւրեանց  
 կարգաւորութիւնն պահեն, զի իշխանն  
 յիշխանութեան կայցէ, և իշխեցեալքն  
 ՚ի հնազանդութեան, ամենայն այսորիկ  
 բարեգործութիւնք անխալ կատարին:  
 Իսկ եթէ եղծեալ ասականի վայելչա-  
 կան կարգն, և ծառայքն ՚ի վերայ տե-  
 րանցն յառնեն, և զիշխանութիւնն յա-  
 փշտակեն, և զտեառսն ծառայեցուցա-  
 նեն, այսինքն՝ ցանկականն ցասմնակա-  
 նին, և ցասմնականն խոհականին տի-  
 րելով, ամենայն շփոթեալ վեր ՚ի վայր  
 կործանի, և իւրաքանչիւրքն ՚ի հակա-  
 ռակ ներգործութիւն շարժին: Այլ ըստ  
 գործոյն՝ և անուանցն փոփոխումն լինի.  
 և այնուհետեւ ոչ խոհականութիւն և  
 արիութիւն և ողջախոհութիւն և ար-  
 դարութիւն, այլ անմտութիւն և սրտ-  
 մտութիւն և բղջախոհութիւն և ա-  
 նիրաւութիւն կոչին: Քանզի ոչ խոհա-  
 կանն զբարւոքն խորհի, և ոչ ցասմնա-  
 կանն ընդդէմ չարին մտքառի, և ոչ ցան-  
 կականն ողջախոհաբար Աստուծոյ և աս-  
 տուածայնոցն ցանկայ, և ոչ արդարու-

Թիւնն այսոցիկ ուղղիչ լինի՝ վերակա-  
 ցու և կառավար, այլ ՚ի բնականէն  
 յանբնականն շարժեալ՝ չարաչար տա-  
 պալմամբ կործանի, ըստ առակողին բա-  
 նի, թէ «Երիւք շարժի երկիր. յորժամ  
 ծառայ թագաւորէ, և աղախին եթէ  
 հանէ զտիկին, և անմիտն եթէ լցցի հա-  
 ցիւ »<sup>1</sup>: Քանզի ծառայ սրտմտու թիւնն՝  
 թագաւորեաց ՚ի վերայ իշխան խոհա-  
 կանին, և աղախին բղջախոհու թիւնն՝  
 եհան զտիկին արիու թին, և անզգամ  
 անմտու թիւնն՝ լցաւ հացիւ նանրա-  
 խոհու թեան, այսինքն ստու թեան հա-  
 ցիւ, որով և շարժեցաւ ամենայն լաւն  
 ՚ի վատթարն կոյս. զի զամենայն նան-  
 րու թիւն խորհի մոլար իշխանն այնու-  
 հետև, որ ծառայ եղև ախաից:

\* Եւ այս է անիրաւ դատաւորն ՚ի քա-  
 ղաքի բնութեանս, զոր Տէրն յաւետա-  
 րանին ասէ, թէ «Աստուծոյ ոչ եր-  
 կրնչէր, և ՚ի մարդկանէ ոչ ամաչէր »<sup>2</sup>,  
 զի խորհի և ոչ տերամբ, դատէ և ոչ  
 իրաւամբք: Եւ որ բնաւորեալն էր

1 Առակ. Լ. 21:

2 Ղուկ. ԺԸ. 2:

յօրէնս տեսուն խորհել, ընդ ամենայն  
 խոկումն չարութեան յածեալ լինի. և  
 զի թեթև և դիւրաշարժ գոլով բնու-  
 թիւն, վաղվաղակի ընդ բիւրապատիկ  
 քարչ և աղտեղի ցանկութիւնս անցա-  
 նէ խորհրդով. ինքն զաղքանայ խոկմամբ  
 խորհրդով, և զզգայութիւնն ընդ ին-  
 քեան շարժէ յախասկրութիւն : Այլ  
 զի անտեսանելի գոլով բնութիւն՝ ոչ ՚ի  
 մարդկանէ ամաչէ. այլ թէ և մերձակայ  
 է բազմաց՝ շարժի ըստ չար յօժարու-  
 թեանն յամենայն սղծութիւնս, և կա-  
 տարէ զգործ անօրէնութեն, թէսկտ  
 և ոչ մարմնով : Այսինքն՝ ընդ որ ունէր  
 զատելութիւնն, յօժարախորժ կամօքն  
 ընկէց ՚ի պատուոյն, կողոպտեաց յընչի-  
 ցրն, զրկեաց ՚ի փառացն, կործանեաց  
 յիշխանութենէն, յարգելս եղ անե-  
 լանելի, սնդեաց ՚ի կոճեղս, տարաչ-  
 խարհիկ արար զկարևորսն և հատան-  
 դաման. և ոչ այսու շատացաւ, այլ և  
 չարաչար և դառն մահու մասնեաց :  
 Այլ այս է ասելն որդւոյն Արոտման,  
 եթէ « Ամենայն որ ասէ զեղբայր իւր՝

մարդասպան է՝, զի թէպէտ և մարմնով  
 ոչ, այլ կամօքն և յօժարու թեամբն ըս-  
 պան: Այլ այս է կէս սպանութեան.  
 զի մարդ հոգի է և մարմին. և հոգին  
 է մեծ քան զմարմինն. և նա հոգւովն  
 սպան. զի որպէս մարմինն արդեամբք  
 սպանանէ, այսպէս և հոգին կամօքն և  
 յօժարութեամբն: Այլ եթէ ախտաւոր  
 ցանկութեամբ հարեալ է ՚ի սէր ու-  
 բուք, անարդելաբար երթեալ շնայցե-  
 ընդ նմա. թէպէտ և ՚ի մէջ բաղմաց է  
 տուփեալն և անձեռնարկելի նմա ըստ  
 մարմնոյ: Այսն զի ոչ ինչ արդելու զնա.  
 ոչ հեռաւորութի տեղւոյ, ոչ թշուա-  
 ռութիւն ճանապարհի, ոչ լեառն բը-  
 քացեալ, ոչ դաշտ սոթագին, ոչ ծով  
 լայնածաւալ, ոչ քաղաք պարսպեալ, ոչ  
 դղեակ ամրագոյն, ոչ աշտարակ անպար-  
 տելի, ոչ աղխեալ դրունք, ոչ երկիւղ  
 պահապանաց. այլ զամենեքումբք քայ-  
 լեալ՝ աներկիւղ համարձակութեամբ  
 առ տուփելին հասանէ, և զգարչ ցան-  
 կութիւնն կատարէ: Այլ այս է ասելն

Տեառն , « Թէ ամենայն որ հայի 'ի կին  
 ցանկու թեամբ , անդէն և անդ շնացաւ  
 ընդ նա 'ի սրտին »<sup>1</sup> . այսինքն յոգւոջն :  
 'Նոյնպէս և եթէ կին՝ առն ցանկայ , նո-  
 վին օրինակաւ շնացաւ . զի ամենայն ա-  
 սացեալս որպէս 'ի վերայ առն է , նոյն և  
 կնոջ : Եւ որպէս վասն սպանութեան ա-  
 սացաք , նմանապէս և վասն այսորիկ , զի  
 կէս շնութեան է . զի ոչ մարմնով կա-  
 տարեաց զշնութիւնն , այլ հոգւովն :

Վուճակ սոցին իմա և առ ամենայն  
 մեղս գիւրաշարժ գոլ զմտաւորական  
 շարժմունսն և գիւրակատար : Եւ զի  
 վասն անտես գոլոյն 'ի մարդկանէ ոչ ա-  
 մաչէ , այսպէս և վասն հեշտախտութե-  
 և յիմարելոյն ցանկութեամբն՝ յԱստու-  
 ծոյ ոչ երկնչի : Եւ ամենայն մեղաց պատ-  
 ճառ՝ խոհականին մոլորութիւնն և ա-  
 նընտրող յիմարութիւնն լինի . և յոր-  
 ժամ նա որ իշխանն էր 'ի վերայ այլոցն  
 և ուղղիչ , այսպէս ծառայական ախտիւք  
 կաշկանդի , այլքն սորին մոլար ընտրո-  
 զութեանն հետեին , զի ամենայն ինչ

եթէ բարի և եթէ չար, նախ խորհի  
և ասլա գործի :

Իսկ յասմնականն զօրութիւն յեղա-  
փոխեալ և այլ փոխանակ այլոյ եղեալ .  
վասն զի որ երբեմն քաջանայր ընդդէմ  
օտարացն, այսինքն բանսարկուին և նո-  
րին չար արկածիցն, այժմ զինի ընդդէմ  
ընտանեացն, այս է ամենայն բարեգոր-  
ծութեան, և մանաւանդ ՚ի համազգի-  
սըն և յեղբարսն գարծուցեալ զսրբա-  
մտութիւն՝ գաղանաբար յարձակի : Քան-  
զի սրամտութիւն նոցա ըստ նմանու-  
թեան օձին, այսինքն սատանայի, իժի  
և քարբի գիւաց նորին . զի խցեալ են  
զականջս իւրեանց ընդդէմ ճարտար  
թովչաց՝ մարգարէից և առաքելոց և  
վարդապետաց եկեղեցւոյ . և ոչ կամին  
առնուլ յիմաստուն բժշկաց զգեղ ա-  
պաշխարութեան և առողջանալ յախ-  
տէն : Այլ ոչ կարէ այնպիսին և ոչ դոյզն  
ինչ թշնամանաց համբերել . այլ եթէ  
լինի յումեքէ ինչ կարծիս հակառակու-  
թեան առնուլ, կամ արհամարհութե և  
գորովանաց, վաղվաղակի բարկութի

մեծաւ ընդդէմ յառնէ . աղաղակէ թըշ-  
 նամանէ նախատէ հայհոյէ անարգէ ,  
 սրպէս զխեղայեղ ոչ գիտէ զինչ խօսի :  
 Օ ամենայն որ ինչ մուտք միտքն ճնանի  
 եպերանոց բան՝ իբրև հորիւնս գազա-  
 նաց արիւնարբուս ՚ի գառադդէ սրտին  
 լեզուաւն յառաջ բերէ . մինչ զի ՚ի յան-  
 դուգն յարձակմանէն և զթոյնան ընդ  
 բանին արտաքս ժայթքէ : Այլ և ըզ-  
 ձեռսն և զոտսն անհանձարաբար ՚ի  
 հարուածս շարժէ . և յոլով անգամ  
 եթէ գէպ լինի , և ՚ի սպանութիւն :  
 Օ գիւհարացն ամենայնիւ բերէ ըզ-  
 նմանութիւն , մանաւանդ եթէ չար  
 քան զգիւհարսն . որքան նոքա ակա-  
 մայ , և սոքա կամօք ջերանին յախտոսն :  
 Այլ ընդ որս թշնամութեամբն բերին՝  
 ատեն մինչև իսպառ , յիսս պահեն ան-  
 լուծանելիս , մախան , բամբասեն , դա-  
 բանակալ լինին նենգութիւն , որոգայթս  
 կազմեն բանիւք և արդեամբք՝ ընկե-  
 նուլ ՚ի փառաց ՚ի պատուոյ յիշխանու-  
 թենէ ՚ի փարթամութենէ : Այլ ոչ ինչ  
 է նոյա ըզձալի , քան եթէ զնախան-

ձեւին ՚ի թշուառութեան տեսանել, և  
 ոչ ինչ դժնդակ, քան եթէ ըստ որում  
 և իցէ իւրիք բարեկրեալ տեսանել : Աջ  
 այնքան ինքեանց թշուառութեամբքն  
 տխրին, որքան նոցա բարեկրութեամբ-  
 քրն . զամենեւեան որքան հնար է՝ շար-  
 ժեն ընդ նոսա ՚ի թշնամութիւն, և կա-  
 մին զի յամենեցունց ատեցեալք լիցին :  
 Այսքան և ևս քան զսոյնս է ատելու-  
 թիւն և մախանք անկարգաբար սրբու-  
 մտելոցն :

Իսկ ցանկականն որ այլայլեցաւ ՚ի  
 գեղեցիկ ողջախոհութենէն, և ՚ի սիրոյն  
 որ Աստուած և առ ընկերս, իբրև ըզ-  
 դանդաչեալ շրջի յամենայն նիւթակա-  
 նիս բաղձանս : Սի ՚ի բնաւոր և յող-  
 ջախոհ սիրոյն անկեալ՝ բերեալ լինի  
 քարշ ցանկութեամբք ընդ վավաշոտ  
 տուփանս . և ոչ սոսկ ցանկութեամբ ,  
 այլ և լրմամբ կորստական գործոյն . ոչ  
 ՚ի բնականն յատուկ, այլ և յանբնա-  
 կանն : Իստ այնմ զոր առաքեալ ասէ .  
 « Թողեալ զբնական պէտս իգութեանն՝  
 բորբոքեցան ցանկութեամբ իւրեանց



ի միմեանս . արուք ընդ արուս զխայտառակու թի գործէին , և զդարձ փոխարինին՝ որ պարտ էր մոլորութեան նոցա , յանձինս իւրեանց ընդունէին <sup>1</sup> : Այսինքն զկիզումս հրոյն և ծծմբոյն երկնատեղաց՝ նորօրէն անձրևեալ հրածին ամպովք՝ ըստ նորագիւտ հրոյ ցանկութեանն զօրէն բերեալ յաւիտենական և մշտաւլառ բոցոյն : Աւ ոչ զարուացն միայն ամբաստանէ , այլ և էգբն ասէ փոխանակեցին զպէտս բնականս ՚ի պետրս անբնականս :

Թողում ասել և որ քան զայսոսիկ է դժնդակ և անբնական և առաւել արտաքոյ բնութեանն , որ յանասնայինսն և ՚ի գազանայինսն խոտորին զաղբագործութիւնս . զոր և ինքեանք իսկ անասունքն և գազանք թէպէտ և անկապ և արձակ գոլով բնութիւնք , զի և ոչ ընդ օրինաց են սահմանադրութեամբ , և ոչ սաստ սլաստահասի և կամ տանջանաց է ՚ի վերայ նոցա , այլ բնական օրինացն՝ որ ընդ ստեղծմանն եղաւ ՚ի բը-

նութիւնսն հետեւելով, ոչ երբէք արտաքոյ ընտանի ազգակցացն ելանեն իւրաքանչիւր ազգք կենդանեաց ՚ի խառնակսն իւրեանց : Օ՛ ի ոչ ձի յարջառ, և կամ արջառ յոչխար, և կամ այլք յայլ օտարացեալ ազգս . այլ իւրաքանչիւր ազգ կենդանեացն՝ առ իւրեանց ցեղսն դառնան, և զայն ոչ անչափութեամբ, այլ ըստ սահմանեալ ժամանակի՝ միայն ճննդագործութեան ըստ սաւառորեն արարչադիր հրամանին՝ որ ասաց . “ Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր ”<sup>1</sup> : Եւ այն զի ոչ բան ունին և իմաստութի՛ եթէ խորհրդեամբ և ընտրութեամբ ՚ի վատթարացն խտտորին, այլ միայն բնական օրինացն հետեւելով : Իսկ մարդիկ բանիւ և իմաստութեամբ պատուեալ, որ մի ինչ յայսցանէ բաւական էր զնոսա ՚ի չափ սահմանի արդարագործութեան պահել, զամենեքումբք զանց արարեալ՝ քան ըզգազանս և զանասունս անմտագոյնք և զազրագործք գտանին : Եւ զայլ գարշ

և աղտեղագոյնսն լռեմ որ յայնպիսի անհանճարիցն գործի, զոր և գիտեմ և ընդ լսելիս է անցեալ, այլ ոչ կամիմ զազրացուցանել զքանս, զի մի գուցէ ողջախոհ որ լսելով տաղտկասցի. մանաւանդ թէ գիտողացն թողում. քանզի այժմ յայտասիկ քաջահմուտք են ամենեքեան :

Արդ՝ այսպիսի մոլորեալքս 'ի ճշմարիտ ցանկութենէն և 'ի սիրոյ որ առ Աստուած և յաստուածայինսն ամենայն, ընդ բոլոր ապականացու և ցնդելի նիւթականացս իբր տուամբ կապին 'ի սէր և 'ի բաղձանս, փոխանակեալք զճշմարիտ կենացն սէր ընդ սնոտեացս, և զանասականին ընդ ասականացուիս, և զանայլայլելոյն ընդ փոփոխելեացս, և զերկնաւորին ընդ երկրաւորացս : Քանզի քաղցրանայ նմին անցաւորիս մեծութիւն, փառք, սրատիւ, իշխանութիւն, փարթամութիւն, որովայնամոլութիւն, արբեցու թիւն, զրկանք, ագահութիւն, անիրաւութիւն, յափշտակութիւն, և այլ ամենայն սնոտեացս քաջազանք :

Իսկ արգարութիւնն յեղու յանի-

րաւու թիւն . և որ երբեմն 'ի լաւագոյնան առաջնորդէր և կարգաւորէր զընդինքեամբ մասունսն , այժմ ներհակին լինի տնօրէն և առաջնորդ : Այսքան և այսպիսի անկարգութիւն բարեաց և կարգաւորութիւն չարեաց յանձնական մասանցն՝ 'ի բնականացն խոտորմանց և յանբնականացն հետեւմանց լինին : Ասլն որոյ բազում զգուշութեամբ և արթնութեամբ պարտ է հսկել ամենայն ումէք , զի զբանական իւր հոգի , որ է պատկեր Աստուծոյ , իւրական առաքինութեամբքն զարգարեացէ , որով յառաջինն փայլեացէ լուսատիպ կերպարան , և զնախտուպին հրաշագարդապէս յինքեան գաղափարեացէ նմանութի . որով լիցի տաճար և բնակարան անլայրափակ էութեանն՝ ըստ ասելոյն . « Ես և հայր եկեցուք , և օթեանս առ նմա արասցուք »<sup>1</sup> :

Արդ՝ մինչ այսպէս գեղեցկայարմար պատկանաւորութեամբ ուղղեցաք զանձնական առաքինութիւնսն , պարտ

է նմին հեռեցուցանել և զմարմնական բարեգործութիւնսն, որպէս զի ըստ առաքելոյն՝ լիցի մարդն Աստուծոյ կատարեալ ամենայնիւ և ոչ իւրիք նուազեալ՝ : Օ՛ր որպէս անձն մասամբքն զարդարի, այսպէս և մարմինն ըզգայութեամբքն պայծառանայ : Այլ են զգայութիւնք հինգ, որ են այսոքիկ . տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շօշափելիք : Այլ պարտ է նախ յայանել թէ զի՛նչ զգայութիւնն իցէ, և ապա զնոսա ընտանի ներգործութեամբքն զարդարել :

Օգայութի՛ ասի այն, որ ըստ իւր ներգործութեանն զինչ և իցէ՝ արտօքուստ ընդունելով զկիրսն՝ զգայ և ճանաչէ : Արպէս ակն զծագումն լուսոյ ընդունելով՝ զգայ և ճանաչէ և լուսաւորի, և նովաւ զամ զոր տեսանէ՝ զգայ և ճանաչէ թէ զի՛նչ է : Այլ ունին զհնչումն ձայնից ընդունելով՝ զգայ թէ յի՛ւմի՛ է բացագանչումն : Այլ հոտոտելիքն զազգմունս զանազան հոտոց առնելով՝ զգայ և իմանայ

և բացատրո՞հէ զնոսա 'ի միմեանց : Այլ  
 ճաշակելիք զպէսպէս կերակրոցն և ըմ-  
 պելեացն համադամս քաղցունց և դա-  
 ուինցն , սլարարտացն և կծուագունիցն  
 յինքն ընկալեալ՝ զգայ իւրաքանչիւր հա-  
 մադամացն աղդողութեանց : Այլ շօշա-  
 փելիք զազգի ազգի նիւթոցն զանազա-  
 նութիւն շօշափելումն զգայ և ընտրէ 'ի  
 միմեանց զսոչորագոյնսն և զողորկսն ,  
 զընդդիմատիպսն և զփաղփուկսն : Արդ՝  
 վասն այսորիկ զգայութիւնք ասին :

Բայց են սոքա որպէս զդրունս 'ի տան  
 մարմնոյս՝ մտից արտաքուստ և ելից 'ի  
 ներքուստ , ամի որ է լաւ և կամ վատ-  
 թար . ըստ մարգարէին որ ասէ , ընդ սլա-  
 տուհանս եմուտ մահ : Այլ զոր օրինակ՝  
 ընդ դրունս ածեմք 'ի տուն զամ գոյս  
 սլատուականս և սլիտանիս , և ընդ նոյն  
 դարձեալ եթէ ինչ անսլիտան է 'ի տան՝  
 արտաքս հանեմք , այսպէս և զամենայն  
 հոգևորական փարթամութիւնս՝ որովք  
 անկարօտ ճոխանայ անձն բանական ըստ  
 համազգեաց հոգեղինացն , ընկալցուք 'ի  
 ներքս 'ի մեզ ընդ զգայարանացս դրունս

ընդ իւրաքանչիւր ներդործութեան :  
 Եւ զապաւառ երկրաւոր ցանկութեց  
 և ստորային սիրոյ , որ է որսմնացան  
 թշնամւոյն սերմանք , իբրև զվնասակա  
 րըս և մահացուս ընդ նոսին դարձեալ  
 արտաքս հանցութ :

Եւ զոր օրինակ՝ ոչ միշտ փակեալ  
 պահեմք զդրուես տանց . զի թէ յար  
 փակեալ կացցէ , զօդատակարսն ոչ հաւա  
 քեմք փարթամութիւնս , նա և մեղ  
 անպիտան առ բնակութիւնն . և ոչ  
 հանապազ բացեալ , զի և այնպէս թըշ  
 նամեաց և դժբողաց գողոց և աւա  
 զակաց մուտ լինելով՝ ՚ի կորուստ ան  
 ձանց և ՚ի յափշտակութիւն ընչից .  
 այլ ՚ի դէպ ժամանակի ըստ պատշա  
 ճին բանամք և փակեմք , իմաստնոյն  
 հաւանեալ խրատու՝ որ ամենայնի ժամ  
 և ժամանակ սահմանէ որ ընդ երկնաւ :  
 Այսպէս և զզգայութեանց մեր դը  
 րուես ոչ հանապազ պարտ է փակել .  
 զի և յի՞նչ պէտս եղաւ ՚ի բնութիւնս՝  
 եթէ միշտ փակեալ կայցէ . զի ական  
 դործ է տեսանելն , և ունկան լսելն :

նմանապէս և այլոցն ըստ ինքեանց սահմանի : Եւ ահա անպիտանք են եթէ զբնաւորսն ոչ ներգործեն . այլ ՚ի պատշաճ ժամանակի պարտ է բանալ ՚ի լաւագունիցն հաւարումն , և յայլում ժամու փակել ՚ի մուտս վնասակարացն :

Եւ զոր ասեմս այսպիսի ինչ է : Պարտ է իննուլ զակն ՚ի յարատ հայեցուածոց , և ոչ զննել բղջախոհ ցանկութիւն և վաւաչոտ տափանօք զգեղ իգի և կամ արուի . վասն զի որպէս ՚ի կորովածիգ աղեղնաւորէ առնու անտի զնետս հարուածոց կարեվէր խոցման յագիակողմն կոյս . որով զանմահն մահ մեռանի : Վասն զի ախտաւոր հայեցմամբն կերպարանէ զգործ պղծութեանն , և անդէն շնայ ընդ նմա ըստ Տեառն հրամանի որ ասէ . « Ար հայի ՚ի կին ցանկութեամբ , իսկոյն շնացաւ ընդ նա ՚ի սրտին »<sup>1</sup> : Եւ ամենայն շուն և պոռնիկ ըստ առաքելոյ՝ ոչ ունի մասն և ժառանգութիւն յարքայութեանն Աստուծոյ<sup>2</sup> : Թողում ասել և զարտաքոյ բնութեան պղծու-

1 Մատթ . Ե . 28 :

2 Ա . Կորն . 2 . 10 :



Թիւնսն անասնային և գազանային՝ որ սպէս անարժանս յիշատակի :

Փակել արժան է դարձեալ զակն ընդդէմ չարակնուէ որ առ ընկերս . յորժամ տեսանէ զօք բարեկրեալ ըստ կենցաղոյս ինչ յաջողութեանց , տան և որդւոց և ստացուածոց , իշխանութիւն , պատուոց , փառաց , բարեհամբաւ անուան , սիրոց և ընդունելութեան առ ամենեւեան : Օր իբրև տեսանէ չարակնն , որսպէս սոյրասուր սրով հարկանի , նախանձի մտխայ . և լաւ համարի ինքեան մեծամեծ և դժնդակ աոյժս կրել , քան եթէ զնա այնպէս փառաւորութեամբ տեսանել : Յօլովք և մահու դաւ գործեն ընդ որս չարակնութեամբն հային : Լը ապացոյց այսորիկ՝ բազումս ունիմք ՚ի գրոց , և մանաւանդ թէ սկիզբն մեղաց և մահու՝ յայսմանէ եմուտ յաշխարհ : Վասն զի չարակն բանսարկունն ոչ կարացեալ տանել զտեսութի գերունակ փառաց նախատեղծին , մատեաւ առ նա հրատուրանօք խաբէութեան , և զմահու ձօնեաց նմա ճաշակ : Լը կայե-

նի մարդասպանութիւնն ոչ այլ ինչ էր :  
 այլ զի ոչ կարաց հայել ընդ հաճելի  
 Աստուծոյ պատարագսն Հաբէլի : Իսկ  
 եղբարքն Յովսէփու և զանրջոցն յա-  
 չաղեալ բաղձալի տեսութիւն , կամե-  
 ցան սպանանել զնա , և ապա այլա-  
 սեռիցն վաճառեալ , որպէս զՏէրն 'ի  
 չարչարանս և 'ի մահ : Այս և բաղ-  
 մահնար մեքենայք Սաւուղայ առ 'ի  
 սպանանել զԴաւիթ՝ ուստի՞ այլ , քան  
 թէ սիրեցեալ և պատուեալ զնա տե-  
 սանէր յաչս ժողովրդեանն , և լսէր 'ի  
 պարաւորացն՝ եթէ եհար Դաւիթ ըղ-  
 բիւրս<sup>1</sup> : Իսկ փարիսեցւոցն և դպրացն  
 խաչ կանգնեալ , և զառաջնորդն փրկու-  
 թեան՝ որ զնոսայն էր եկեալ բարձրա-  
 ցուցանել և փառաւորել՝ զփայտէ կա-  
 խեալ , զինչ այլ՝ քան թէ բիւրասլա-  
 տիկ սքանչելեաց և լուսաւոր վարդա-  
 պետութեան կենարարին և փառաց և  
 պատուոյ նորա որ 'ի ժողովրդոց՝ ոչ կա-  
 րացեալ տանել : Օ ի թէպէտ և նա յայն  
 տակս էր եկեալ զի մեռցի , և մահուամբ

իւրով զմահու բարձրէ զգառասար-  
տու թիւն ազգի մարդկան . այլ նորա 'ի  
նախանձուէն չարակնութեամբ հեղ-  
ձեալ խաչեցին զնա : Արդ՝ այսպիսեաց  
ամենայնի չարակնութեանց ընդդէմ  
սրարտ է փակել զակն , զի մի զիւրա-  
ցուցիչ և զմահացուցիչ հոգւոց աւե-  
սութիւն 'ի ներքս ընկալցի :

Իսկ ընդդէմ լաւացն և օգտակարա-  
ցըն բանալ յօժարութեամբ . և զբիծ  
ամենայն ախտից , որ խափան գեղեց-  
կագործ տեսութեանն լինի՝ մաքրել , զի  
յստակ հայեցուածովք կարացէ հայել  
և տեսանել զսքանչելի գործս Աստուծոյ .  
որովք և յարարչին գիտութիւն վայել-  
չապէս հասանէ ըստ առաքելոյն . “ Ա-  
ներևոյթքն Աստուծոյ իսկզբանէ աշ-  
խարհիս՝ ասէ , արարածովքս իմացեալ  
տեսանին ”<sup>1</sup> . այսինքն մչանջենաւորու-  
թիւն և զօրութի և աստուածութիւն  
նորա : Այլ արդ Դաւիթ ասէ . “ Երկինք  
սրտմեն զփառս Աստուծոյ ”<sup>2</sup> : Ար և մե-  
ծափափագ տենչանօք մաղթէր զլուսա-

1 Հռովմ. Ա. 20 :

2 Սաղմ. ԺԸ. 1 :

ւորու թիւն աչացն՝ յայսպիսի հայել ըս-  
 քան չելիս . « Զարթո՛ւ, ասէ, զաչս իմ և  
 նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց »<sup>1</sup> .  
 և թէ՛ « Լոյս տուր տէր աչաց իմոց, զի  
 մի ննջեցից զմահունքուն »<sup>2</sup> . և « Դար-  
 ձո զաչս իմ ՚ի նանրութենէ »<sup>3</sup> : Յետ  
 որոյ համարձակութեամբ և պանծանօք  
 ասէր . « Աչք իմ յամենայն ժամ առ  
 տէր են »<sup>4</sup> . և « Յառաջագոյն տեսանէի  
 զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր  
 ընդ աջմէ իմմէ՛ զի մի սասանեցայց »<sup>5</sup> .  
 այսինքն՝ զի մտաց տչօք հանապազ զԱս-  
 տուած ինձ մերձակայ և ընդ աջմէ իմ-  
 մէ կացեալ տեսանէի, և ՚ի նորա տե-  
 սութենէն երկուցեալ և պատկառեալ  
 սասանէի ՚ի մեղաց : Լոյս ոչ միայն Դաւ-  
 թի, այլ և ամենայն ումէք այսպէս  
 պատահէ . զի յորժամ զԱստուած ին-  
 քեան մերձակայ և տեսող հաւատայ,  
 զիա՞րդ կարէ մեղանչել : Ըստ որում որ-  
 դին Որոտման ասէ . « Ամենայն որ յԱս-

1 Սաղմ. ճԺԸ. 18 :

4 Սաղմ. ԻԴ. 12 :

2 Անդ. ԺԲ. 4 :

5 Անդ. ԺԵ. 8 :

3 Անդ. ճԺԸ. 37 :

տոււած է հաստատուեալ՝ ոչ մեղանչէ <sup>1</sup> :  
 Օ, ի եթէ յորժամ մարդ որ ուրուք  
 մերձակայ լինի և տեսող, ոչ առնէ չար  
 ինչ, այսինքն ոչ շնայ, ոչ գողանայ,  
 ոչ սպանանէ, և ոչ այլ ինչ ՚ի նմանեացն  
 գործէ, որչափ ևս առաւել յորժամ զա-  
 րարիչն ամենայնի և զդատաւորն և ըզ-  
 վրէժխնդիրն և զհատուցանողն ըստ գոր-  
 ծոց՝ ինքեան մերձակայ և տեսող հաւա-  
 տայ, յամենայն մեղաց և ՚ի չար գործոց  
 լռէ : Եւ զայս գիտելով Դաւիթ ասէ .  
 “ Աչք իմ յամենայն ժամ առ տէր են ” :  
 Եւ ինքն Աստուած ասէր մարդարէիւն .  
 “ Աստուած մերձաւոր եմ ես և ոչ հե-  
 ուաւոր ” <sup>2</sup> : Որոյ և նախանձաւորն Հե-  
 ղիաս միշտ առաջի զինքն համարէր :

Եւ ոչ զմարմնոյ միայն տեսանէ ըզ-  
 գործան, այլ և զմտացն շարժմունսն ըստ  
 Դաւթայ . “ Որ քննես զսիրտս և զերի-  
 կամունս Աստուած ” <sup>3</sup> . և յայլուր՝ “ Թէ  
 ոչ որպէս տեսանէ մարդ՝ տեսանէ Աս-  
 տուած . զի մարդ հայի յերեսս, և Աս-

1 Ա. Յովն. Գ. 6 :

3 Սաղմ. Է. 11 :

2 Երեմ. ԻԳ. 23 :

տուած 'ի սիրտս' 1 : Եւ ոչ զսրտին խորհուրդն միայն տեսանէ , այլ և զայն որ տակաւին ոչ խորհեալ է և գործեալ ըստ այնմ , « Զանգործս իմ տեսին աչքքո » 2 : Եւ ոչ թէ միայն տեսանէ զանգործան , այլ և գրեալ պահէ . ըստ որում ասէ՝ « և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան » : Արդ՝ զայնպիսի տեսող պարտ է ամենայն ումեք ինքեան մերձաւոր համարել , և յայնժամ ոչ մեղանչէ :

Գարձեալ պարտ է բանալ զակն 'ի տեսութիւն արարածոցս , և տեսանել զսքանչելի գործս Աստուծոյ . և 'ի տեսանելն մարմնոյ աչօք՝ ընդ նմին բանալ և զմտացն աչս , և իմաստութեամբ տեսանել զզարմանադործութիւն արարածոցս . ըստ որում և Դաւիթ տեսեալ ասէր . « Տեսի զերկինս զգործս մատանց քոց՝ զլուսին և զսատեղս զորս գուհաստատեցեր » 3 : Այսինքն՝ հայել յերկնի բարձրութիւն և յընդարձակութիւն , 'ի լուսաւորացդ սոյժառութիւն և 'ի

1 Ա. Թագ . Ժ. 2 . 7 :      3 Սաղմ . Ը . 4 :

2 Սաղմ . ՃԼԸ . 14 :

գեղեցկակարգաւորութիւնն : Այլ որ յետ  
 այսորիկ յամսսս, յանձրեւս, 'ի հողմս, 'ի  
 ձիւնս, 'ի սառն, 'ի կարկուտ, յերկիր,  
 'ի բոյսս, 'ի տունկս . 'ի մարդոյս գեղեց-  
 կակաղմութիւն, յանասունս, 'ի գազանս,  
 'ի թռչունս, 'ի ծով, յաղբիւրս, 'ի գե-  
 աղս . և զի՞ ևս մի ըստ միօջէ ասացից,  
 յայլ ամենայն եղելութիւնս : Այլ յայս-  
 մանէ նախ ճանաչել զմեծութիւն և զիւ-  
 մաստութիւն և զանչափ զօրութիւնն  
 Աստուծոյ և զբարերարութիւնն, թէ  
 զայս ամենայն վասն մեր է արարեալ :  
 Այլ որ քան զայս է հրաշափառագոյն,  
 եթէ զիմօրդ նախախնամող զօրութիւն  
 կառավարէ զամենայն և ունի յանլոյծ  
 հաստատութեան . զի այս անբաւ ծան-  
 րութեան մարմնոյ աշխարհիս՝ երկրի և  
 ծովու՝ ոչ գոյ հիմն և ոչ հաստատու-  
 թիւն և ոչ սիւնս . այլ ամենայն 'ի վե-  
 րայ ոչընչի է հաստատեալ, մանաւանդ  
 թէ 'ի վերայ հրամանին Աստուծոյ ըստ  
 սուտբելոյ՝ թէ « Արէ զամենայն բանիւ  
 զօրութեան իւրոյ »<sup>1</sup> :

1 Երբոյ . Ա . 3 :

Արդ՝ յայս ամենայն և ՚ի սոյնպիսիս  
 պարտ է զակն բանալ և տեսանել և  
 ճանաչել զանհաս մեծութիւնն Աստու-  
 ծոյ և զիմաստութիւն և զզօրութիւն :  
 Քանզի երկինք և երկիր և որ ՚ի սոսա  
 լինելութիւնք՝ որպէս թէ գրով և բա-  
 նիւ պատմեն զանբաւութիւնն Աստու-  
 ծոյ . ըստ այնմ, « Երկինք պատմեն ըզ-  
 փառս Աստուծոյ »<sup>1</sup> : Եւ ՚ի տեսանելն  
 զայսպիսի անպատմելի արարչութիւն ,  
 շարժել այնուհետև զմիտս և զլէզու ՚ի  
 փառաբանութիւն Աստուծոյ , և յամե-  
 նայն եղելոցս փառաւորել զարարիչն .  
 Քանզի յայսոսիկ հայեցեալ անանխան-  
 քըն՝ զամենայն արարածս յօրհնութիւն  
 Աստուծոյ կօչէին ասելով . « Ամենայն  
 գործք Տեառն զտէր օրհնեցէք »<sup>2</sup> : Եւ  
 ՚ի կարգ անկեալ՝ զերկին և որ երկնի ,  
 զօդ և որ ՚ի սմա , ասէին օրհնել զԱս-  
 տուած : Եւ ոչ եթէ զի նոքա օրհնեն  
 զԱստուած , վրասն զի անբանք են և ան-  
 իմաստք . այլ մարդիկ մտաւորք և բա-  
 նաւորք՝ տեսանելով զոր ՚ի նոսա սքան-

1 Սաղմ. ԺԸ. 1 :

2 Դանի . Գ . 57 :



չելագործութիւնք՝ փառաւորեն զարա-  
րիչն : Եւ ոչ միայն յայսպիսի հրաշա-  
ղան և զարմանագործ տեսութենէ ի-  
մաստաբար հայեցողքն զԱստուած փա-  
ռաւորեն , այլ և յայնց տեսութեանց  
որ յօլովից թուի թէ պատճառք չարի-  
են , զի որ ընդ մարմնոց ական և զհոգւոյ  
աչս բաց ունին , յայնցանէ յորմէ կու-  
րացեալն հոգւով վնասին , նորա մե-  
ծամեծս շահին . ըստ նմանութեան բը-  
ժըշկաց , որ բազում անգամ ՚ի վնասա-  
կարացն զօգտակար դեղնն առնուն . որ-  
պէս յօձից՝ առնուն զլուծիչս թունից  
նոցա , և յայլ մահացու դեղոց սատակ-  
չական զօրութիւնս :

Եւ եթէ ախորմէք , յեղեղոց և ՚ի  
գրեղոց իրաց ստուգեցից զասացեալս :  
Քանզի պոռնիկ սմն հռչակելի գեղեց-  
կութեամբ Անտիոք քաղաքի , անուն  
Պելագիա , որ ոչ միայն ՚ի քաղաքին՝ այլ  
և յամենայն աշխարհն մերձակոց տա-  
րածեալ էր համբու գեղոյ նորա , որ և  
յամենայն կողմանց վաւաշտա երիտա-  
սարդք գային առնա . նա յաւուր միում

ելեալ 'ի բաղանեաց, և զգեցեալ բեհե-  
 զըս և ծիրանիս, և զարդարեալ ոսկւով  
 և մարգարտով և քարամբ պատուակա-  
 նօք զդլուխն և զլանջսն և զսարանոց,  
 և գրեթէ զամենայն մասունս մարմնոյն,  
 և սևութեամբ զաչսն, և 'ի սպիտակէ  
 և 'ի կարմրոց զայտսն, և օծեալ անու-  
 շահոտ իւղով՝ գայր անցանէր լկտի կեր-  
 պարանօք ընդ մէջ քաղաքին՝ 'ի բաղմաց  
 յայնոսիկ հեշտացելոց սպասաւորեալ:  
 Իսկ եպիսկոպոս ոմն Նոնոս անուն՝ նըս-  
 տէր եկեղեցականօքն հանդերձ 'ի սրահ  
 եկեղեցւոյն՝ ընդ որ անցանէր պոռնի-  
 կըն. որ և բազումք յողջախոհ ժառան-  
 գաւորացն դարձուցանէին զդէմս 'ի  
 տեսութենէն: Իսկ սուրբ եպիսկոպոսն  
 յար պշուցեալ հայէր ընդ նա, մինչ զի  
 և բազումք 'ի տեսողացն 'ի միտս իւր-  
 եանց բամբասէին զնա՝ եթէ ընդ եր-  
 կար նայի ընդ գեղ պոռնկին: Իսկ նա  
 յանկարծակի ընդ արտասուս ցնդեալ  
 լայր դառնապէս: Իսկ մերձակայքն որք  
 բամբասէին զհայեցուածս նորա, մա-  
 սուցեալ հարցանէին՝ թէ զի՞նչ էր պըշ-

նու՛ն ընդ գեղ պոռնկին և զի՛նչ ողբու-  
 մըն : Իսկ նա տակաւին արտասուելով  
 պատասխանէր . վայ՛ ինձ որդեակք , վասն  
 զի տեսի զկինն զայն՝ զի ամենայն հնա-  
 րիւք պէսպէս և զանազան զարդուք զար-  
 դարեալ էր զինքն՝ սրչափ և էր կարո-  
 ղութիւն . և այն վասն մոլեկան և մեղ-  
 սասէր երիտասարդացն , զի նոցա հա-  
 ճոյ երևեսցի , և զախտաւոր ցանկու-  
 թի՛ն նոցա շարժեսցէ ՚ի խառնումն ին-  
 քեան : Իսկ ես երկնաւոր փեսային եմ  
 հարսնացեալ , որ վասն անճառ սիրոյն  
 իւրոյ որ յիս՝ յանբաւ բարձրութենէ  
 գերակայ փառացն խոնարհեցաւ յիմ  
 գարշութիւնս , և խաչիւ և արեամբ  
 գնեաց ՚ի ծառայութենէ մեղաց , և սրբ-  
 բարար աւազանաւն լուաց , և հոգւոյն  
 շնորհօք զարդարեաց . ետ և զգեղեց-  
 կացուցիչ պատուիրանս իւր և ուսոյց ,  
 եթէ զի՛արդ նոքօք որ ըստ օրէ զար-  
 դարեցից զամենայն մասունս հոգւոյ  
 և մարմնոյ , որով անճառելի սիրով  
 նա յիս բնակէ և ես ՚ի նմա : Իսկ ես  
 ըստ առակողին՝ ՚ի փոխածն անդրէն

դարձայ , և ընդ տիղմն թաւալեցայ՝  
 յորմէ լուացայ , և զշնորհօք զարդա-  
 րանսն որ 'ի նմանէ՝ մեղօք աղտեղա-  
 ցուցի , և ոչ փութացայ վերստին ա-  
 պաշխարութեան ջրով լուանալ զան-  
 ձըն , և սպտուիրանին սպհսպանութի  
 զարդարել՝ զի հաճոյ գտայց երկնաւոր  
 փեսային , որ սիրեացն զիս , և զանձն իւր  
 'ի մահ մատնեաց վասն իմ : Այլ լուեալ  
 զայս զարմացան ընդ արթնութիւն մը-  
 տաց նորա և ընդ անախտութիւն հո-  
 գւոյն , և փառաւորեցին զԱստուած :  
 Տեսանէս ահա՝ զի փոյթքն և արթուիքն  
 և 'ի վնասակարացն շահին , բայց ծոյլքն  
 և մեղկքն բազում անգամ և յօգտա-  
 կարացն վնասին :

Արդ՝ առաջին դուռն զդայարանացս  
 բարւոք փակեցաւ և բացաւ : Այլ  
 պարտ է և զերկրորդն ըստ նմին օրինա-  
 կի փակել ընդդէմ ամենայն մահացու  
 և կորստական բանից : Օ՛ի որպէս ակն  
 տեսութեամբն խոտորի առ չարութիւն ,  
 և ընդ ինքեան շարժէ զբոլոր մարմինն  
 'ի գործակցութիւն , այսպէս և ունկն

լսելու թեամբն ասականի, և զտպակա-  
 նագործ լուրն ՚ի ներքս ընդունելով ՚ի  
 շտեմարանս սրտին ամբարէ իբրև ըզ-  
 կայծակն ընդ յարդիւ թաքուցեալ, որ  
 ՚ի դիպող ժամանակի ՚ի շնչմանէ իրիք  
 արծարծեալ զկիզողական բոյն բորբո-  
 քէ : Այլ է սա սկզբնաւորագոյն մեղք .  
 զի և նախ քան զամենայն բանսարկուն  
 օձիւն մատուցեալ յունկն նախամօրն  
 եհեղ զթոյնս դառնու թեանն, որով ին-  
 քըն մեռաւ, և եղև պատճառ մահու  
 ճննդոց իւրոց : Արդ՝ առաջին մուտ ախ-  
 տաւոր լսելու թեան է այս : Յորժամ  
 տուփողք իրերաց, այր և կամ կին, լսեն  
 ՚ի միմեանց բան կակղու թեան և թու-  
 լու թեան, որ իբրև զսուր երկսայրի յո-  
 գւոջն հարկանի, և գերի առեալ տա-  
 նի տոռամբք ցանկու թեանն ՚ի կատա-  
 բումն մեղաց :

Ի սոյն յարի և չար միջնորդացն բան,  
 որ ՚ի մէջ երկուցն տանի և բերէ զկո-  
 րստական պատգամսն, որպէս և օձն ՚ի  
 մէջ Եւայի և բանսարկուին : Այլ այս ա-  
 ռաւել աններելի է քան զշնու թիւն, զի

Թէպէտ դժնդակ և չար յանցանք է շնութիւնն, զի յարքայու թենէն արտաքրս հանէ և գեհենին ժառանգ առնէ, այլ սակայն բռնաւորագոյն պատճառ և հարկեցուցիչ 'ի մեղս՝ ունի զցանկու թիւն մարմնոյն՝ և զթելադրու թիւն սատանայի և զբորբորումն ակտագարչու թեան: Իսկ անօրէն միջնօրդն որով պատճառաւ յանհնարին յայս մեղս կործանի՝ ոչ և մի ինչ հարկ և կամ բռնութիւն 'ի բնութենէն ունելով. զի կրկին ըստ չափու երկուցն յանցանաց՝ որոց պատճառ եղև մեղաց՝ և ևս առաւելագոյն տացէ զլրէժ յաւուրն դատաստանի 'ի կիզողական հուր գեհենին:

Իարձեալ 'ի ձեռն ունկան է և լսողութիւն ամ չար խորհրդակցութե և գործոյ անօրէնութեան, աւազակութեան, գողակցութեան, յորմէ առակացն բան հրաժարեցուցանէ ասելով. « Որդեակ՝ մի խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք և ասիցեն, եկ ընդ մեզ կցորդ լեր արեան. ծածկեսցուք յերկրի զայր արդար 'ի տարապարտուց. կլցուք զնա կենդանւոյն

իբրև դժոխք <sup>1</sup> : Օղբս խրատէ ասելով .  
 « Մի երթար ճանապարհ ընդ նոսա . խա-  
 տորեա՛ զոսն քո 'ի շաւղաց նոցա <sup>2</sup> : Ա,ա  
 և զմարդկանէ չարախօսութիւն ուն-  
 կամբ 'ի սիրտ մտանէ յանփակ լեզուա-  
 ցըն և յանդուռն բերանոցն . որք գոր-  
 ծիք սատանայի եղեալ՝ զնորա հեղեալ  
 թոյնան ինքեանց լեզուաւն 'ի լսելիս յայ-  
 լոց մատուցանեն , և շարժեն զնոսա 'ի  
 բարկութիւն , յատելութիւն , 'ի հայ-  
 հոյութիւն , յոխակալութիւն , 'ի թըշ-  
 նամանս , 'ի բամբասանս , 'ի մատնու-  
 թիւն , 'ի դաւաճանութիւն , 'ի զրպար-  
 տութիւն , յորոգայթադրութիւն , 'ի  
 սոլանութիւն և 'ի նոյնպիսի չարիս :

Ա՛ դարձեալ և այս ունկան ախտ .  
 յորժամ ոչ 'ի միջնորդաց լսելութենէ ,  
 այլ դէմ յանդիման կրէ յումեքէ թըշ-  
 նամանս և նախատինս և դսրովանս և  
 արհամարհութիւնս և հայհոյութիւնս  
 և զրկանս և յափշտակութիւնս և տու-  
 դանս և սոնահարութիւնս : Ա՛րդ այս-  
 պիսեաց ամենայնի զոր վերագոյն ասա-

1 Աւակ . Ա . 10 :

2 Անդ . Ա . 15 :

ցաք, և որ նման սոցին՝ պարտ է փակել զունկնն և ոչ տալ թոյլ բնաւ մուտ լսելու թեան, զի մի՛ ՚ի նախասացեալ չարիսդ անկանիցի, քանզի իբրև ըզքաղցկեղ ճարակեն այսպիսի ախտք զոգին: Այլ նախանձել զբարւոք նախանձըն ըստ Դաւթի որ ասէ. «Ի հակառակել մեղաւորին առաջի իմ, խուլ եղէ և խոնարհեցայ, և եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ»<sup>1</sup>, զի որ կամի զոգին կեցուցանել, կամ սկզբանն ոչ լսէ, և կամ թէ լսէ, ոչ զայրանայ և ոչ առնու ՚ի միտ և ոչ պատասխանէ:

Այլ զսոյն դարձեալ բանալ ընդարձակ ամենայն բարւոք լսելու թեան մըտից, այսինքն հաւատոյ բանի և պառուիրանաց Աստուծոյ, խօսել օրինօք և մարդարէիւք, աւետարանական և առաքելական վարդապետութեամբ: Այլ սել օրինացն որ ասէ. «Տէր Աստուած քո՛ տէր մի է: Այլ սիրեցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և զընկեր քո իբրև զանձն քո»<sup>2</sup>: Այլ «մի՛

1 Սաղմ. 1Ը. 2:

2 Բ. Օրին. 2. 4, 5:



սպանաներ, մի շնար, և մի գողանար. սրատուեան զհայր քո և զմայր <sup>1</sup>: Եւ ՚ի մարգարէիցն որ ասեն. « Խոտորեա ՚ի չարէ և արան զբարի, և երթ ըզհետ խաղաղութեան <sup>2</sup>: Եւ դարձեալ « Լուացարուք ՚ի մեղաց՝ սրբեցարուք յանօրէնութեանց. ընկեցէք զչարութի յանձանց. ուսարուք գործել զբարիս. խնդրեցէք զիրաւունս. փրկեցէք զզրկեալն. դատ արարէք սրբոյն, և տուք իրաւունս այրւոյն <sup>3</sup>: Եւ թէ՛ « Բրդեա քաղցելոց զհայր քո, և զաղքատս անյարկս տար ՚ի տուն քո. եթէ տեսանես մերկ՝ զգեցո. և զզաւակ ընտանեաց մի անտես առներ <sup>4</sup>: Եւ յաւետարանէն սրբոյ. « Եթէ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա. և սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս ՚ի վերայ ըկողացն զձեզ. և որ հարկանէ զձնօտ քո՝ մատո նմա և զմիւսն. և որ հանէ ՚ի քէն զբաձկոն քո, մի արգելուր

1 Բ. Օրին. Ե. 16:

3 Եսայի. Ա. 16:

2 Սաղմ. ԼԳ. 14:

4 Եսայի. ԾԸ. 7:

և զշապիկս . և գանձեցէք ձեզ գանձս  
յերկինս . և տուք փոխ՝ ուստի ակն ոչ  
ունիք առնուլ<sup>1</sup> : Եւ յառաքելոցն , ե-  
թէ “ Ամենայն դառնութիւն և աղա-  
ղակ և սրտմտութիւն և հոյհոյութիւն  
բարձցի 'ի ձէնջ ամենայն չարութեամբ  
բըն հանդերձ : Եւ արեգակն 'ի վերայ  
բարկութեան ձերոյ մի մտցէ ”<sup>2</sup> : Եւ  
“ Սպանէք զանդամս ձեր զերկրաւորս .  
'ի բայ ընկեցէք զպոռնկութիւն , զպըղ-  
ծութիւն , և զագահութիւն՝ որ է կը-  
ռապաշտութիւն , և զգեցարուք զգութ ,  
զքաղցրութիւն , զերկայնմտութիւն :  
Եւ 'ի բայ թօթափեցէք զամենայն չա-  
րութիւն և զկեղծաւորութիւն և բզ-  
նախանձ և զամենայն չարախօսութիւն ”<sup>3</sup> :  
Եւ “ Սիրեցէք զմիմեանս , զի սէր յԱս-  
տուծոյ է . և ամենայն որ սիրէ , յԱս-  
տուծոյ է ծնեալ և ճանաչէ զԱստուած ”<sup>4</sup> :  
Եւ “ Մի բանիւք և լեզուօք սիրիցէք ,  
այլ արդեամբք և ճշմարտութեամբ ”<sup>5</sup> :

1 Ղուկ . 2 . 27 . 39 . և այլն 4 Ա . Յովն . 7 . 7 :

2 Եփես . 7 . 1 . 26 . և այլն 3 Անդ . 9 . 18 :

3 Կող . 9 . 5 . և այլն :

Եւ զայն ամենայն փրկականս և ոգեկեցոյցս՝ որոց ոչ գոյ թիւ : Բանալ դարձեալ պարտ է զականջս և ամենայն մաղթողի՝ որ զհարկաւորսն պահանջէ պէտս ըստ լրման մարմնոյ սխտոյից . և կամ հոգեւորական խրատուց , որ է մեծ և օգտակար քան զմարմնոյ ընդ կարօտութի : Եւ այսպէս ընդ կամացն Աստուծոյ լինի ընդարձակութիւն քո լսելեաց :

Եւ զհոտոտելիսդ խից ընդդէմ ամենայն հեշտալի և ախտաւոր հոտոց , որ սովորաբար առ վաւաշոտսն է տեսանել . զի զամենայն հնարս անուշահոտութեան հնարեն 'ի մարմին և 'ի հանդերձս՝ առ 'ի նիւթ և զօրութիւն տալոյ ախտաւոր ցանկութեանն . որով ըզհաստատութի ոգւոցն մեղկացուցեալ թուլացուցանեն 'ի վայր հոսելով 'ի բարձրութենէ պնդակազմութեան արիական հանդիսիցն : Եւ դարձեալ բաց Քրիստոսի անուշահոտութեանն՝ զոր առաքելովքն ծաւալեաց ընդ աիեղերս , ըստ որում և ասէ Պօղոս . « Զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեօք

ընդ ամ տեղիս, եթէ հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած 'ի մէջ փրկելոցն և 'ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ 'ի մահ հուանէ 'ի մահ, և ոմանց 'ի կենդանութենէ 'ի կեանս <sup>1</sup>: Օ, ի որք զգարչութիւն ախտաւոր հոտոյ սիրեցին քան զկենդանացուցիչն զայն, նոցա 'ի մահ եղև՝ դատապարտելով զնոսա վասն անփափագ լինելոյն: Իսկ որք զզազրալիս զայս արհամարհեցին սիրով ճշմարտին, նոցա տիրապէս կենաց եղև սրասձառ: Օ, որ և ըղձաւորն սյսորիկ հարսնն պանծալի Ներգոց երդն հրատարակէ. «Իւղթափեալ է անուն քո, վասն այնորիկ և որիորդք սիրեցին զքեզ <sup>2</sup>. և անախտ սիրով յինքեանս ձգեցին զկեանսդ, և միաւորութեամբ կենացդ՝ կենդանացան 'ի մշտնջենաւոր անմահութիւնն:

Պարտ է որք սրբութեամբ ամենասրբոյն ախորժեն լինել հաղորդ, և ըզձաշակելիսն փակել ընդդէմ ամենայն մնասակար հեշտութեանց: Օ, ի թէպէտ և 'ի հարկաւորսն ընդարձակեալ է յԱս

1 Բ. Կորն. Բ. 16:

2 Երդ. Ա. 2:

տուճոյ վայելել, ըստ որում և սասայ .  
 « Ահաւասիկ ետու ձեզ զամենայն, կե-  
 ղիջիք իբրև զբանջար խոտոյ »<sup>1</sup> . քանզի  
 որպէս արարիչ մարմնոյ գիտէր զուխ-  
 բուծիւն նորա և զպէսս, բայց յաւե-  
 լորդացն արգել յորկորտուծէ անչա-  
 վուծէ : Օ որ անիմաստքն անկարգաբար  
 խճողեն զորովայնս, որ ոչ գիտեն զաս-  
 ման բնուծէս, եթէ կերակուր վտան  
 այնորիկ տուաւ յարարչէն կենդանեաց,  
 որ զկենդանուծիւն և զզօրուծիւն և  
 զառողջուծիւն պահէ ՚ի մարմինս . վա-  
 սըն զի հոսանուտ գտլով բնուծիւն՝ զա-  
 ռեալն ոչ պահէ, և վտան այնորիկ թա-  
 փեալն լրման կարօտանայ : Իսկ նոքա  
 զայս անգիտանալով՝ կարծեն առաւել  
 շնորհ տալ որովայնի անյազուծեամբն .  
 որ ոչ թէ միայն զոգին, այլ և զմարմի-  
 նըն զոր բարեգործել կարծեն՝ վնա-  
 սեն և ընդ բազում ցաւովք արկա-  
 նեն, յոլով անգամ և ընդ մահուամբ,  
 անմտագոյն քան զանասունսն յայնու-  
 սիկ ցուցեալ . զի նոքա զբաւախան սի-

տոյս կերակրոցն և ըմպելոցն առնելով ,  
 թէ և բազումս այլ առաջի կայցէ , և  
 ոչ հայիլ կամին ընդ նոսա : Իսկ սոքա  
 զպատճառս կենացն անչափութեամբ  
 բն մահու առնեն . զմարմինն աղցա-  
 ւոր ցաւօք վտանգեն , և զհոգին ան-  
 մահ՝ յաւիտենական մահուն վիճակեն .  
 մոռացեալք զառաքելոյ ողբումնն զին-  
 քեանս որ ասէ . « Լալով ասեմ զթշա-  
 մեաց խաչին Քրիստոսի , որոց կատա-  
 րածն կորուստ է , որոց աստուած՝ որու-  
 վայն իւրեանց է , և փառք ամօթն »<sup>1</sup> .  
 այսինքն որովայնամուրութիւնն : Եւ ոչ  
 վայրասար այնպիսեացն աստուած ան-  
 ուանէ զորովայնն , այլ ճշմարտութք .  
 զի Աստուծոյ պատիւն ՚ի պաշտամանէ  
 նորա ճանաչի և ՚ի պատուիրանին կա-  
 տարմանէ , իսկ որովայնին՝ ՚ի նորին ըս-  
 պասաւորութենէ : Արդ՝ որք որովայնին  
 առաւել հպատակեն՝ քան Աստուծոյ  
 պաշտամանն և պատուիրանին , քաջա-  
 յայտ է զի ան զորովայնն ունին , որում  
 զսպասահարկութիւն մատուցանեն : Յի-

բաւի և թշնամիս խաչին կոչէ զայնպիսիսն . վասն զի խաչին անունն չարչարանք են , ըստ նորուն Տեառն բանի . որ կամի , ասէ , զկնի իմ գալ , զխաչն առցէ և եկեսցէ <sup>1</sup> . այսինքն զչարչարանսն : Օ ի ես ասէ 'ի մարմնազգեցու թեանս՝ խաչի և չարչարանաց ճանապարհաւ գնացի , որով և 'ի սեփականն իմ փառս մտի : Եւ որ զհետ իմ ախորժէ գալ , և 'ի փառսըն իմ փառաւորիլ , խաչին՝ այսինքն չարչարանացն ճանապարհաւ եկեսցէ , որ է նեղ և անձուկ : Օ ի որ ընդ լայնն և ընդ արձակն ընթանայ , որ է որկորստութիւնն և այլ մարմնական հեշտութիւնք , նա ոչ 'ի կեանսն և 'ի փառսըն՝ այլ 'ի տանջանսն և 'ի կորուստն ժամանէ : Օ սոյն և առաքեալ յայտ առնէ յասելն , « Եթէ չարչարանացն Քրիստոսի կցորդ լինիմք , և փառացն նորա հաղորդ լինելոց եմք » <sup>2</sup> :

Օ քնչ ասացից և զարբեցողացն , որ յոյժ գեր 'ի վերոյ անցանէ չարութիւք քան զկերակրոցն անյագութիւն : Վա-

1 Մատթ . ԺԶ . 24 :

2 Հռովմ . Ը . 17 :

սըն զի որք կերակրոցն անչափու թեամբ  
 վարին, թէպէտ զհոգի և զմարմին վնա-  
 սեն, ըստ վերագոյն ասացելոցդ, այլ  
 զբանական իմաստու թիւնն՝ որով յան-  
 բան կենդանեացն որոշեցաք, ոչ եղծա-  
 նեն, այլ կան մնան ամբողջ բանաւո-  
 թու թեամբն և խոհականին ընտրողու-  
 թեամբ: Իսկ արբեալքն զբանական ի-  
 մաստն, որ է պատկեր տիրականին, ա-  
 պականեն. զի ոչ խորհել և ոչ առնել  
 գիտեն ըստ պատշաճի: Այլ ոչ թէ մի-  
 այն անասնոցն այսու հաւասարեն, այլ  
 և յոյժ անմտագոյն քան զնոսա երևին:  
 Այն զի նորա թէպէտ և ՚ի բանական հան-  
 ճարոյ զրկեալ են, այլ ունին բնաւոր շար-  
 ժու թիս ըստ չափոյ պիտոյից կենաց իւր-  
 եանց զօգտակարն ինքեանց ընտրել, այս-  
 ինքն որոշել ՚ի միմեանց զկենդանական և  
 զմահացու կերակուրան: Ի պատառող գա-  
 ղանաց խուսեն, յորոգայթից խորշին,  
 ՚ի վախից և ՚ի խորխորատից ՚ի բաց կան,  
 յամարայնի ՚ի ցրտային լերինս ելանեն,  
 ՚ի ձմերուտնս ՚ի տօթագին դաշտս իջա-  
 նեն, և այլ ինչ բազում, որ նման է սո-



ցին՝ կերպարանս խոհականութե՛ն յին-  
 քեանս ցուցանեն : Այլ ոչ այսչափ մի-  
 այն՝ այլ և ոտիւք ուղիղ գնան , և աչօք  
 անսխալ տեսանեն , և ունկամբ արագ  
 լսեն : Իսկ արբեալքն ոչ միայն զբա-  
 նական իմաստութի՛ն և զխոհական ընտ-  
 րողութի՛ն կորուսանեն , այլ և ոչ զանաս-  
 նայինս զայսոսիկ յինքեանս ունին . զի ըզ-  
 գայական ներգործութիւնսն զամ կը-  
 րուսանեն . զի ոչ ոտիւք ուղիղ ընթա-  
 նալ կարեն , այլ գայթ ՚ի գայթ . և վաղ-  
 վաղակի անկեալ կործանին , և իբր ըզ-  
 մեռեալ դի յայլոց բարձեալ բերին : Այլ  
 ոչ ակն ըստ պատշաճի տեսանէ , մինչ զի  
 և ոչ զբարեկամս և զթշնամիս արոհել  
 գիտեն ՚ի միմեանց : Այա և ոչ ունկն  
 ուղղակի լսէ . զի բազում զուր բանից  
 այլ ընդ այլոյ իմանայ : Այլ ոչ լեզու յօ-  
 գաւոր և ըստ կարգի շարժի առ ՚ի բա-  
 նին յարմարութի : Այլ ոչ ձեռք յարա-  
 ըողականսն պատշաճապէս շարժի գոր-  
 ծառնութի : Իսկ շոտիւեալ և զանհան-  
 ճար ծախուցն զոր ՚ի հանգանակս գի-  
 նարբուացն անմտաբար ծախէ և յետոյ

զղջանայ, զինչ սլարտ է ասել. զի յորովք  
 այն են՝ որ զամենայն սլատճառս կենաց  
 զգոյսն՝ ՚ի միում աւուր վատնեն : Այլ  
 ոչ այսչափ միայն են մնասք արբեցու-  
 թինն, այլ քանզի խելայեղեալ է և ոչ գի-  
 տէ զինչ խօսի և կամ գործէ, բանիւք  
 ՚ի բանս անկանի և ՚ի գրգռութիւն և  
 ՚ի հակառակութիւն, ՚ի բարկութիւն  
 և ՚ի սրտմտութիւն, ՚ի կռիւ և ՚ի թըշ-  
 նամանս, ՚ի հայհոյութիւնս և ՚ի նա-  
 խատինս, յարհամարհանս և յոտնա-  
 հարութիւն, և յայսցանէ ՚ի հարուա-  
 ծըս և ՚ի գանս, ուստի բազում ան-  
 գամ և սպանութիւնք : Յորմէ բանս և  
 կապանք և տուգանք և յափշտակու-  
 թիւն ընչից, և հատումն անդամաց,  
 և զրկումն ՚ի հայրենեաց, և հալածանք  
 յօտարութիւն, և կամ մահ փոխանակ  
 մահու : Տեսանե՞ս ասա զի ոչ միայն ա-  
 նասնոց հաւասարէ արբեալն, այլ և քան  
 զխողս և զշունս և զգորտս և զայլ զազ-  
 րագոյնս ՚ի զեռնոց վատթարագոյնք են :  
 Այլ այսոքիկ ըստ մարմնոց, որ յոյժ փո-  
 քունք և նուազք են առ բազդատու :

Թիւն հոգեորական տուգանացն : Վան-  
 զի ընդ շունս և ընդ պոռնիկս և ընդ  
 սպանողս և ընդ այլ չարագործս զրկի  
 յարքայու թենէն, և զմշտավառն և զան-  
 ջիջանեւին ժառանգէ զդեհեանն ըստ  
 տուաքելական բանին . « Մի խաբիք, ա-  
 սէ, զի ոչ շունք, ոչ պոռնիկք, ոչ իգա-  
 ցեալք, ոչ արուագէտք, ոչ բամբասողք  
 ոչ արբեցողք, զարքայու թիւնն Աստու-  
 ծոյ ոչ ժառանգեն »<sup>1</sup> :

Այլ բազումք են որք ոչ միայն որ-  
 կորստու թեամբ և արբեցու թեամբն  
 արտաքոյ սահմանին ելանեն, այլ և զաս-  
 տուածային օրինօք սահմանեալ պահան-  
 լուծանեն . են որք ամենայն հրաժարե-  
 ցուցեալ կերակրօք, և են որք ձկամբ  
 և գինւով և ձիթով : Այլ բարուրս կար-  
 կատեն ասելով . Աստուած վասն կերա-  
 կրոյ ոչ բարկանայ ումեք . զի և յայն  
 սակս արար զնա և ետ մեզ, զի վայե-  
 լեսցուք յառատ սխարգես նորա և փա-  
 ռաւորեսցուք զնա : Օ սիրտ, ասեն,  
 պարտ է պահել ՚ի չարեաց և չար ու-

մեք ոչ աւնել. քանզի զայս միշտ ուսուցանենն աստուածային պատուիրանք :

Առ որս ասեմք, թէ որ զպահանս օրինադրեաց, ոչ զսիրտ տղծել ասաց չարեօք, կամ զընկերն տրամեցուցանել, այլ և զայն ընդ այսմ պահել, զի և ոչ միոյ պատուիրանի պահպանութի՞ բաւական է յուղղութիւն : Այլ լուր յառաքելոյ որ ասէ. “ Եթէ որ զամենայն օրէնսն պահիցէ և միով իւրիք դժիցէ, եղև ամենայն օրինացն պարտապան ”<sup>1</sup> : Արդ՝ որպէս զմարմինն ոչ միայն միով կերակրով՝ այլ ամենայն պիտանացուօքն կերակրեմք, այսպէս և զհոգի՝ որոյ է կերակուր պատուիրանքն Աստուծոյ, ոչ միով կամ սակաւութ՝ այլ ամենայն պատուիրանօք պարտ է կերակրել. զի և Տէրն ոչ սոսկ առաց՝ թէ կեցցէ մարդ բանիւ որ ելանէ՞ ՚ի բերանոյ Աստուծոյ, այլ թէ՛ ամենայն բանիւ<sup>2</sup> :

Իսկ եթէ որ ասիցէ, թէ հրաժարեցուցեալ կերակուր միս է և որ ինչ ՚ի մտոյ՝ զի ծնունդ կենդանեաց է, իսկ

1 Յակ. Բ. 10 :

2 Մատթ. Դ. 4 :

ձուկն ջրոյ, և ձէթ և գինի պտղաց. զս-  
 րլս պարտ է անխտիր ուտել: Ա՛յ ցուրտ  
 և յիմար պատճառիս. ո՛չ ապաքէն տա-  
 րերքս ամենայն հաւասար են, երկիր  
 և ջուր, օդ և հուր. և ՚ի նիւթական  
 արարածոցս ոչ գոյ ինչ էութիւն, որ ոչ  
 ՚ի չորից տարերց յայցցանէ է գոյա-  
 ցեալ, բանաւորք և անբանք, կենդա-  
 նիք և անկենդանք: Իսկ եթէ ասիցէ  
 դարձեալ, թէ Աստուած ասաց՝ «Բըլէ  
 խեցէ երկիր շունչ կենդանի ըստ աղ-  
 գի, չորքոտանիք և սողունս և գաղա-  
 նրս ըստ աղգի»<sup>1</sup>: Եւ դարձեալ ասաց՝  
 «Հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդա-  
 նեաց, և թռչունս թեւաւորս, և կէտս  
 և ձկունս և կայտառս զանազանս»<sup>2</sup>: Եւ  
 ահաւասիկ անասունք՝ երկրի են ծը-  
 նունդ, և ձուկն՝ ջրոյ. վասն այնորիկ ըզ-  
 ձկունս պարտ է ուտել, և զանասունս  
 ոչ: Ա՛յլ յառաջագոյն ասացի, թէ ոչինչ  
 ՚ի վերայ երկրի ՚ի միոյ տարրէ գոյացեալ  
 է, և ոչ յերկուց կամ յերից, այլ բո-  
 վանդակն ՚ի չորից: Եւ որ յերկրէ ա-

1 Ծննդ. Ա. 24:

2 Անդ. Ա. 20:

սացաւ , ունի զջուրն և զայլն ընդ ինքեան . նոյնպէս և որ 'ի ջրոյ՝ ունի և զերկրի և զայլոցն խառնուած : Իսկ եթէ դարձեալ հակառակիս՝ նուազ լինել զորս 'ի ջրոյ ասացաւ քան զոր յերկրէ , ընդէր և ոչ զթուչունս ուտես , քանզի և նոքա 'ի ջրոյ են . և կամ ընդէր ոչ 'ի բուսոց և 'ի սերմանեաց հրաժարես , զի և նոքա յերկրէ են : Իսկ եթէ զկենդանին ասես պատճառ , ահա՛ և ձկունք կենդանի են և մեծ և յաղթանդամ քան զամենայն կենդանիս որ 'ի վերայ երկրի :

Այլ ես ոչ ասեմ զայս ինչ պատճառ կամ զայն , այլ զանցանեւն ընդ եդեալ սահմանս . զի և առաջին պահոցն լուծու մն՝ որով անէծք և մահ յաշխարհ եմուտ , ոչ մտով էր կամ ձկամբ կամ գինուով և ձիթով , այլ պտղով : « Ի ծառոյն ասէ , գիտութեան բարւոյ և չարի մի ուտիցէք »<sup>1</sup> : Այլ 'ի պատժեւն յետ յանցաւորութեն՝ դարձեալ զնոյն երկրորդեաց . « Փոխանակ , ասէ , զի կերեր 'ի ծառոյն յորմէ ասացի չուտել , անիծեալ

լիցի երկիր 'ի դուքս քոո' . և որ 'ի կարգին :  
 Արդ՝ աստուածային օրէնադիրքն որ  
 պէս զուսուրնն օրոշեցին պահոյ և ու  
 տելոյ , նայնպէս և զկերակուրնն զանա  
 զանեցին . զզօրաւորնն և զհեշտալինն և  
 զախորժականնն մարմնոյ զորս պատշաճ  
 դատեցան՝ օրինադրեցին ոչ ուտել յա  
 լուրս պահոյն . ոչ թէ զի կարօտու  
 թիւն ունի Աստուած մերոյ պահոյն ,  
 այլ զի երեւոցուք ընդ հնազանդու  
 թեամբ հրամանի նորա : Օայս և 'ի  
 մարդիկ է տեսանել . զի 'ի վերայ ընդ  
 ձեռամբ անկելոցն՝ ոչ այնքան զմեծա  
 մեծսն կամ զխոքունն քննեն զպատ  
 ճառս , որքան զանհնազանդութիւն և  
 զարհամարհանս հրամանի իւրեանց :  
 Այսպէս ամենայն ումեք պարտ է հնա  
 զանդել աստուածայնոյ օրինադրութեն՝  
 զոր 'ի ձեռն եկեղեցւոյ առաջնորդաց  
 կարգեաց : Ալ զորս ըստ աստուածային  
 հրամանին կարճեաց յինքենէ պահոյն  
 զկերակուրս , մասնաւորել զայն կարօտե  
 լոցն հարկաւորացն : Աս և զամենայն ա

ւելորդս գոյիցն, կերակրոց և զինչ և ի-  
 ցէ, առատապէս սփռել և տալ աղքա-  
 տաց . զի արդարութիւն բարեգործու-  
 թեանն մնասցէ յաւիտեան . հաւան-  
 ետալ բարերարին խրատու, զապականա-  
 յու և զցնդելի նիւթ երկրաւորիս՝ որ  
 ցեցոյ և ժանգոյ է կերակուր՝ որպէս  
 վաճառականութեամբ տալ ՚ի ձեռս  
 աղքատաց և գանձել յերկիրնս, որ ան-  
 դըժբերին է գողոց և ցեցոյ . և առ-  
 նուլ փոխարէն զանապականն և զանայ-  
 լայլելին զերկնից արքայութիւն ըստ նու-  
 րուն Տեառն երանաւէտ ձայնի որ առ  
 բարեգործացն դասս . « Եկայք, ասէ,  
 օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք ըզ-  
 սրատրաստեալ ձեզ զարքայութիւնն ՚ի  
 սկզբանէ աշխարհի : Այսն զի քաղ-  
 ցեայ՝ և ետուք ինձ ուտել . ծարա-  
 ւեցայ՝ և արբուցիք զիս . օտար էի՝ և  
 ժողովեցիք զիս ընդ յարկաւ ձերով .  
 մերկ էի՝ և զգեցուցիք զիս . հիւանդ  
 էի՝ և տեսիք զիս . ՚ի բանտի էի՝ և ե-  
 կիք առ իս »<sup>1</sup> : Արք իբրև տարակուսե-



ցան՝ տեսեալ զնա յայնպիսի փառաւորութիւն, և անարժան նմա զասացեալսն վարկանէին, և հարցին՝ թէ ե՞րբ տեսաք զքեզ յայդպիսի կարօտութեան և բարեգործեցաք որպէս գոհանասդ : Պատասխանեաց նոցա և ասէ . որովհետև արարէք միում 'ի փոքր և յարհամարհ թուելոցս յայտցանէ՝ ինձ արարիք . զի ես էի որ նոցին ձեռօք առնուի զողորմութիւնն 'ի ձեռաց ձերոց : Ա՛րդ՝ ըստ վերագոյն գրելոցդ ամենայն մնասակարացդ այդոցիկ ընդդէմ փակել արժան է զճաշակելիս, և լաւագունացդ բանալ, եթէ հանդերձեալ եմ ըստ արարչադիր սահմանին շարժել զնա 'ի բնաւորականացն ներգործութիւն :

Յետ այսորիկ դնել արժան է սանձս և 'ի վերայ լեզուոյ . զի թէպէտ և փոքր ինչ անդամ է, այլ մեծամեծս բարբառի ըստ առաքելոյ : Այլ զարդ անիրաւութեան զնտ ասէ, և ամենայն մարմնոյն ապականիչ . « Նովաւ, ասէ, օրհնեմք զԱստուած, և նովաւ անիծանեմք զմարդիկ՝ որ 'ի պատկեր Աստուծոյ ա-

բարան ո՞ր : Այլ քաղցր և ողորական բա-  
 նիւն ՚ի խրատ մատուցեալ ասէ . ոչ է  
 սլարտ, եղբարք, այսմ այսպէս լինել . զև  
 որպէս աղբիւր անդստին ՚ի միոյ ախա-  
 նէ ոչ բղխէ քաղցր և դառն , այնպէս  
 և լեզու՝ որ քաղցր և շնորհալից բանից  
 դործարան Արարչէն ՚ի բնութիս հաս-  
 տատեցաւ , ոչ է իրաւացի եթէ զդառ-  
 նութիւն հայհոյութեան և բամբասա-  
 նաց , կագի և հակառակութեան , սը-  
 տութեան և չարախօսութեան , թշնա-  
 մանաց և զրպարտութեան , քսութեան  
 և մատնութեան , խեղկատակութեան  
 և դատարկաբանութեան , երգմնահա-  
 րութեան և շողոքորդութեան , և այլ  
 յուրապատիկ շաղակրատութեան յին-  
 քենէ բղխեսցէ : Վանաւանդ զանօրէն  
 և զհսգեկորոյս բանս յիշոցատուութե-  
 որ է սերմ որոմնացան թշնամւոյն ՚ի  
 նմանէ սերմանեալ , և ՚ի հաճոյակատար  
 մշակաց իւրոց երկրագործեալ և արդիւ-  
 նացեալ : Ար և քան զամենայն յանցան-  
 սրդ է դժնդակ և ծանրագոյն , և առա-

ւել խաւարեցուցանէ զողւոյն պայծա  
 ռութիւն , և անհրաժեշտ ժառանգս  
 կացուցանէ մշտալիառ հրոյ անշիջանելի  
 գեհէնին : Օ ի եթէ յիմար և մորոս ա  
 սել եղբօրն , ըստ Տեառն բանին , պար  
 տաւոր առնէ գեհէնին , սրչափ ևս ա  
 ռաւել զանհնարին և զգժնդակ ամե  
 նայն լսելութեան՝ անարգանաց և նա  
 խատանաց բանսն յանգահանեալ որ  
 սէս ՚ի դժոխաց մտայն և ՚ի լեզուէն  
 զգայուելով , մինչ զի անասնոց և գազա  
 նաց առականօք անարգեն զ՚ի սլատկեր  
 Աստուծոյ եղեալ մարդն , որով զնախա  
 տիսն Աստուած շարժեն ՚ի վերայ ին  
 քեանց ՚ի բարկութիւն և ՚ի վրէժխնդ  
 րութիւն : Յօլով անգամ և զսուրբ և  
 զանմեղ ոգիսն հայհոյեն , զոր ասաց Տե  
 րըն՝ ոչ բնաւ ունել թողութիւն , ոչ  
 յայսմ աշխարհի և ոչ ՚ի հանդերձեալն :

Այլ ՚ի սանձել առ այս ամ անկարգ  
 բերումն զլեզու , շարժել դարձեալ  
 գեղեցկապէս զնա արժան է ՚ի խոստո  
 վանութիւն սուրբ և ուղղափառ հա  
 ւատոյ երկց անձնաւորութեանց և միոյ

աստուածու թեան համարուն և զուգար  
 կան Երրորդու թեանն . և 'ի դաւանու-  
 թիւն աշխարհանորոգ և փրկական տը-  
 նօրէնու թեանն . և յօրհնու թիւն և 'ի  
 փառաբանու թիւն անսահման բարե-  
 բարու թեանն և յօգնառատ սրբօրե-  
 ւաբաշխու թեանն . և 'ի մաղթանս մըշ-  
 տանուէրս վասն փրկու թեան անձին և  
 հոմասեռիցն . և 'ի խոստովանու թիւն  
 նախագործեալ յանցանացն՝ անպատկա-  
 ռապէս յանդիմանու թեամբ և գովելի  
 ամօթխածու թեամբ , 'ի մեծամեծացն  
 մինչև 'ի մանունան իջանելով , որ ըստ  
 գործոց՝ բանից՝ և խորհրդոց . և 'ի խը-  
 բատ և յօգտու թիւն այնոցիկ , որ այնմ  
 պէտս սենին հոգևորաց և մարմնաւո-  
 րաց : Չեռն կարկառելով գլորելոցն ,  
 մխիթարել զսգաւորս , կանգնել զան-  
 կեալս յուսահատու թեամբ , բժշկել  
 զբեկեալս թերահաւատու թեամբ . բա-  
 ջալերել զվհատեալսն հեղգու թեամբ .  
 պնդակազմել զյողդողդան արիութի .  
 զօրացուցանել զհաստատան պնդութի :  
 Աւ մի երբէք խօսել զայն ինչ , որ ոչ ին-

քեան և ոչ լսողին է պիտանացու, այլ զոր հասարակաց ամենեցուն է օգուտ ըստ առաքելոյ զի ասէ. « Լիցի բանն ձեր համեալ աղիւն ճշմարտութեան, զի տացէ շնորհս լսողացն »<sup>1</sup> :

Կարգաւորապէս ասլա և 'ի շօշափելիսն իրաւացի է անցանել բանիւ, և զնորայն նահանջել յանդուգն յարձակումն, որով առձեռն պատրաստ է 'ի չարութիւն մուտք՝ և ճանապարհ 'ի մեղքս : Եւ նախ 'ի գարշ և 'ի զազրալի շօշափմանէն կարճել, որ յամուսնութիւնս և 'ի պոռնկութիւնս լինի՝ 'ի զեխան և 'ի շռայլան : Աչ ասեմ 'ի զգաստան և 'ի պարկեշտան. քանզի նորա խորշին յայն պիտի աղտեղութեանց : Քանզի ամենայն պիտանացու գործոյ ունի բնութիւնս յինքենէ պատշաճաւոր գործիս. և որ պէս յիւրաքանչիւր գործս իւրովք յարմարականօքն վարի, նմանապէս և յայնրս իւրովքն շատացի : Են ոմանք 'ի վաւաշտացն՝ որք և առանց գործակցի՝ ինքեանք ընդ ինքեանս մաքառին, և ըզ

գարչ ցանկու թիւնսն հասմամբ ախտիցն  
կատարեն , որ ոչ ինչ նուազ քան զպո-  
ռընկու թիւնսն է . այլ զոյգ և հաւա-  
տար շնութեան՝ մերժէ յարքայութենէն  
զգործունեայն , և առնէ ժառանգ գե-  
հենին . յորմէ առաւել պարտ է զգու-  
շանալ . վասն զի սակաւ է հեշտութիւն  
և յորով պատուհասն :

Արգելուլ պարտ է և ՚ի գողութե-  
նէ զձեռս ըստ առաքելոյ հրամանին որ  
ասէ . “ Ար գողանայր՝ մի ևս գողացի .  
այլ մանաւանդ վաստակեսցէ գործել  
ձեռովք իւրովք զբարիս . զի բաւական  
իցէ տալ ում պիտոյ իցէ ”<sup>1</sup> : Թօթա-  
փել և ՚ի կաշառաց զձեռս , զոր դսրովէ  
մարգարէն ասելով . “ Ձեռք իւրեանց  
յանօրէնութեան են , և աջ նոցա լի է  
կաշառօք ”<sup>2</sup> : Օ ՚ի կաշառ կուրացուցա-  
նէ , ասէ , զառնելիսն առ ՚ի թիւրել ըզ-  
գատաստան . զի անհնար է կաշառաց և  
իրաւանց ընթացակից լինել . զի որպէս  
հուր զմում և ծուխ զմեղուս , այսպէս  
և կաշառք զիրաւունս հալեն և փախու-

1 Եփես . Ե . 28 :

2 Սաղմ . ԻԵ . 10 :

ցանեն : Իսկ զխոտորեալն յայսմանէ՝  
բարեբանութեամբ հռչակեն ասելով .  
“Որ թօթափէ զձեռս իւր ՚ի կաշառաց”<sup>1</sup>,  
և թէ՛ “Կաշառս ՚ի վերայ իրաւանց նա  
ոչ առնու . և որ զայս արասցէ՝ նա մի՛  
սասանեսցի յաւիտեան”<sup>2</sup> : Այտալ դար-  
ձեալ զարծաթ տոկոսիւք ՚ի վարձու .  
քանզի զվաշխս և զտոկոսիս ՚ի տունս  
ամբարշտաց , ասէ , իմաստունն <sup>3</sup> : Այլ  
թէ և ոչ ես կարող ըստ Տեառն հրամանին  
տալ փոխ՝ յորոց ակն ոչ ունիս առնուլ ,  
որպէս զկատարեալ Քրիստոսի աշակերտ՝  
զի առնուցուս զայն բազմապատկութիւ  
յարբայութեան , գոնէ տուր փոխ ըստ  
մեզաւորացն , զի առցես անդրէն զհաւա-  
սար կշիռն : Իսկ զանձնունդ բնութիւն  
արծաթոյն ծննդական առնել հակառակ  
է Աստուծոյ . քանզի նա զկենդանիս և  
ոչ զարծաթ ծննդական սահմանեաց : Այլ  
կենդանիքն միանգամ ՚ի տարւոջն ծնա-  
նին , իսկ արծաթն յամսոջ : Որ քան զա-  
մենայն է դժնդակ և առաւել ընդդէմ

1 Եսայ . ԼԳ . 15 :

3 Առակ . ԻԸ . 8 :

2 Սաղմ . ԺԴ . 6 :

Աստուծոյ . զի դու որպէս և զօրաւոր  
իմաստուն քան զնա՝ կարացեր առնել  
զայն յորում նա տկարացաւ :

Նա և ոչ ՚ի հարուածս ուրուք ձգել  
զձեռն . զի ոչ հարել ուսաք ՚ի Տեառնէ ,  
այլ հարկանելեաց մատուցանել զճնօտս :  
Եւ զոր բանիւ վարդապետեաց՝ գործով  
կատարեաց . զի չար ծառային որ ամ նը-  
մա սպտակ , ոչ սաստեաց և ոչ պատու-  
հասեաց : Սի և բազում անգամ , թող  
զսաստկագոյնս , ՚ի փոքունց հարուածոց  
սպանութիւն դործի :

Գարձեալ՝ ոչ ձգել զձեռն ՚ի զրկանս  
և ՚ի յափշտակութիւն . որ զարդարու-  
թեամբ ստացեալն հրաման ընկալաք  
սիռել և տալ կարօտելոց : Եւ իբրև հա-  
կառակացս այսոցիկ և օրինօք հրաժարե-  
ցելոցս ընդդէմ փակեմք զարձակումն  
չօշափելեաց , բացցուք նմա դրունս բա-  
րեգործութե՞ն օգտակարս և սխտանիս :  
Ըմբարձցուք զնա մաքուր մաղթանօք և  
անղբօս մտօք առ Աստուած ըստ Դաւ-  
թայ . “ Ի գիշերի համբարձէք զձեռս



ձեր 'ի սրբութի, և օրհնեցէք զսէր ո՛ր  
 և ըստ Պօղոսի՝ « Կամիմ, զի արք յամե-  
 նայն ժամ ամբարձցեն զսուրբ ձեռս իւ-  
 րեանց առ Աստուած առանց բարկու-  
 թեան և երկմտութեան »<sup>1</sup> : Օ՛ր քան  
 զամենայն առաքինութիւն՝ սա առա-  
 ւել ընտանի և մերձաւոր է Աստուծոյ .  
 զի այլքն ամենայն իբրև հանդերձանք և  
 սրատրաստութիւնք են առ Աստուած մը-  
 տից . իսկ սա դէմ յանդիման խօսակցու-  
 թիւն է Աստուծոյ : Օ՛ր որպէս ամենայն  
 աշխատութիւն երկրագործի վասն հա-  
 ւաքելոյ զպտուղսն է , և տաժանումն  
 խոհագործի յաղաքս կերակրելոյ , այս-  
 պէս և ամենայն բարեգործութիւն և  
 զգաստութիւն և պարկեշտութիւն վասն  
 ճանսարհ գործելոյ մտացն անպբաղա-  
 սէս՝ որպէս ընդ սիրելոյ բարեկամի Աս-  
 տուծոյ խօսակից լինել աղօթիւք , և ըզ-  
 պէտս ամենայն կտրեաց հոգևորաց և  
 մարմնաւորաց անձին և աշխարհի՝ ա-  
 ռաջի դնել , և 'ի նմանէ զյաջողումն ա-  
 մենայն բարութեան հայցել , և զփր-

կութիւն յորոգայթից թշնամւոյն :

Եւ այս մասն առաքինութեան ոչ է ընդ սահմանաւ որպէս զայլսն . այլ անսահմանաբար յամենայն ժամու առնել, ըստ անբունական հրամանին որ ասէ . “ Արթուն կացէք, և յամենայն ժամ աղօթս արարէք ”<sup>1</sup> : Ար և յորինակ մեզ և ՚ի յորդորումն՝ ընդունողն ամ մաղթանաց բազում անդամ զգիշերս ՚ի գլուխ հանէր յաղօթսն Աստուծոյ : Եւ առաքեալ ՚ի նմանէ ուսեալ ասէր . “ Յամենայնի գոհացարուք, անդադար աղօթեցէք ”<sup>2</sup> : Քանզի և այսպէս վայելչական է նախ յաղագս տուեցելոց բարեացն գոհանալ, և ապա վասն առաջիկայիցն մաղթել : Եւ ոչ միայն վասն անձին և տան և որդւոց և ընտանեաց զայս առնել, այլ և վասն ամենայն աշխարհի . իւրաքանչիւրոցն զպիտոյսն և զօգտակարսն սնօրինել՝ ըստ ոգւոյ և մտքմնոյ : Եւս առաւել ՚ի վերայ թշնամեացն և ասելեացն, ըստ բանին՝ “ Եթէ օրհնեցէք զանիծիչս ձեր, և աղօթս արարէք

'ի վերայ այնոցիկ՝ որ լինեն զձեզ և հա-  
 լածեն »<sup>1</sup> : Քանզի այս ամենայն դասուե-  
 լութիւն և զօխակալութիւն հալածա-  
 կան առնէ . զի յաղագս որոց ճշմարիտ  
 և աներկբայ սիրով աղօթս առնէ , և 'ի  
 Տեառնէ փրկութի՛ հայցէ , և ընդ նոսա  
 յիսութեամբ զիմրդ կարէ լինել : Այս և  
 թէպէտ լինի ունել ընդ ումեք թշնա-  
 մութիւն , նախ հաշտել պարտ է՝ ըստ  
 Տեառն քանին , և ասլա յաղօթս մատչել :  
 Օ՛ի եթէ զպատարագն խափանել հրա-  
 մայէ նախ քան զհաշտութիւն , զի և ոչ  
 իսկ էր ընդունելի առանց այնորիկ , սը-  
 չափ և ս առաւել զաղօթսն . զի նախ ըզ-  
 հաշտութիւնն պարտ է առնել , և զա-  
 մենայն ատելութիւն և զօխա լուծանել ,  
 և ասլա յաղօթսն խնդրել նոցա բարիս 'ի  
 Տեառնէ : Այլ զայս առնել , զի և մեք ա-  
 ռաւելապէս ընդ կարեօք եմք . քանզի  
 անբաղդատելի են առ միմեանս՝ յան-  
 ցանք մեր որ առ Աստուած , և ընկերացն  
 որ առ մեզ , ըստ թուոյ բիւր քանիքա-  
 րացն և հարիւր դահեկանին : Յաղագս

այնորիկ իրաւացի է թողուլ պարտա-  
սյանին զսահաւան, զի գտցուք և մեք թո-  
ղու թիւն բազմացն : Քանչի ասաց Տէ-  
րըն . “ Եթէ թողուցուք իւրաքանչիւր  
եղբօր իւրում ’ի սրտից ձերոց զյան-  
ցանս նոցա , թողցէ և ձեզ Հայրն ձեր  
երկնաւոր զյանցանս ձեր . ապա թէ ոչ  
թողուցուք զյանցանս եղբարց ձերոց ,  
և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ  
զյանցանս ձեր ”<sup>1</sup> : Արդ՝ յաղագս այս-  
պիսի սոսկալի և իրաւացի հրամանի  
պարտ է յամենայն սրտէ թողուլ պար-  
տասյանացն և աղօթել սիրով ’ի վերայ  
նոցա . զի առ այս զմեզ արար Աստուած  
իշխանս ’ի վերայ թողութեան մեղացն  
մերոց . զի որով սրտիւ մեք թողումք նո-  
ցա զմեր պարտան , և սէր և գութ ցու-  
ցանեմք ’ի վերայ նոցա , ըստ այնմ չա-  
փոյ և Աստուած զմեր յանցանսն թողու ,  
և զարարչական սէրն և զգթութիւնն  
իւր սիրէ ’ի վերայ մեր :

Այլ յամենայն սահմանեալ ժամ ա-  
ղօթից առնջեան և գիշերոյ՝ պարտ է

կանխել յեկեղեցի Աստուծոյ , և կամ  
յոր և իցէ տեղի աղօթից , և առաւել  
ի ժամ սոսկալի և մեղսաքաւիչ սլա-  
տարագին : Օ, ի եթէ տէրն քո վասն  
անձառ սիրոյն՝ խոնարհեալ յանբաւ  
բարձրութենէն պատարագի վասն քա-  
ւութեան մեղաց քոց , եզեալ միջնորդ  
հաշտութե ընդ հայր և ընդ քեզ , ըստ  
որում և ասացն . « Այս է իմ մարմին  
որ վասն ձեր բաշխի ՚ի թողութիւն մե-  
ղաց ձերոց »<sup>1</sup> , ո՞րչափ ևս առաւել քեզ  
իրաւացի է երթալ և անկանել առաջի,  
և գոհանալ և շնորհ ունել զանբաւ  
բարերարութենէն . որ վասն պարտա-  
ւորացս և անարժանիցս և ասպտամբե-  
լոցս ՚ի նմանէ բիւրասպատիկ յանցաւո-  
րութեամբ զիւր անձն տայ նուէր և  
պատարագ հաշտութե Հօր ընդ պատ-  
ժապարտացս : Այլ զի մեք յամենայն ժա-  
մու մեղանչեմք խորհրդով բանիւ և  
գործով , նմին իրի և նա յամենայն ա-  
ւուր պատարագի , զի զօր ըստ օրէ գոր-  
ծեալ մեղսն քաւեսցէ : Այլ եթէ գնամք

յամենայն աւուր ՚ի ժամ սոսկալի խորհրդոյն կատարման, և գոհանամք և շքնորհ ունիմք զմարդասիրութենէն, և ճանաչեմք զերախտիան, և զմեր մաղթանսն և զարտասուսն խառնեմք ընդ նորա գթութիւնն և ընդ բիւրապատիկ երախտագործութիւնսն, կատարի ՚ի վերայ մեր շնորհ, և ընդունիմք զթողութիւն մեզաց: Իսկ եթէ հեղգամք և ոչ գնամք ՚ի ժամ սուրբ խորհրդոյն կատարման յեկեղեցին, և աղօթեմք և գոհանամք զանբաւ բարերարութենէն և խնդրեմք զթողութիւն մեզաց, այլ նախապատիւ համարիմք զհոգս մարմնականս և զզբաղանս սնտախս, և զծուլութիւն և զհեշտութի մարմնոյ քան զաշխարհակեցոյց և զփրկագործ խորհուրդըն, ոչ միայն թէ չօգտիմք ՚ի նմանէ, այլ և առաւել ՚ի բարկութիւն շարժեմք զանախտակիր բնութիւնն ՚ի վերայ մեր փոխանակ արհամարհանացն և անտեսաւունելոյն: Օ ի եթէ երկրաւոր ոք թագաւոր՝ վասն բարեգործելոյ ինչ զբաղաք և սրբաւս բաշխելոյ քաղաքացեացն ե-

կեսցէ անդ , իսկ նորա ոչ եկեօցեն նմա  
 յողջայն և յերկրապագութիւն և ՚ի սպա-  
 սաւորութիւն և ՚ի շնորհակալութիւն ,  
 այլ արհամարհութեամբ անփայթ առ-  
 նեն՝ իւրաքանչիւրոք յիւր գործ և աշ-  
 խատութիւն զբաղելով , ոչ միայն թէ  
 պարգևս բարեաց ոչ բաշխէ նոցա , այլ  
 և մեծապէս ցասնու և սրատուհասէ .  
 քանի՛օն ևս ասլա յորժամ երկնաւոր  
 թագաւորն եկեօցէ՝ զանմահ կենաց և  
 զանապական ձիրս պարգևաց բաշխել  
 անարժանիցս և ատերախտիցս . և մեք  
 արհամարհեմք և անտես առնեմք , զա-  
 սականացուս և զցնդելիս նախամեծար  
 առնելով քան զանապականն . և որ միշտ  
 նոյնպէս սենի , ՚ի բարկութիւն և ՚ի ցա-  
 սումն շարժեմք զնա ՚ի վերայ մեր քան  
 թէ յողորմութիւն :

Եւ ոչ միայն աղօթել սլարա է առա-  
 ջի սրբոյ պատարագին , այլ և հաղորդել  
 փրկական խորհրդայն . զի հաղորդելոցն  
 ասաց լինել ՚ի թողութիւն մեղաց և ոչ  
 անհաղորդիցն : Քանզի նախ ասաց , թէ  
 “ Առէք կերայք՝ այս է մարմին իմո . և ա-

սլա յաւելլ՝ « որ վասն ձեր բաշխի 'ի թու  
 դու թիւն մեղաց »<sup>1</sup> : Եւ դարձեալ ա-  
 սաց . « Եթէ ոչ կերիջիք զմարմին Որ-  
 դւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա ,  
 ոչ ունիք կեանս յանձինս » . և դարձեալ  
 « Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն  
 իմ , յիս բնակեսցէ և ես 'ի նմա »<sup>2</sup> : Տե-  
 սանե՞ս ահա՝ զի ճաշակողացն է 'ի փր-  
 կու թիւն և ոչ անհաղորդիցն : Բայց և  
 ոչ վարկպարազի հաղորդիլ հրամայէ , այլ  
 սրբութիւն : Բանդի ասէ առաքեալ . « Փոր-  
 ձեսցէ մարդ զանձն իւր , և ապա 'ի հա-  
 ցէ անտի կերիցէ և 'ի բաժակէն արբ-  
 ցէ . զի որ ուտէ և ըմպէ անարժանու-  
 թեամբ , դատաստան անձին իւրում  
 ուտէ և ըմպէ » : Եւ թէ՛ « Վասն այ-  
 նորիկ իսկ են 'ի ձեզ բազում հիւանդք  
 և ախտաժէտք , և շատք ևս այն են՝ որք  
 և մեռեալքն են »<sup>3</sup> . այսինքն վասն ա-  
 նարժան հաղորդութեանն :

Եւ թերևս ասիցէ ոք արդեօք . ո՞չ  
 յառաջագոյն ասացեր , թէ ինքն է քա-

1 Մատթ . Ի 2 . 26 :

3 Եւ . կորն . ԺԱ . 28-30 :

2 Յովն . 2 . 54 :



ւիչ յանցանաց ճաշակողացն , ըստ ուրում ասացն , « Այս է մարմին իմ որ վասն ձեր բաշխի 'ի քաւութիւնն և 'ի թողութիւնն մեղաց » . և այժմ զառաքեալ 'ի մէջ բերես որ ասէ՝ « Որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատատան անձին իւրում ուտէ և ըմպէ » . և ահա՛ տարակուսանք՝ զի հակառակս բարբառին : Այլ լուր ս'լ դու , զի ոչ ընդ հակառակս խօսին , այլ կարի քաջ միաբան . և է՛ այսպէս : Սարդ հողանիւթեայ՝ մարմնոյ և արեան վիճակեալ՝ զիարդ ինքեան սրբութեամբ արժանանայ ընդ Աստուած միաւորիլ ճաշակմամբ մարմնոյ և արեան նորա : Օ՛ ի եթէ սերովբէն ոչ համարձակէր մերձենալ յօրինակն նորա , այլ ունելեաց կարօտանայր , մարդ՝ որ անչափ փոքրկութեամբ վերջանայ 'ի նմանութենէ սերօբէի , սրպէս կարողանայ մերձենալ 'ի ճշմարտութիւնն : Այլ բարերարն և մարդասէրն Աստուած ըստ անչափ սիրոյն իւրոյ զոր ունի առ ազգս մարդկան , կամելով զսուսա միացուցանել յինքն՝ ետ սոցա սխառ

Ճառ սրբութեան զխոստովանութիւնն  
 և զապաշխարութիւնն : Օյի ամենայն  
 ոք ճշմարիտ սրտիւ ըստ գիտակցութե  
 մտաց իւրոց ՚ի շտեմարանս սրտին մը-  
 տանելով մանրամասնաբար որոնեսցէ  
 զամենայն սխալանս հոգւոյ և մարմնոյ  
 և մտաց , զխորհրդոց զբանից և զգոր-  
 ծոց , և խոստովանեսցի անպատկառա-  
 բար և անճածկապէս՝ որպէս զթշնամ-  
 ւոյ ամբաստանելով զմեղացն . և տար-  
 ցէ ըստ չափոյ կարողութեանն զսահ-  
 ման ապաշխարութեան , և ապաշխա-  
 րեցէ և սրբեսցի :

Սակայն գիտել պարտ է , զի զամե-  
 նայն մեղան մինչ ՚ի մանուկսն իջանելով  
 ոչ ոք կարէ զմտաւ ածել կամ խոստովա-  
 նել . թէ և բիւր անգամ ջանայցէ : Ալ  
 գրեսջիր՝ թէ զգործոցն կարէ յիշել և  
 խոստովանիլ . իսկ զխորհրդոցն կամ զբա-  
 նիցն ո՞րպէս : Ալ եթէ՝ յիմար ասելն և  
 մորոս՝ գեհենին դատապարտէ , և դա-  
 տարկաբանութիւնն ՚ի պահանջանս հա-  
 մարոյ ածէ<sup>2</sup> , ո՞ ոք է որ զայս ամ զմտաւ

1 Մատթ . Ե . 22 :

2 Անդ . ԺԲ . 56 :

ամեալ և կարէ խոստովանել : Արդ՝ զոր  
 մաածեացն և խոստովանեցաւ և ապաշ-  
 խարեաց , այնու սրբեաց . և զոր ոչն կա-  
 րաց յիշատակել , զայն մարմին և արիւնն  
 Քրիստոսի սրբէ : Աւ ճշմարտի երկու-  
 ցունց բան՝ Տեառն և առաքելոյն : Օ ի  
 որ առանց խոստովանութեան և ապաշ-  
 խարութեան ուտէ և ըմպէ , դատասպար-  
 աի ըստ առաքելոյ . և որ խոստովանու-  
 թեամբ և ապաշխարութեամբ , քաւի  
 ըստ Քրիստոսի : Օ սոյն զայս յայտ առ-  
 նէ և որոտմանն որդի . « Եթէ ասեմք  
 ասէ՛ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք , զան-  
 ձինս խաբեմք , և ճշմարտութիւն ՚ի մեզ  
 ոչ գոյ . ապա եթէ խոստովան լինիմք ըզ-  
 մեղս մեր , հաւատարիմ է նա և արդար  
 առ ՚ի թողուլ զմեղս մեր . և արիւն Յի-  
 սուսի որդւոյն Աստուծոյ սրբէ զմեզ  
 յամենայն անօրէնութենէ » : (Թուի թէ  
 զայն ակնարկէ . զի թէպէտ և խոստովա-  
 նեցի ոք , բայց զկատարեալ թողութիւն՝  
 հաղորդութիւն մեղսաքաւիչ մարմնոյ և  
 արեանն Քրիստոսի սպարգ և է : Ուսանիմք

զայս և յօրինակէ սերօբէին՝ որ առ մարգարէն . վասն զի խոստովան եղև մարգարէն՝ թէ « Պիղծ շրթունս ունիմ, և ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բընակեալ եմ ես » : Եւ ապա սերօբէն էառ ունելեօք ՚ի հրոյ անտի որ ՚ի վերայ սեղանոյն , եբեր մերձեցոյց ՚ի բերան մարգարէին և ասէ . « Ահա՛ այդ մերձեցաւ ՚ի շրթունս քո , և հանցէ զանօրէնութիւնս քո , և զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն »<sup>1</sup> : Տեսանե՞ս ահա՛ զի թէպէտ և սուրբ էր մարգարէն և առաւել քան զամենայն մարդիկ , մինչ զի հոգւոյն էր բնակարան և զՏէր զօրութեանց ետես յաթոռ փառաց , այլ օրինակի մարմնոյն Քրիստոսի կարօտացաւ առ ՚ի մեղացն մաքրութիւն :

Եւ յետ մաքուր մաղթանօք առ Աստուած զձեռս համբառնալոյ՝ զարդարեսցուք զնա և այլովք բարեգործութիւք , տրօք տնանկաց , և կարկառելով ձեռն յաղքատս . զի և այս ոչ փոքր ինչ նւպաստ լինի առ ՚ի մեղացն մաքրութիւն ,

լատ այնմ. « Զմեղս քո ողորմութեամբ  
 քաւեսցես, և զանօրէնութիւնս քո գլ-  
 թովք տնանկաց »<sup>1</sup>: Գործել ձեռօք և  
 սալ կարօտելոյ՝ ըստ խրատուն Պօղոսի.  
 « Զբարիս գործել, ասէ, մի՛ ձանձրա-  
 նայք, զի ՚ի ժամանակի իւրում հնձես-  
 ջիք առանց լքանելոյ »<sup>2</sup>: Եւ ամենայն  
 վտանգելոց որք կարօտ են օգնականու-  
 թեան, հիւանդաց, տկարաց, ծերոց,  
 սպասաւորել առանց հեղգութեան,  
 որպէս և իւրաքանչիւր ումեք կարևոր  
 սէտքն սպհանջէ:

Նա և զուտ ոչ է պարտ որոշել յին-  
 տանի անդամոցն միաբանութենէ, և  
 անխնամաբար առանց զարդարանաց թո-  
 ղուլ: այլ իւրովք բնաւորական ներգոր-  
 ծութեանցն գործառնութեամբք պսա-  
 կել զնա: Օ՛ի թէպէտ և ՚ի զգայութեց  
 ոչ է սա, այլ ոչ ինչ նուազ ՚ի նոցանէ  
 իշխանական մտացն առաջնորդութիւն  
 յիւրաքանչիւրսն ունի շարժումն ընդ-  
 դիմակ գործոց՝ բարւոյ և չարի: Վասն  
 որոյ պարտ է խոհականին վերակացու-

1 Դանի. Դ. 24:

2 Գաղ. 2. 9:

Թեամբ իբր ստուար և անխղճի կա-  
 սրանօք արգելուլ զնա 'ի չար ընթացից  
 և 'ի գնացից անօրէնու թեան, ոչ շար-  
 ժել զնա 'ի գողոց և յաւաղակաց միաւ  
 բանութիւն և 'ի հեռեւողու թիւն, ըստ  
 իմաստնոյն խրատու. « Արդեակ, սուէ,  
 մի երթար ճանապարհ ընդ նոսա, խո-  
 տորեան զոսն քո 'ի շաւղաց նոցա, զի սոք  
 նոցա 'ի չարիս ընթանան, և երազունք  
 են 'ի հեղումն արեան »: Աչ և 'ի սուն  
 պոռնիութեան կամ արբեցութեան, զի  
 կատարած երկոցունցն յատակս հայի  
 դժոխոց: Աչ 'ի թատերս խաղուց և լկտի-  
 տեսութեանց, զի յոլովից չարեաց են  
 պատճառ: Աչ առ գիւթս և կախարդս,  
 զի օտարացուցիչք են յԱստուծոյ: Աչ  
 և առ չար խորհրդակիցս և գործակիցս,  
 խորհել և կամ առնել ումեք չարութիւ:  
 Եւ միանգամայն յամենայնէ՛ որ ընթա-  
 ցիւք ոտին լինի ապստամբութիւն 'ի  
 հրամանացն Աստուծոյ՝ ներգործութիւ  
 չարին յինքն և կամ յայլս՝ խոտորել: Եւ  
 արգելմամբ յայոցանէ՛ ուղղել 'ի գնացս

արդարութե՛ն . ըստ առակողին՝ « Ի ճանապարհս արդարութեան դնամ, և ՚ի շաւիղս ճճմարտութեան շրջիմ »<sup>1</sup> : Այսինքն ստէպ ընթանալ յեկեղեցի Աստուծոյ , և ՚ի տունս աղօթից ՚ի փառաբանութիւն Աստուծոյ : Գնալ և առ խոստովանահայրս , և հոգևոր խրատուց բաշխօղս . խոստովանել զմեզս , և առնուլ խրատ ապաշխարութեան և բարեգործութեան : Գնալ և յայցելու թի՛ հիւանդաց և որք ՚ի բանտի , և ըստ չափու զօրութեան օգնական լինել : Եւ բոլորովին յամենայն որ ինչ ըստ պատուիրանաց Աստուծոյ է՝ գնալ , և ՚ի հըրաժարելոցն խոտորել : Մինչ զի կարել ասել ընդ Դաւթայ . « Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ , և զճանապարհս ճճմարտութե՛ն քո ընտրեցի »<sup>2</sup> : Եւ լսել ՚ի Տեառնէ . « Դուք որք եկիք զկնի իմ , ՚ի միւսանգամ գալտեանն իմոյ վայելեսջիք ՚ի փառս իմ »<sup>3</sup> :

Եւ արդ ահաւասիկ շնորհօքն Աս-

1 Առակ . Ը . 20 :

3 Մատթ . ԺԹ . 28 :

2 Սաղմ . ճԺԸ . 52 :

տուճոյ՝ մասանց ոգւոյ և շարժմանց մը-  
տաց և զգայութեանց մարմնոյ, որ ինչ  
մուտք մեղաց են՝ փակեցան, և որ ինչ  
առաքինութեան և սրբութեան յառա-  
ջատուութիք՝ բացան : Օյի և այս իսկէ  
մարդ բոլորովին . ոգի և զօրութիւնք  
իւր, միտք և շարժմունք իւր, մարմին  
և զգայութիւնք իւր . զորս սրարտէ ըստ  
վերոյ գրեցող ամենայն զգուշութեամբ  
սլահել : Աչ ընդ հրաժարեցուցեալն  
ընտանեանալ, և ոչ ՚ի համարձակելոցն օ-  
տարանալ . զի մի՛ ՚ի բարւոք և յընտանի  
կայից սողոսկեալ ՚ի վայր քորչիցի մար-  
դըն Ատուճոյ, և բիժ ինչ արատոյ ընդ  
անարատ մաքրութիւնն խառնեցի՝ և զ-  
ձանելով զնախատպին պատկերի լու-  
սանկար գեղեցկութիւն : Վանդի վե-  
րագրելովք՝ յառաջինն յայն ամենայն  
նիւ զարդարեցի արարչաստեղծ կեր-  
սրարան . ճոխ բոլորովին ըստ լուսագու-  
նին, և աղքատ ՚ի հակառակէն : « Օյի  
թէ զամենայն, ասէ, զօրէնսն սլահիցես,  
և միով իւրք գթիցես, թերի ես և ոչ



կատարեալն՝ 1 Սոր օրինակ եթէ որ ա-  
մենայն անդամօք մարմնոյն կազմ և յար-  
դարուն իցէ, և միով իւրիք նուազեալ,  
ակամք կամ ձեռամբ կամ զոր և ասիցես  
յանդամոցն՝ ոչ ամենայն իրօք այնպիսին  
ընդ կատարեալն է, այլ թերի կոչի։ Ի  
այն խորհուրդ և յօրինաւոր հրամանսն՝  
զընծայեալն Աստուծոյ պատարագս՝ 2 ա-  
նարատս հրամայէր մատուցանել, քան  
զի կազն կամ միականին կամ ունչատն  
կամ որ սյլ ինչ թերութիւն ունէր, չէր  
ընդունելի ՚ի պատարագսն։ Եւ Պողոս  
զամենայն օրինակսն՝ 3 ստուեր հանգեր,  
ձերոց բարեացս ասէ։ Աւտի ընդ այսն՝  
և զոցս վարկանելի է ստուեր, զի մար-  
մնաւորն այն պատարագ՝ հոգևորիս էր  
ասպացոյց, զի որպէս անդ ըստ մարմնոյ  
կատարեալքն էին ընդունելիք, աստ հո-  
գևորապէս լրացեալքն և անթերիքն։

Անխմբ և այլ յարացոյց զօրաւոր և  
սզդողական ՚ի նիւթականէս յաննիւթն,  
և յախտաւորէս յանախտն բաղդատու-

1 Յակ. Բ. 10:

3 Եբրայ. Ժ. 1:

2 ՂԼս. ԻԲ. 21:

Թիւն : Բայց ինձ մաքրեցէք զմիտս և  
զխորհուրդս՝ զամենայն հիւ թական և  
ախտաւոր մտածու թիւն ՚ի բաց բառ  
նալով, և յատակ հայեցուածովք յա  
նարատ խորհուրդն յառեցցուք : Բան  
զի փեօայ Քրիստոս է, և կոչի եկեղե  
ցւոյ, և սա հարօն անախտաբար ՚ի բա  
նին միացեալ : Արդէս և փեօաւէքն  
Յովհաննէս ասէր . « Ար ունի հարան՝  
նա է փեօայ »<sup>1</sup> : Եւ հարանածուն Պօ  
ղոս՝ « Խօսեցայ զձեզ, ասէ, իբրև ըզ  
կոյս սուրբ յանդիման կայուցանել փե  
օային Քրիստոսի »<sup>2</sup> : Իսկ փեօայն եկե  
ղեցւոյ՝ զիւր ընդ հարսինն եկեղեցւոյ  
լինելն ՚ի սոյն առակէ . « Միթէ մարթ  
ինչ իցէ մանկանց առաքաստի սուգ առ  
նուլ՝ ցորքան զփեօայն ընդ իւրեանս ու  
նիցին »<sup>3</sup> : Թողու մ և զերգոյ երգոյն բան,  
որ ՚ի սկզբանէ մինչ ՚ի կատարած զնոյն  
յեզյեղէ՝ մարմնաւորօքն զհոգ և որսն ալ  
պացուցանելով, ոչ այլ ինչ այսու յայտ  
նելով, քան եթէ զառաւելու թի անչտի

1 Յովհ. Գ. 29 :

2 Մատթ. Թ. 15 :

3 Բ. կորն. ԺԱ. 2 :

սիրոյն Քրիստոսի որ առ հաւատացեալս  
 իւրէն զի չդայր այլ ինչ սիրոյ տեսակ  
 յերկրաւ որս առաւել քան զփեսայի և  
 հարսին՝ որ կարողանայր զսէրն Քրիստոսի  
 որ առ եկեղեցի՝ յանդիման կացուցա-  
 նել։ նմին իրի և յայս առակեցաւ։

Արդ՝ զոր օրինակ փեսայն զհարսնա-  
 ցեայն ինքեան ոչ կամի բնաւ ին թե-  
 քու թիւն ինչ ունել յանդամս մարմնոյն՝  
 սցլ ամենայնիւ կատարեալ լինել, այս-  
 պէս և Քրիստոս զհարսնացեալ ինքեան  
 մարդը անձնն՝ կամի կատարելապէս ին-  
 քեան նաւ իրել սրբութեամբ, զի և ոչ  
 մի ինչ ՚ի մասանց հոգւոյն կամ ՚ի ըզ-  
 գայութեց մարմնոյն նաւ աղիցէ ՚ի բնա-  
 ւորական իւր ներգործութենէն։ Այ-  
 որպէս փեսայն, թէպէտ և հարսն իցէ  
 անթերի անդամօք մարմնոյն, բայց կամի  
 և զգարդարանս պէսպէս զգեստուց ու-  
 նել հարսինն՝ իւրաքանչիւր յարմար բոս  
 պատշաճի անդամոցն, ՚ի զգեստուց և  
 յոսկւոյ և ՚ի մարդարտոյ և ՚ի քարանց  
 պատուականաց, զի առաւել գեղեց-  
 կասցի ՚ի հաճութիւն նմին, Այսպէս և

Քրիստոս կամի զառաքինի ոգին ոչ միայն ՚ի չարեաց ազատ լինել ըստ իւրաքանչիւր մասին և զգայութեան, զի այն է անարատութիւն անդամոցն՝ յորժամ մեզաց խառնուած ոչ ունիցի. բայց ոչ այսու շատանայ, այլ կամի իւրաքանչիւրոցն պէսպէս ոսկիանման և մարգարտասիւլ և ականահանգէտ առաքինութեամբ ըստ իւրաքանչիւր բնաւորականացն ներգործութեանց զարդարել: Վասն այսորիկ պարտ է ամենայն ումեք փութալ՝ զի մի ինչ նուազ ՚ի պատշաճ առաքինութեանց գտանի, ըստ որում եցոյց բանս վերոյ, ըստ հոգւոյ և մասանց իւր, մտաց և շարժմանց իւր, մարմնոյ և զգայութեանց իւր: Արովք և հաճոյ յաչս երկնաւոր փեսային երեւեցի, և լուցեալ լապտերաւն ընդ նրմին մտցէ յառաքատ երկնաւոր հարսնարանին՝ անախտ միաւորութք յանզուգական փառսն վայելել ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Վե չո մի քո ինկզա սայ վեակ ստուգի-  
 աղ-ի սայ լամի սայա ըսեպի զ՝ մա  
 մա զք : մնա ից-ալս քք ձ միտան զ-իչմազ  
 նաեզոյ ճքոնաչան մ-ից-տաղանա է  
 չո ըսս : իրիճո չո ճա-տմ-տայ ըսակ-  
 Վիչնացաղ-ի վեակ լա : լամատաջ տալս  
 զսաքգան ձ մմնաիկնո սէլս-էլս միոյ  
 Վամիցա տա տէ-քամ-ճամկա ձ քոխաու  
 Վազ-ամ-է

# ՃԵՌԻՔ

## ՊԵՆԸՄԱՆՅ ՎԼԿԱՊԵՏԻ

### Ի ՍՈՒՐ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Ճաչտալ զ քա-տմ զի ին զի լա լայ-ի  
 ն-տիտո-ի զա-ի զա-ի զա-ի զա-ի զա-ի զա-ի

... անիս : անիս :

...

Handwritten text in a cursive script, likely a list or index, with several lines of text.

Handwritten text in a cursive script, appearing to be a list or index. The text is written in a dense, flowing hand and covers most of the page.

# ԽՈՍՏՈՎ, ԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՒԱՏՈՅ

Արարեալ Վահրամայ վարդապետի Հայոց ըստ խնդրոյ  
Լեւոնի հայոց Թագաւորի՝ յաշխարհին Վիլիոյ, յաղագս  
որոց Երրորդութեանն և մի Աստուածութեանն և փր-  
կական սնորհնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ :

ՎԱՒԱՏԱՄԲ և խոստովանիմք մի աս-  
տուածութիւն յերիս անձնաւորութիւնս .  
ոչ ըստ անձանց բաժանեալ և աստուա-  
ծութիւնն յերիս, իբրու ոմն արարիչ  
և ոմն արարած՝ իբր զգործիք, և ոմն  
արբանեակ և սլաշտօնատար, զի այս Ա-  
րիօսի մոլորութեանն է և հեթանոսաց  
բազմաստուածութեանն : Եւ ոչ ըստ  
աստուածութեանն միութեան և զերիս  
անձինսն խառնակեալ շփոթմամբ՝ մի ի-  
մըն իմանամք զանուանակոչութիւն Հայր  
և Որդի և Հոգի սուրբ, ըկ յորջորջմունք  
միոյ դիմաց . ըստ որում ոմն մարդ՝ զի  
կոչի մարդ և կենդանի և Սոկրատէս՝ և  
մի է . քանզի այս Սաբէլի է հրէականին  
համախոհի : Այլ խոստովանիմք զՀայր

և զՈրդի և զՀոգին երեք անձինք և մի  
աստուածութիւն. ըստ որում երեք լապ-  
տերք 'ի տան միում վառեալք երեւին՝  
ըստ անձանց բաժանեալ և լուսովն մի-  
աւորեալ :

Իսկ զի օրինակն ոչ ամենայնիւ հա-  
մեմատի այնմ որոյ է օրինակ, սոյնպէս  
և այս, զի<sup>1</sup> մի լապտերացն զատեալ և  
զիւրն լոյս<sup>2</sup> մասամբք ընդ ինքեան առ-  
նու որոշեալ յայլոցն. իսկ աստ ոչ նոյն-  
պէս : Ինչպէս Որդին Աստուծոյ մարդ է-  
ղեալ ոչ բաժանեցաւ 'ի Հօրէ և 'ի Հո-  
գւոյն, և ոչ մասն ինչ աստուածութեն  
միացաւ 'ի մարդկութիւնն, այլ 'ի նմա  
<sup>3</sup>բնակեաց լուսն աստուածութեն մար-  
մնապէս. և ոչ նոքին թափուր մնացին  
յաստուածութենէն, զի այս մարմնոյ է  
և նիւթոց : Իսկ աննիւթ էութիւնն մի  
աստուածութիւնն էր բաւանդակ բու-  
լրովին և 'ի Հայր և 'ի Հոգին և 'ի մար-  
մինն մարդկային, զոր զգեցաւ միայն

1 Երէ օրէն. Չմի 'ի լապտերացն յայլոցն զատեալ :

2 Մէ օրէն. Լրմամբք :

3 Մէ օրէն. Բնակէ :



խնքն : Քանզի Հայր և Հորին ոչ առին մարմինն, այլ նոյին հաճութեամբ և գործակցութե մարմնացաւ միայն Որդին : Իբր յերկրի և ՚ի Հօրէ անմեկնելի, զի թէ պէտ անձամբ բաժանեալ են, այլ բնութեամբ և աստուածութեամբ միաւ լորեալք են : Մտ որում աղբիւր և ծով և գետ՝ անուամբ և անձամբ բաժանեալք՝ և բնութեամբ մի ջուր միաւորեալք :

Մտիայն և ոչ և սայս օրինակ ուղղակի հանդիպի ճշմարտութեանն. քանզի սուքտ երբեմն և ՚ի միմեանս լուծանին շքիութեալք յառանձնաւորութենէն : Եւ սու սուրբ Երրորդութիւնն ոչ այսպիսի ինչ տեսանի. զի թէպէտ ասաց Բանն՝ թէ՛ « Դու հայր յիս և ես ՚ի բեղ », և թէ՛ « Որ ետես զիս ետես զհայր », ոչ այսու ՚ի միմեանս լուծումն և շքիութեանն անձանցի ակնարկեաց. այլ զառանձնութեանցն զմի բնութիւն զաստուածութիւն և զհակցութիւն յայսնարանեաց : Քանզի որ մի են բնութք, նորին յատկացեալ են անձնաւորութք :

խոստովանեալ Հայր և Արդի և Հոգի սուրբ : Հայր անձին և անսկիզբն, Արդի սկսեալ ՚ի Հօրէ ճննդեամբ, և Հոգին սուրբ բղամամբ և ելողայէս, ոչ ժամանակաւ և ոչ զինի եղեալ, քանզի ոչ է յետ ժամանակի անժամանակէիցն սկսանել : Օ ի թէպէտ ճնունդ է Հօր Արդի՝ սկսեալ ՚ի Հօրէ, այլ ոչ ՚ի ժամանակի, ապա թէ ոչ անսկիզբն և զնա իմա : Քանզի անսկիզբնաբար սկսեալ է յանսկզբնականն ՚ի Հօրէ, մշանջնաւ որակից գոլով ընդ նմա, որպէս և ասաց նոյն Հայր առ Արդի, թէ « Ընդ քեզ է ինձ սկիզբն աւ ուրց զօրութեան, յարդանդէ յառաջ քան զարուսեակ ճնայ զքեզ » : Օ ի ոչ եթէ ճնունդ է Արդի՝ կրտսր է քան զՀայր, այլ հաւասարակից գոլով Հօր Արդին և Հոգին, պատճառ սահեղով միայն զՀայր, Արդին ճննդեանն և Հոգին սուրբ բղամանն, որպէս արեգակն և ճնունդ լոյսն որ ՚ի նմանէ, և ելումն ճառագայթն յառաջ եկեալ :

1 Մէ օրէն. կրտսր ինչ է այսու : Այլ օրէն. եւ այսու կրտսր է :

Եւ սորին ոչ բողոքովն ՚ի ճշմար-  
 տութիւնն յանգին . զի ըստ և ճառա-  
 գայթ յակն արևուն ազգմունք իմն ա-  
 սաւել են՝ քան թէ անձն առանձինն :  
 Եւ ՚ի Հօրէ ծնեալ Որդին և արտաքս  
 բղխեալ Հոգին ըստ էութեանն միաւո-  
 ըութեան ունին և զյատկու թիւն անձ-  
 նաւորութեանցն . և անձանցն առանձ-  
 նաւորութեամբ են ՚ի մի բնութիւն  
 յեութիւն և ՚ի մշտնջեմաւորութիւն :  
 Վասն որոյ հաւատալի է զնոցն երիս-  
 և մի , մի և երեք : Վասն որում և ՚ի  
 մեղ երեք նախագաղախարիս սոցա խոր-  
 հօբոգ , սրբ ՚ի պատկեր նորին անեղու-  
 թեան գոյացոյք . յաղագս որոյ և ասա-  
 ւածորանն Մովսէս խրատէ՝ թէ հայ-  
 և սոց ՚ի քեզ . և թէ՝ ՚ի գրօշեալք քո  
 հայելով կերպարան աղօտ ինչ՝ և զսկըզ-  
 բնատոյլին առցես զնմանութի : Վանզի  
 յորժամ շորագրեւոցդ քեզ բաղկացու-  
 թիւն յանհասութեան մնացեն , զսրբ-  
 զըն և զանբաւանդակելի էութիւնն մի  
 ժանցես բողոքինդրել և խկապէս հա-  
 սու լինել : Արդ այնքան առ անհասա-

նելին մատիցես , որքան յօրինակէդ որ  
 'ի քեզ՝ նիւթ հասման ընդունիցիս : Օր  
 ըստ որում 'ի բանականդ քո հոգւոյ՝  
 միտքդ ճնունդ է իբր 'ի Հօրէ , և բանդ  
 բղխումն իբր յազքերէ , այսպէս Որդի  
 ճնունդ գոլով 'ի Հօրէ և Հոգին սուրբ  
 բղխումն առ 'ի նմանէ :

Այլ օրինակն սկսեալ և դադարեալ ,  
 միանգամայն և հասումն և ցնդումն ըն-  
 կալեալ . և ճշմարտութիւնն թէպէտ  
 սկսեալ , այլ անսկզբնաբար և անժամա-  
 նակապէս Որդի ճնեալ 'ի Հօրէ , և Հո-  
 գին սուրբ մշտնջենաւ որաբար բղխեալ  
 'ի նմանէ : Այս ոմն առաջին և ոմն վեր-  
 ջին , և ոչ ոմն 'ի նոցունց 'ի ստորև կամ  
 գեր 'ի վերոյ , այլ հաւաստրապատիւք  
 և զուգափառք : Այս ոմն յաջմէ և միւսն  
 յահեկէ , զի այս տեղւոյ է դբութիւն և  
 սբարունակումն , այլ անվայրափակ բը-  
 նութիւն , միանգամայն և անտեղիք , և  
 յորոց տեղիքն՝ զիմրդ տեղեօք բաժա-  
 նին . և երևին ինքեանք յինքեանս և յա-  
 մենեսեան . սակոյն յեղեալքս այլոց  
 դաբար քան որպէս յինքեանս , զի առ

միմեանս էութեամբ և բնութեամբ և  
առ մեզ ողորմութեամբ, բաւանդակն  
նոցա աջակողմ, և բողորն առ նոսա դէմք  
և տեսութիւն : Այլ ասացեալն 'ի գիրս՝  
“Նիսա ընդաջմէ իմմէ” , և թէ՛ “Նստաւ  
ընդաջմէ մեծութեանն 'ի բարձունս” ,  
և անօրինական մարդեղութեան Արդւոյ,  
և համագոյութեան ընդ Հօր է յայսնաւ  
բանութիւն :

Քանզի սրբոյ թագաւորականի Եր-  
րորդութեն ամենայն ինչ հասարակ է .  
էութիւն մի է երից , և մի բնութիւն  
և մի կամք և մի ներգործութիւն և մի  
փառք և մի զօրութիւն , և այլ որ ինչ  
միանգամ այսպիսիք՝ զոր հասարակաբար  
զմի մի յայտցանէ իւրտքանչիւր որ 'ի նօ-  
ցանէ ունի : Յաղագս որոյ անբաժա-  
նելիք և ընդ միմեանս միացեալք տե-  
սանին . ոչ ինչ 'ի նոցանէ թափուր և  
ոչ պարունակսղք նոցա : Արդւով Հայր  
տեղեկացեալ , և Հոգւով Հայր և Արդի  
ճանուցեալ , և նորումք նորին իմացեալ ,  
լստ այնմ թէ՛ “ Ի քէն է տէր աղբիւր  
կենաց , և լուսով քով տեսանեմք զոյս” :

այսինքն որդւոյն հոգին տեսեալ զիե-  
 նաց աղբիւրն որ 'ի հօրէ բղխեալ : Աւ-  
 հայր որդւոյ և աղբիւր լուսոյ հոգւոյն  
 անժամանակեաց գոլով սկիզբն , պատ-  
 ճառ նոցա՝ և ոչ ինքն 'ի նոցունց և ոչ  
 յայլմէ պատճառէ : Քանզի հայր ան-  
 սկիզբն է և անսրտաճառ , և որոց յինքե-  
 նէն՝ սկիզբն է և պատճառ : Այլ վասն  
 այսորիկ Արդի և Հոգի սկսեալք են 'ի  
 հօրէ , զի մի երեք անսկզբունք իմացին ,  
 և կամ յայլ սկզբանց երեւեալք , կամ  
 յայլոց սկզբունք գտեալք , իբրու թէ  
 հայր՝ Արդւոյ հայր , և Արդին՝ այլում  
 սկզբան , և Արդին հօր՝ դարձեալ հայր  
 այլոց : Քանզի այս յոլով սկիզբն երեւե-  
 ցուցանէ տարբերս 'ի միմեանց , որ է  
 բազմաստուածութի կամ անաստուա-  
 ծութիւն :

Այլ և ոչ 'ի միասին ընկալեալ յառա-  
 ջարկելոյն զանցնիւր յատուկսն , կամ  
 անկարգաբար մի զմիոյ առանձնաւորու-  
 թիւն , կամ շիտթութիւն կամ փոխար-  
 կութիւն առ միմեանս և լուծումն յի-  
 րեարս : Իբրու թէ հայր լինել երբեմն

որդի, և որդին հայր, և հայր հոգի,  
 քանզի սցա ոչ է՝ ՚ի փառաւոր Երրորդ  
 դու թիւնն. սյլ բնդ առանձնաւ որու  
 թեանցն յատկու թիւն՝ է և բնու թեանն  
 միու թիւն, որպէս զի անձնաւ որու թեցն  
 անշիտթու թիւն երևեացի, և մի բնու  
 թեամբն անձաւ միու թին հս չտկեացի:  
 Այլ և մի իմն սկիզբն ծանուցեալ լիցի.  
 քանզի թեպէտ հաւասար Հօր մշտնջե-  
 նաւ որու թեամբ էու թեամբ և ասու  
 ձածու թեամբ զոն Որդի և Հօգի, սա-  
 կոցն սխեալք են ՚ի Հօրէ միոց սկզբա-  
 նէ, և այն անսկիզբն՝ կատարեալ ՚ի կա-  
 տարելագուսէն, նոյնապատկերք և հա-  
 մագոյք.՝ միական Երրորդու թիւն և  
 երրական միու թիւն: Սի Աստուած է-  
 առանձնական դիմօք երկրպագեալ փա-  
 աւսրեմք, անեղ, անմարմին, և մշտն-  
 ջենաւօր, բարի բնաւոր և որ ինչ միան-  
 գամ ՚ի բարեացն իմացեալ. արարիչ,  
 անախժան և անխոխոխելի տէրու թիւն.

1 Սէ օրէն. ՚ի փառս անձնաւորու թեանցն յատկու թի  
 է և ՚ի բնու թե... անձնաւորու թիք անշիտթ երևեացի:

2 Սէ օրէն. Սի աստուածն:

և այլ ամենայն այսպիսիքս հաւատարբ  
 երկցն իմանին : Օ ի որ ինչ էութեան  
 են և բնութեան, զոյգ և միաբար երկցն  
 են և ասին . իսկ որ ինչ յատուկք են և  
 առանձինն , անձանցն միայն են և ան-  
 ուանին . որպէս Հայրն անձին և անբա-  
 կիղքն և անսրտածառ միայն ինքն է , ոչ  
 ունեւով զայս Որդին և Հոգին . և Որ-  
 դին՝ ծնունդ և որդի , և ոչ բղխումն  
 և Հոգի . ըստ որում և ոչ Հոգին՝ որդի  
 և ծնունդ . քանզի այս է յատկութիւն  
 երկց անձնաւորութեանցն :

Եւ ընդէր արգեօք ոչ ըստ երկց ան-  
 ձանցն է երիս աստուածութիւն : Մի-  
 տելի է՝ զի անձնաւորութեամբն սրբիմք  
 կերպարանին յատկութեամբք . Հայր  
 անձին և անսկիզբն . Որդի ծնունդ և  
 սկսեալ . Հոգին բղխումն : Եւ այսորիկ  
 ոչ են էութիւն և բնութիւն , այլ յէ-  
 ութեան և ՚ի բնութեանն են յատկու-  
 թիւնք և առանձնաւորութիւնք . վասն

1 Երէ օրին . Ոչ գողով այս հոգի : Ոչ հայրն ծնունդ  
 և որդի , և ոչ բղխումն և հոգի , ըստ որում և ոչ որդին  
 հոգի և ելումն :



որոյ և երեք են : Իսկ էութիւն և բը-  
նութիւն յոր սոքա են՝ մի են , վասն ո-  
րոյ և աստուածութիւն մի է . քանզի  
աստուածութիւն երրորդութեանն է-  
ութեան է՝ որ մի է , և ոչ անձնաւո-  
րութեան՝ որ երեք : Վանզի ոչ հայրու-  
թեանն և որդիութեան և հոգիութեան ,  
կամ անձնելութեան և ծնելութեան և  
ելողութեան է աստուածութիւնն , այլ  
միայ էութեան է աստուածութիւն՝ յորս  
անսեպ է երեք այս անանձնաւորու-  
թիւնք և յատկութիւնք . վասն որոյ և  
մի է աստուածութիւնն , զի մի է էութ-  
թիւնն՝ որ է աստուածութիւն , և ոչ  
երեք աստուածութիւն ըստ անձնաւո-  
րութեանցն երից . որ և ոչ են էութ-  
թիւնք անանձինք , այլ՝ մի էութեան  
անանձնաւորութիւնք : Միանգամայն  
և ժամանեալ ան կատարեալն թիւ՝ այս-  
ինքն յերրորդութիւն . զի Աստուած կա-  
տարեալ է , վասն որոյ և երրորդութիւն է .  
ըստ որում ասէ աստուածաբանն՝ թէ  
“ Միակին շարժեցելոյ մինչև յերեա-

կընն, այսինքն Հայր 'ի ծնունդ Որդւոյն՝  
 եկաց մինչև յերբեակն 'ի բզխումն Հո-  
 գւոյ : Ասի միակն շարժեալ, զի մի նը-  
 ւազու թիւն յաստուածու թիւնն գտցի :  
 Եւ յերկեակն ոչ դադարեաց, զի մի աս-  
 տուածու թիւնն նիւթ և անսակ կար-  
 ծիցի, զոր ոմանք 'ի հելենացւոցն դան-  
 դաչեցին : Եւ քան զերբեակն ոչ առա-  
 ւելաւ, զի մի բաղմաստուածու թիւն  
 նա համարեալ լիցի. այլ յերբեակն ե-  
 կաց նա, որովք զկատարելութիւն նորին  
 իմանամք : Օ ի երբեակն սկիզբն ունի  
 մէջ և կատարած, զոր ոչ որ 'ի թուոցն  
 ունի զայս ձև. զի թէպէտ գոն յայլ  
 թիւան մէջ և եզերք, այլ ոչ իբրև զե-  
 րիսն, որոյ մէջն և սկիզբն և եզրն լո-  
 միութիւն ունին : Քանզի միութիւն է  
 յերիսն, և երեքն 'ի միութիւն. որպէս  
 մի աստուածութիւն է յերիս անձինս,  
 և երեք անձինք են 'ի մի աստուածու-  
 թիւնն, ըստ որում և Պղատոն ասաց 'ի  
 բանիցն Պիւթագորայ, թէ « Աստուած  
 հրեշտակք և արարածք՝ անսկիզբն և ան-  
 վախճան, սկիզբն և անվախճան », որ է

սուրբ Երրորդութիւնն ՚ի մի բնութիւն :  
 Անկիզբն և անվախճան Հայր , սկիզբն  
 և անվախճան Արդին , անժամանակ ըս-  
 կեսալ ՚ի Հօրէ և անվախճան ընդ Հօր .  
 սկիզբն և անվախճան Հոգին , աներբ ըս-  
 կեսալ ՚ի Հօրէ և անվախճան իբրև ըզ-  
 Հայր , որ է վախճան և կատարումն նր  
 Երրորդութեանն : Օ ՚ի այսպէս և Քար-  
 սեղ ասէ ՚ի վեցօրեայն զՀոգին սուրբ :

Արդ եթէ Արդին և Հոգին ճնունդ  
 միայն էին , կամ բղխումն միայն , Հայր՝  
 և որդիքն երկու՝ մի էին , որովք մի աս-  
 տուածութիւնն երկուութիւն լինէր և  
 ոչ Երրորդութիւնն՝ որովք կատարելու-  
 թիւն աստուածութեանն . զի երկու  
 ճնունդն մի իմն էին , կամ թէ երկուքին  
 բղխումն ընդ մի համարեալ էին : Աւ-  
 վան այնորիկ Արդին ոչ է բղխումն ՚ի  
 Հօրէ իբրև զՀոգի , և ոչ Հոգին ճնունդ  
 իբրև զԱրդի , զի մի մարմնական ազգա-  
 կանութիւնն անդ գտցի՝ երկածին և եղ-  
 բարք երևեալ : Մտ որում և ոչ Արդի  
 ՚ի Հոգւոյն ճնեալ իբր ՚ի Հօրէ , կամ

Հոգի յՈրդւոյ բխեալ, զի մի թուուենք  
 անտանօր իմասցին: Այլ որպէս Հայր մի-  
 այն ճնօղ, նոյնպէս և Որդին միայն ծը-  
 նուենդ, և Հոգին միայն բղխումն: Յազա-  
 ւըս սյսորիկ և Որդին միածին կոչի վասն  
 չորից իրաց: Առաջին այն՝ զի միայն ծը-  
 նուենդ է Հօր, և ոչ ճնօղ այլոց, որպէս  
 և Հայրն ճնօղ նմին՝ և ոչ ինքն ճնուենդ  
 այլոց: Երկրորդ՝ կոչի միածին՝ զի միայն  
 ճնուենդ նա է Հօր և ոչ այլ ոք, զի թէ-  
 պէտ Հոգին ևս ՚ի Հօրէ է, սակայն բրդ-  
 խումն և ոչ ճնուենդ: Երրորդ՝ ասի մի-  
 ածին՝ զի ամենայն ճնուենդ յերկուց լինի,  
 իսկ նա միայն է այնպիսի ճնուենդ որ ՚ի  
 Հօրէ միայն ճնեալ է անմայր, որպէս  
 յերկրի անհայր ՚ի կոյս մօրէ: Չորրորդ՝  
 զի ամենայն ճնօղ առաջին է քան զիւր  
 ճնուենդն, իսկ աստ մի է ճնեալն և ծը-  
 նօղ, համագոյք և մշանջենաւորակիցք:  
 Յորս տարակուսին սմանք, թէ զիարդ  
 է հաւասար լինել ճնօղին և ճննդոյն  
 իւրոյ, քանզի նոյն ինքն հայր անուենդ  
 ՚ի յիշելն երևեցուցանէ երիցագոյն գոլ-  
 քան զորդւոյն, թէ և դոյզն ինչ ժամա-

նակ առցես, զի որչափ և հեռագոյն և  
անժամ և անհաս զսոյն ասիցես, հայր  
երիցագոյն երևի քան զորդին :

Կիտեղ արժան է զի այսպիսի կարծիք  
ի վերայ նիւթական բնութեա դուանի,  
և առ մերս հայր և որդի երևի : Քան  
զի որ առ մեզս հայր՝ յայլմէ ու մեմնէ է  
և սկիզբն ունի զիւրն հայր, և երբեմն  
որդի միայն է հօր իւրոյ, և ապա յետոյ  
առնու զհայրութիւնն ՚ի վերայ որդւոյ  
իւրոյ : Վասն որոյ այնչափ հաւասար է  
և ժամանակակից որդւոյ իւրոյ, որքան  
զհայրութիւնն ընկալաւ ՚ի վերայ նորա,  
և այնու զոր մինչ չէրն հայր՝ երիցագոյն  
է քան զորդին իւր : Առ աննիւթական  
բնութիւնն ոչ այսպէս, քանզի հայր  
Աստուած ոչ յայլմէ ու մերէ սկսեալ է, և  
ոչ երբեմն այլոյ որդի եղեալ և զհայ-  
րութիւնն յետոյ ստացեալ, այլ է միշտ  
հայր, և յայանի է այս՝ զի որդւոյն է  
հայրն հայր : Արդ եթէ նա է միշտ հայր  
և որդւոյն է հայր, ապա և որդին մըշ-  
տանջեանաւ որակից է նմա, որով է նա միշտ  
հայր : Իւր դարձեալ, վասն այնորիկ նա

միշտ հայր , քանզի Աստուած է . և Աստուած զոր ինչ է և ունի , միշտ է և ոչ յետոյ ստացեալ , և 'ի թերութենէ ի մեմնէ 'ի կատարելութիւն եկեալ : Աթէ ձայր երէց է քան զՈրդի , յայտ է թէ զայնքան ժամանակս ոչ էր ձայր , և թերի էր 'ի գոլոյն ձայր . և յորժամ եղև ձայր , կատարելութիւն ընկալաւ զհայրութիւնն : Այլ և ս , զի յորժամ ոչ էր հայր՝ այլ իմն էր , և յորժամ եղև հայր՝ յայլ իրս փոխարկեցաւ . միանգամայն և ընդդէմ և ներհակ ինքն ինքեան գըտաւ՝ անհայրութիւնն հայրութեանն : Այլ թերին և յետոյ 'ի կատարելութի եկեալն , և այլայլեալն և ինքն ինքեան ներհակ եղեալն ոչ է Աստուած . վասն որոյ՝ զի ձայր Աստուած է , ամբարշտութիւն մեծ է զայս առ նմա կարգել : Այլ հաւատալ զնա իբրու զի Աստուած է յամենայնի ամենեին ամենակատար , և ոչ 'ի թերութենէ 'ի լիութիւն եկեալ : Այլ գիտել զնա մի և միեղէն զօրութիւն , և ոչ բաժանեալ և այլայլական , այլ խաղաղութիւն 'ի վեր քան

զմիտս և խաղաղարար, և ոչ ներհակ ի մին և ընդդիմակ ինքեան: Այլ հաւատա կազմակերպի ՚ի մեզ ՚ի միշտ հայր զնա հաւատալոյն, և միշտ հայր նա խոստովանեալ, և որդին մշանջենաւ որակից նր մին է հաւատացեալ, զև միշտ որդւոյն է նա միշտ հայր ծանուցեալ: Այլ այսպէս ապես ՚ի վերայ հոգւոյն սրբոյ բղխանն, և հօր բղխողութեանն. քան զև հայր միշտ է բղխող հոգւոյն, յայտ է թէ բղխեալն ՚ի հօրէ հոգին մշանջենաւ որակից է հօր՝ որով է նա բղխեալ:

Այլ թէ ասիցէ ոք, թէ վասն յետոյ ճնաներոյ զորդին և ստանալոյ զհայրութին՝ անկատար և թերի երևէր Աստուած հայր, ապա և զարարածս յետոյ արար, որով և արարիչ ծանուցաւ, միթէ այսու և ս երևեսցի թերի գոլ: Վիտասցէ որ զայսն ասէ, զև արարածք թէպէտ մարմնապէս յետոյ և կին յերևու մն և ստեղծան Աստուծոյ, սակայն իմացականապէս սկզբնատիպք և յարացոյցք սոցա մշանջենաւ որապէս էին առ Աստուած ՚ի կանն նորա՝ որով նա միշտ ա-

բարիչ . ըստ որում Մովսէս ասէ , թէ  
 “ Արար Աստուած զամենայն բանջար  
 վայրի մինչև լեալ էին , և զամենայն խոտ  
 վայրի մինչև բուսեալ էին ” : Տեսանէ՞ս  
 զի մինչդեռ չև ևս եղեալ էին՝ արարեալ  
 էր զնոսա Աստուած , այսինքն զսկիզբն  
 սոցա և զամենայն արարածոց . քանզի  
 Աստուած միշտ է արարիչ :

Գարձեալ՝ արարչու թիւն յսնու թին  
 ոչ իբրև զհայրու թիւնն , զի հայրու թին  
 առանձնաւ որու թէն է՝ և արարչու թին  
 բնու թեանն . զի հայրու թիւնն հօր մի-  
 այն է և ոչ որդւոց և հոգւոց , զի հոգի  
 և որդի ոչ են հայր , որպէս և հայր ոչ  
 է որդի և հոգի . իսկ արարչու թիւնն  
 հօր և որդւոց և հոգւոցն է , զի հայր և  
 որդի և հոգի համազօրք են արարչու  
 թեամբ : Օ՛ր արարչու թիւնն աստուա-  
 ծու թէն է , այսինքն արարչու թիւնն մի-  
 ու թեանն է՝ որ յերիս անձնաւ որու թիւն  
 է . և հայրու թիւնն և որդիու թիւնն և  
 հոգիու թիւնն երից անձնաւ որու թէցն  
 է՝ որ ՚ի միում բնու թեանն և յաստուա-  
 ծու թեանն է :



Մի վասն զի զհայրութիւնն հօր և  
 զորդիութիւնն որդւոյն և զեւրդու-  
 թիւնն հօգւոյն միշտ գոլ ասացաք ,  
 բնութիւն զայն նոցին համարեսցիս :  
 Օյ անձնելութիւնն հօր , և ծնելու-  
 թիւնն որդւոյ , և եւրդութիւն հօգւոյն  
 ոչ է բնութիւն նոցին , զի բնութիւն  
 երկնն մի է , այլ այսորիկ յատկութիւնք  
 առանձնաւորութեանցն են 'ի մի բնու-  
 թիւնն : Օյ եթէ զայսոսիկ բնութիւն  
 դիցես Աստուծոյ , յերկուս ամբարշտու-  
 թիւնս հասանիցէ անկանել . կամ երիս  
 բնութիւնս զնոյն ասել ըստ երկց կոչ-  
 մանցն , և զնոյն իմանալ ընդդիմակս մի-  
 մեանց՝ որպէս անձինն և ծնեալն և ե-  
 լումն , զի այսորիկ ձայնք ընդդիմակք են  
 միմեանց , վասն որոյ ներհակութիւն  
 և ընդդիմութիւն 'ի փառաւոր սուրբ  
 Երրորդութիւնն երեւի , թէ անձինն և  
 ծնեալն և բղխումն բնութիւն 'ի նոսին  
 ասացի . զի թէ անձնելութիւնն բը-  
 նութիւն է՝ և նա Աստուած է , զի աս-  
 տուածութիւնն բնութեանն է , յայտ է  
 թէ ծնելութիւնն ոչ է աստուածութիւն ,

զի ընդդէմ է անձնելու թեանն . և թէ  
 ծնելու թիւնն բնու թիւն է՝ Աստուած է ,  
 անձնելու թիւնն ոչ է Աստուած . նոյն-  
 պէս և ելումն . և այսպէս երեքեանն զըր-  
 կեալ լինին յաստուածութեն անձինքն՝  
 յորս այսոքիկ են : Այլ կամ թէ մի բնու-  
 թի ասիցես սուրբ Երրորդութեն, և զան-  
 ծնելու թիւնն և զձնելու թիւն և զելումն  
 բնու թի ասիցես, և մի բնութիւն է նո-  
 ցին, ապա և փոփոխումն ՚ի միմեանս  
 ընկալցին, որպէս թէ անձինն հայր եր-  
 բեմն լիցի և որդի և ծնունդ, և նա հայր,  
 նոյնպէս և հոգին : Ապա թէ այսոքիկ ան-  
 տեղի են և ամբարշտութիւն յոյժ, կամ  
 հակառակս աստուածս ասել, կամ ՚ի մի-  
 մեանս փոխարկեալս, ուրեմն ուղիղ դա-  
 ւանութիւն է զձնելու թիւնն և զանձը-  
 նելու թիւնն և զելողութիւնն և զայլ  
 այսպիսի կոչմունս առանձնաւորութեցն  
 ոչ բնութիւն ասել, այլ ՚ի մի բնու-  
 թիւնն յատկութիւնք առանձնաւորու-  
 թեանցն : Այլ զասել միաձնին՝ թէ « Հայր  
 իմ մեծ է քան զիս », մի ըստ բնու-  
 թեանն համարեցիս՝ այլ ըստ պատճա-

ուին, զի ծնօղ է որդւոյ և բղխօղ հոգւոյ,  
 որք են մի բնութիւն . վասն որոյ սրաւ  
 ճառին է մեծն և ոչ էութեանն զանա-  
 զանութեան և օտարութեան : Քանզի  
 մեծն և ս առաւել զէակցութիւնն յայտ  
 առնէ . զի մեծն ոչ երբէք ՚ի վերայ այլ  
 և այլ էութեան ասին, այլ ՚ի վերայ միոյ  
 և նոյն էութեան . քանզի ոչ ոք ասիցէ  
 մարդ քան զձի մեծ, կամ զարծիւ քան  
 զփիղ . այլ մարդ քան զմարդ մեծ, և  
 ձի քան զձի մեծ : Այլ թէ էութեանն  
 զմեծն հօր համարեցիս, ո՞ւր դիցես զա-  
 սացեալն վասն որդւոյ՝ թէ «Ան կալցուք  
 մեծին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրի-  
 ստոսի» . և զայն թէ «Մեծ է տէր (այս-  
 ինքն հայր), և մեծ է զօրութիւն նորա,  
 (այսինքն որդի, քանզի Քս է Աստուծոյ  
 զօրութիւն) . և իմաստութեան նորա՝  
 (այսինքն հոգւոյն սրբոյ) ոչ գոյ չափ» :  
 Այլ կամ վասն որդւոյ Երեմիա ասէ, թէ  
 «Սա է Աստուած մեր, ընդ որում ոչ այլ  
 ոք համարեցի . յետ այսորիկ ՚ի յերկրի  
 երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ» .  
 միթէ որդի միայն է Աստուած, և կամ վս

յերիսն մեծն ասելոյ՝ այլ և այլ աստուածք  
իցեն : Աստի Քրիստոս զմեծն հօր վասն  
պատճառին ասաց , և զէութեանն և  
զբնութեն միաւորութիւն յայտ արար  
ասելով . « Ես և հայր իմ մի եմք » :

Վիտել արժան է թէ անձնաւորու-  
թեանցն յատկութիւնքն ոչ քակուէ ըզ-  
բնութեանն միաւորութիւն , և ոչ այլ  
ցուցանէ զբնութի որդւոյ , զի ճնունդ  
է , և հոգին բղտումն : Օ՛ի ահա Եւա  
յԱգամայ է՝ այլ ՚ի կողէ , և Աբէլ յու-  
րովայնէ Ագամայ , սակայն մի են բնու-  
թիւն նորա և Ագամ՝ յորմէ նորին , և  
ոչ եղբարք միմեանց Եւա և Աբէլ , թէ-  
պէտ և ՚ի միոյ պատճառէ էին յԱգամայ .  
որպէս և ոչ որդի և հոգի եղբարք՝ պատ-  
ճառք մի իմն ունելով զհայր :

Ինդրելի է և զայս , թէ որդի ճնունդ  
դուով հօր՝ դադարեաց , թէ դեռ ևս  
ճնանի : Վիտել արժան է թէ և ոչ զմի  
որ յայտցանէ պարտ է իմանալ . զի թէ  
դադարեալ որ ասէ ՚ի ճնանելոյ , յայտ է  
ասպա՝ թէ և սկսաւ , զի ամենայն դադա-  
րումն ՚ի սկսմանէ է : Վասն որոյ թէ-

պէս որդին Աստուծոյ ՚ի հօրէ Աստու-  
 ծոյ ծնեալ, այլ անսկզբնաբար և անժա-  
 մանակ, ոչ ունելով սկիզբն, վասն որոյ և  
 ոչ դադարումն : Այլ թէ տակաւին ևս  
 ծնանի, ահա իբրև զանկատար որ յան-  
 դիմանի որդի. և անկատարն զիմօրդ յաս-  
 տուածու թեանն դտցի : Այլ հաւատա-  
 լի է զնա ծնունդ հօր միշտ, և հոգին  
 սուրբ բղխումն միշտ, ոչ սկսեալք և  
 ոչ դադարեալք : Այլ այսպիսիքս են ա-  
 նապատան հարցմունք, զոր թէ հար-  
 յանիցէ որ, ժամանակ ՚ի ժամանակի՞ ե-  
 ղև՝ թէ յոչ ժամանակի, զի թէ ՚ի ժա-  
 մանակի, զի՞նչ արդեօք էր այն այլ քան  
 զայս ժամանակ. և թէ յոչ ժամանակի,  
 զիմօրդ լինէր ինչ, և այն ոչ ՚ի ժամանա-  
 կի : Այլ թէ հուպ էիր քեզ յորժամ ե-  
 ղեր, և այժմ մերձ ես քս թէ ոչ, զի թէ  
 մերձ էիր քեզ, ապա երկուք ոմանք ես  
 դու, և թէ ոչ ես մերձ քեզ, ապա օ-  
 տար ես դու քեզ ինքեան : Այլ այլ թէ՛  
 զէ՞ն ծնաւ՝ թէ զոչէն, զի թէ զէն՝ ա-  
 պա զիմօրդ ծնանէր զոր էրն, և թէ զոչ-  
 էն՝ ապա յետոյ է ծնօղն քան զծնեալն :

Նոյնպէս և այս, թէ դադարեաց՝ թէ դեռ ևս ճնանի, և թէ կամօք հօր ճնաւ զորդի՝ թէ ոչ, զի թէ ոչ կամօք, ապա բռնադատեալ իմն է հայր, և բռնադատեալն ոչ է աստուած, յայտ է թէ և ճնեալն յայնմանէ ոչ է աստուած, և ոչ նա ևս է աստուած, և թէ կամօք՝ յայտ է թէ կամացն է ճնունդ որդի և ոչ հօր, և այլ ոմն է հայր որդւոյ՝ կամքն հօր քան զհայր :

Նոր իմն խնդիր շարժեալ եղև յսմանց, թէ զի հայր և որդի առինչք են, զմիմեանս ՚ի մէջ բերեն և առ իրեարս հակադարձին, ըստ որում և է սահման առընչին, թէ առինչք ասին որ ինքեանք որ ինչ են՝ այլոց գոլ ասին, վասն այսորիկ զի հայրն որդւոյ է հայր, և որդին հօր է որդի, և հօգին ոչ այսպիսի ինչ ասի, օտար ոմն է ՚ի հօրէ և յորդւոյ :

Վիտելի է, զի այսորիկ անուանք ոչ են բնութիւն՝ այլ ՚ի բնութեն. քանզի հայրութիւնն ՚ի հայր ոչ է բնութիւն, և որդիութիւնն յորդին ոչ է բնութի,

այլ 'ի բնութիւնն առանձնաւորութիւնք  
 և յատկութիւնք : Այսն որոյ և հոգին  
 'ի նոյն բնութենէ հօր և որդւոյ գոլով  
 ունի զիւրն յատկութիւն առանձնաւոր  
 րութեան զհոգին գոլ և զելումն . և  
 բնութիւն մի է երիցն , և այսոքիկ 'ի  
 միում բնութեանն են : Այս թէ զայս  
 սոսիկ բնութիւն համարեցի որ , սերե-  
 մըն որդի հօր՝ ասի բան զօրութիւն և  
 իմաստութիւն . ընդէր ոչ հակադարձի  
 և հայր ասել որդւոյն՝ բան և իմաստու-  
 թիւն և զօրութիւն : Իսկ թէ առաքա-  
 կան առ ընչիւն վարեցին յայս՝ ասե-  
 լով, թէ իմաստութիւնն իմաստնոյն է ի-  
 մաստութիւն , և իմաստունն իմաստու-  
 թեամբ է իմաստուն , գիտացեն՝ զի այս  
 մարմնականացս է և ոչ անմարմնոց . և  
 որք զայս ասեն , 'ի բաց բառնան զէու-  
 թիւն , զի ըստ մեզ իմաստութիւնն և  
 բանն ոչ են էութիւն՝ այլ պատահումն :  
 Արոց և մեք պատասխանեցուք մարմնա-  
 պէս նոցա , թէ ըստ այդմ՝ և հոգին հո-  
 գեւորի է հոգի , և հոգեւորն հոգւովն է  
 հոգեւոր , զոր 'ի վերայ աստուածութեն

անհնար է առնուլ: Քանզի թէպէտ է-  
ակիցն և փառակիցն և այլ այսպիսիքս  
հակադարձին առ իրեարս, զի էակիցն  
ուրումն է էակից, և փառակիցն ուրու-  
մըն է փառակից, սակայն ոչ ամենայն հա-  
կադարձութիւն էակցութե՛ք է նշանակ,  
յաղագս այնորիկ հոգի ասի հոգին՝ ոչ  
ունելով առ հայր և որդի զանդրագար-  
ձութիւնն՝ որպէս առ իրեարս նոքին: **Ս**  
այսպիսի ձայնք բնութիւն կարծես  
ցին, այլ յատկութիւնք ՚ի մի բնութե՛ն,  
քանզի հայր և որդի և հոգի ասի յա-  
ղագս ամբողջ պահելոյ զերիս անձինս  
՚ի մի բնութեանն:

Խնդրելի է, թէ զհայրն միայն սրարտ  
իցէ համարել Աստուած վասն ասելոյն  
Քրիստոսի, թէ « Հայր տուր նոցա՝ զի ծա-  
նիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած »:  
Վիտելարժան է, թէ զկնի ասելոյն. « Զի  
ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստ-  
ուած », ՚ի վերայ բերէ՝ թէ « Եւ զոր առա-  
քեցեր զՅիսուս Քրիստոս »: Եւ որս ա-  
սեն ոմանք, թէ էր ոչ ասաց՝ թէ և զոր  
առ քեցերդ զՅիսուս Քրիստոս կամ ըզ-



ատէր, այլ լրի զիւր անունն զՅիսուս Քրիստոս: Արոյ սրտասխանի տացուք նախ զայս ինչ, թէ ամ որ որ ճշմարիտ չէ, նա սուտ է. և որ սուտ է, չէ այն ինչ զոր կոչի: Արդ յորժամ դտանիցեմք և զորդի Աստուած քարոզեալ, միթէ սուտ Աստուած պարտ իցեմք զնա կարծել և ո՞չ ճշմարիտ, ապա և զվկայութիւնս ՚ի մէջ առցուք, որովք որդի Աստուած քարոզի: Եսայիաս գրէ՝ թէ «Մանուկ ծընաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ անունն կոչի Աստուած հզօր»: Եւ դարձեալ թէ «Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի, որոյ անունն կոչի Կամանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած»: Արդ եթէ Աստուած է որդի, որպէս գիրն վկայէ յասելն Յովհաննու, թէ «Իսկզբանէ էր բանն և Աստուած էր բանն», յայտ է թէ և ճշմարիտ Աստուած էր. ըստ ուրում նոյն Յովհաննէս ասէ, թէ «Եւ եմք ճշմարտի որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի». զի ճշմարտին հօր՝ ճշմարիտ որդի է նա, որպէս ինքն ասէր, թէ «Ես եմ ճշմարտութիւն և կեանք». և

առ ճնէ կոյրն ասէր . « Դու հաւատումս  
 յորդի Աստուծոյ . և իբրև հարցեալ եւ  
 զև՝ թէ ո՞վ է նա , ասէ Յիսուս . ես եմ  
 զոր տեսանես և խօսիմ ընդ քեզ , որում  
 և հաւատաց և երկիր ետադ : Այլ յոր  
 ժամ հրէայքն կամէին զնա քարկոծ առ  
 նեւ , և զպատճառն ասէ աւետարանիչ  
 չնն , թէ « Զի հայր իւր կոչէր զԱստ-  
 ւած , և հաւասար առնէր զանձն Աս-  
 տուծոյ » . զոր և առ ինքն առ Փրկիչն ա-  
 սէին , թէ « Դու մարդ ես և զանձն քո  
 Աստուած առնես » : Արդ միթէ փախ-  
 եալ և հրաժարեաց յայս կոչմանէ . ոչ  
 արդեօք 'ի բաց վազեաց , այլ առաւե-  
 լապէս հաստատեաց զայն 'ի վերայ իւր ,  
 որով և ասաց՝ թէ « Զնոսա առ որս բա-  
 նըն Աստուծոյ եղև » : Գիրն Աստուած  
 ասէ . « Ես ասացի թէ աստուածք իցէք  
 և որդիք բարձրելոյ » : Իսկ զոր հայր  
 սրբեաց , զայս ըստ մարմնոյն զգեցմանն  
 իմա , և առաքեաց յաշխարհ . դուք ա-  
 սէք , թէ հայհոյեմ՝ զի ասացի թէ որդի  
 Աստուծոյ եմ , որ և 'ի դործոց աստի  
 պարտ էիք ճանաչել , զի որդի Աստու-

ծոյ եմ: Այլ որդի Աստուծոյ ասե՛լն ոչ  
 այլ ինչ ընծայեցուցանէ, թէ ոչ զի Աս-  
 տուած ճշմարիտ իցէ. զի որպէս ՚ի մար-  
 դոյ մարդ, նոյնպէս յԱստուծոյ Աստուած  
 է ծնեալն, և ՚ի կենացն կեանք, և ՚ի  
 լուսոյն լոյս, և ՚ի հզօրէն հզօր. այսպէս  
 Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ  
 է որդի: Այլ զճշմարիտն յիշեաց վասն  
 որսէրոյ զճշմարիտն Աստուած ՚ի ստոյն՝  
 որ են կուռքն: Այլ թէ վասն ասելոյն. « Զի  
 ծանկցեն զքեզ միայն ճշմարիտ Աճ »,   
 զհայրն միայն Աստուած որ կարծիցէ, ա-  
 պա այնպիսին և ՚ի բանիցն Երեմիայի և  
 զորդին միայն համարեցի գոլ Աստուած.  
 քանզի ասէ նա, թէ « Սա է Աստուած  
 մեր, ընդ որում ոչ համարեցի այլ որ.  
 որ ՚ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան  
 չըջեցաւ »: Վասն որոյ իմանալի է ուղ-  
 զափառ մտաց, զի աստուած ու թի՛ն միա-  
 պէս է հօր և որդւոյ և հօգւոյն սրբոյ.  
 զի Աստուած է հայր, Աստուած է և որ-  
 դի, Աստուած է և հօգին սուրբ, ըսա-  
 որում ասաց Պետրոս առ Անանիա, թէ  
 « Ընդ է՞ր ստեցեր հօգւոյն սրբոյ, ոչ ասե-

ցեր մարդկան՝ այլ Աստուծոյ : Եւ Պօղոս  
 ասէ՛ թէ տէր հողին է : Եւ զի երեք ան-  
 ձնաւորութիւնն է Աստուած , յայտ ա-  
 րար ինքն առ Մովսէս . « Ես եմ աստուած  
 Աբրահամու և աստուած Իսահակայ և  
 աստուած Յակովբայ » : Եւ զի ոչ երեք  
 աստուածք՝ այլ մի , ինքն յայանեաց ա-  
 սելոյն Մովսէսի՛ թէ « Ասոց աստուած », ,  
 այս միութեանն . « Արասցուք մարդ ըստ  
 պատկերի մերում և ըստ նմանութեանն » ,  
 այս առանձնաւորութեանն : « Եւ արար  
 Աստուած զմարդն ՚ի պատկեր իւր », այս  
 միութեանն . « Եւ ըստ պատկերի Աս-  
 տուծոյ արար զնա », այս անձնաւորու-  
 թեանն : « Եւ ասէ Աստուած », այս մի-  
 ութեանն . « Ահա եղև Ագամ իբրև զմի  
 ՚ի մէնջ », այս անձնաւորութեանն : « Եւ  
 ասէ Նոյ . օրհնեալ տէր Աստուած , Աս-  
 տուած Սեմոյ », այս անձնաւորութեանն .  
 « Ընդարձակեսցէ Աստուած Յաբեթի », ,  
 այս միութեանն : Եւ վասն աշտարա-  
 կին ասաց Աստուած . « Եկայք իջցուք  
 և խառնակեսցուք զլեզուս շինողացն », ,  
 այս յայանապէս առանձնաւորութեանն է .

“ Եւ էջ տէր տեսանել զաշտարակն զոր  
 շինեցին սրգիք մարդկան ”, այս միու-  
 թեանն է : Եւ Աբրահամու երևեալ  
 Աստուած առ կաղնեաւն մամբրէի՝ իս-  
 կապէս զմիութիւնն իմանամք . և ասե-  
 լովն . “ Ամբարձ Աբրահամ զաչօ իւր  
 և ետես , և ահա արք երեք կային ՚ի  
 վերոյ . բան զնա ”, <sup>1</sup> զերեքանձնեան տէ-  
 րութիւնն հաւատամք . որպէս նոյն ըն-  
 թերցուածն մինչև ՚ի կատարումն զու-  
 ցացս զերից և զմիոյ խօսի : Օ կնի այսմ  
 կարգի ասէ գիրն , թէ “ Տեղեաց տէր ՚ի  
 տեառնէ հուր և ծծումք ՚ի Սողոմ ” ,  
 զանձնաւորութեցն նշանակելով . “ Եւ  
 եղև ՚ի սատակել տեառն զքաղաքն զայ-  
 նոսիկ՝ յիշեաց տէր զԱբրահամ ” , բլ-  
 միութիւնն այսու յայտ առնէ :

Գարձեալ իմանալի է զմի աստուա-  
 ծութիւնն և զերեք անձնաւորութիւնն  
 յայսմանէ , զի հրեշտակն ասաց առ Աբ-  
 րահամ ՚ի զենումն Իսահակայ . “ Յանձն  
 իմ երգնում ասէ տէր ” , այս բան է ՚ի  
 դէմս հօր . և զորդւոյ ասէ Դաւիթ առ

1 Այլ օրէնակ . Չերեք անձնաւորութիւնն :

Աստուած հայր, թէ « քոյ է բազուկ և զօրութիւն » , զոր մեկնէ Պօղոս՝ թէ Քրիստոս է Աստուծոյ զօրութիւն : Եւ եգիպտացիքն ասացին վասն հարուածոյն իւրեանց , թէ « Մատն Աստուծոյ է այս » , որ նշանակէ զհոգին սուրբ , զոր Քրիստոս ասաց յաւետարանին՝ թէ « Մատամբ Աստուծոյ հանեմ զդևս » : Ըրդ անձն և բազուկ և մատն զանազանեալ անուամբ և բաժանեալ մասամբ զերեք անձնաւորութիւնն յայտառնէ զսրբոյ Երրորդութեանն . իսկ զի մի իմն կենդանի է անձն և բազուկ և մատն , այսպէս երեք անձնաւորութիւնն մի իմն են էութիւն և մի բնութիւն և մի Աստուած և արարիչ և այլն ամենայն : Օ՛ ի որպէս բազուկն յանձն , և մատն ՚ի բազուկ և յանձն , այսպէս որդի ՚ի հայր , և հոգին յորդի և ՚ի հայր : Բայտ որում հայր յորդի և ՚ի հոգի՝ որպէս ասաց Քրիստոս , թէ « Դու հայր յիս , և ես ՚ի .քեզ » , այսպէս և Մովսէս ըզմիութիւնն յայանեաց զսուրբ Երրորդութեանն ասելով . « Լուր Իօրայէլ տէր

Աստուած քո տէր մի է », և զասացեալն  
 յինքենէ նոյն ինքն յԱստուծոյ. « Ես եմ  
 որ էնն », վասն մի ութեանն իմանամք :  
 Իսկ զասացեալն Եսայեաւ առ Խորայէլ  
 թէ « Հոգին իմ և բանն իմ որ ՚ի միջի  
 քու մ », յանձնաւ որ ութինն հաւատամք :  
 Նմանապէս և զասացեալն ՚ի Միքիայ՝ թէ  
 « Ոչ մերժեցէ զնախատինսն որ ասաց,  
 թէ տունն իօրայէլի բարկացոյց զհոգին  
 տեառն ». զոր Եսայիաս ՚ի դիմաց մար-  
 գացելոյն գրեաց, թէ « Տէր տէր առա-  
 քեաց զիս և հոգի նորա » : Եւ Գաւիթ,  
 թէ « Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց  
 զմեզ Աստուած Աստուած մեր. Աստուած  
 մեր օրհնեցէ զմեզ » : Եւ թէ « Ասաց  
 տէր ջտէր իմ, նիստ ընդաջմէ իմմէ » :  
 Եւ թէ « Ողորմութեամբ տեառն լի եւ  
 զև երկիր, և բանիւ տեառն երկինք  
 հաստատեցան, և հոգւով բերանոյ նո-  
 րա ամենայն զօրութիւնք նորա ». այս  
 է որդւով, զի Քրիստոս է Աստուծոյ ի-  
 մաստու թիւն՝ ասէ Պօղոս : Եւ Սողոմոն,  
 թէ « Աստուած իմաստութեամբ հի-  
 մուս էարկ երկրի, պատրաստեաց զեր-

կինս խորհրդով, և հանձարով իւրով  
 զանդուենդս պատառեաց, այսինքն հս-  
 փւով սրբով: Օր և Մովսէս համազօր  
 սոցին ասաց. «Իսկզբանէ արար Աստուած  
 զերկինս և զերկիր», այս է հայր: «Եւ  
 հողի Աստուծոյ շրջէր 'ի վերայ Զուրց'»  
 կենդանաճնելով զարարածս: «Եւ ասաց  
 Աստուած եղիցի լոյս», որ է որդի, որ  
 պէս ասաց Երեմիաս՝ թէ «Կոչեաց ըզ-  
 լոյս և լուաւ նմա դողու թեամբ, սա  
 Աստուած՝ որ յերկրի երևեցաւ»: Եւ  
 Սողոմոն ասէ. «Զի՞նչ անուն է նորա,  
 և զի՞նչ անուն որդւոյ նորա:

Այսոքիկ ամենեքեան և որ այլ 'ի  
 սոցնս յարին՝ զերեք անձնաւորութիւն որ  
 'ի միում բնութեն և անձութեն է՝ յայտ  
 առնեն: Իսկ ասելն՝ թէ «Բան ան որ եղև  
 առ Եսայի. — և պատգամն Աստուծոյ որ  
 եղև 'ի վիճ Երեմիայի, — և առած տես-  
 ուքն առ Նաւում եղիեօացի, — և այս  
 պէս ասէ տէր ամենակալ». այսոքիկ ա-  
 մենայն զմի աստուածութիւնն և զմի  
 տէրութի՛ն որ յերեք անձնաւորութիւնն  
 փառաւորեալ երրորդութեանն է՝ յայտ



առնեն : Սոր Եսայիաս յայտնապէս 'ի Սերովբէիցն ուսեալ վարդապետեաց եկեղեցւոյ զասացեալն . « Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեց » . երկոյս սուրբ ասելովն զերեք անձնաւորութիւն միոյ տէրութեանն և աստուածութեն յայտնել արարին , և զնոյն մի տէր կոչելովն՝ զմի աստուածութիւնն յերիս անձինս յայտնաբանեցին : Այլ և վեց թև ուլքն իւրեանց զայս մեզ քարոզեցին . երկուքումք թևօքն ծածկէին զգլուխս իւրեանց՝ որ է սկիզբն , ցուցանելով թէ ծածկեալ է սկիզբն խնդրել Աստուծոյ , զի անսկիզբն է : Այլ երկու թևօքն զուարս իւրեանց որ է վերջինն , յայտնելով թէ անվերջ և անվախճանութեան միայն է քննել զնա , և զայն այնչափ՝ որքան բանան Սերովբէիցն թևքն իմանալ երեք անձնաւորութիւն 'ի մի բնութի և աստուածութիւն , և մի աստուածութիւն յերեք անձնաւորութիւնն :

Վիտել արժան է , զի յաղագս անճառ միաւորութեան՝ երեք անձնաւորութի 'ի միում աստուածութե , գիրք սուրբք

անխորապէս և զանուանս անձանցն և զիւրաքանչիւրոց յատուկսն ՚ի վերայ միմեանց ասեն, այսինքն՝ զի հայր միայն է հայր և անսկիզբն, և որդին միայն որդի և ճնունդ, և հօգին միայն հօգի և բղսումն: Սակայն է երբէք զի զհայր հօգի կոչեն գիրք, և զորդին հայր անուանեն, և զնայն հօգի կոչեն, և բղսումն և ս զորդին անուանեն, և զհօգին միածին կոչեն, ոչ եթէ զի շիտթումն կամ այլայլութիւն և ՚ի միմեանս փոփոխումն ինչ ՚ի նոսա ցուցանեն, իբրու թէ հայր երբեմն լինի որդի և հօգի, և հօգին որդի, և այլն և ս: Ի բաց տար զայս պիտի կարծիս. քանզի թէպէտ սուրբ Երրորդութիւնն ՚ի միում աստուածութեան են, զի մի են բնութեամբ և <sup>1</sup> էութեամբ, սակայն յիւրաքանչիւր յանձնաւորութեան յատուկսն <sup>2</sup> անշարժական են և անշփոթ:

Այլ աստուածային գիրք զանուանս միմեանց և զյատուկն յիշէ ՚ի վերայ ի-

1 Եւրի օրէն. Աստուածութեամբ:

2 Մի օրէն. Անշարժ կան և անշփոթ:

րերաց՝ զբողորովիմբ միութիւնն նոցա  
 յայտնեւով, միանգամայն և այլ խմն բար-  
 ձրագոյն խորհուրդս մեզ ուսուցանե-  
 լով, զոր և ասասցուք այժմ: Օհայր հո-  
 գի կոչէ գիրն, ըստ որում Քրիստոս ա-  
 սաց առ Սամարացի կիներն, « Հոգի է Աս-  
 տուած » . ոչ եթէ այսու զհայր ՚ի հո-  
 գի փոխարկիլ եցոյց, այլ եցոյց աշխար-  
 հի ոչ մարմնապէս պաշտել զանմարմինն  
 Աստուած իբրև զհինն Իսրայէլ, որ զու-  
 հիւք և ճենճերօք և այլ նիւթականօք  
 տօնիւք պաշտէր զԱստուած . այլ իբրու-  
 զի Աստուած անմարմին է և հոգի, ան-  
 մարմնաբար և հոգևորապէս պարտ է  
 պաշտել զնա . և այս յայտ ՚ի յաջորդացն  
 է, զի յորժամ ասաց՝ թէ « Հոգի է Աս-  
 տուած », այսինքն աննիւթ և անմար-  
 մին, ՚ի վերայ եբեր՝ թէ « Երկրպագուաց  
 նորա պարտ է հոգւով և ճշմարտութիւ  
 երկիրպագանել », այսինքն անմարմնա-  
 բար և ստուգապէս երկիրպագանել նը-  
 մա: Ալ դարձեալ, թէ ընդ զոր հոգի ա-  
 սաց, երկիրպագանել և հոգւոյն սրը-  
 բոյ և որդւոյն միածնի, զոր ճշմար-

առւթիւն կոչեաց, և զորդի՝ հայր հան-  
 դերձեւոյ աշխարհին՝ ասէ Եսայի, զի ըզ-  
 համազօր տէրու թիւնն որդւոյ ընդ հօր  
 երկնի և երկրի յայտ արասցէ : Օ ի յոր-  
 ժամ լսիցես զասելն որդւոյ վասն մար-  
 մին զգեկոյն, թէ « Յազագս աւուրն այ-  
 նորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշ-  
 տակք և ոչ որդի, բայց միայն հայր » .  
 մի անգիտու թիւն գիցես որդւոյ, և վա-  
 քըս գող քան զհայր . այլ ուսեալ՝ զոր-  
 դի հայր հանդերձեւոյ աշխարհին, այս-  
 ինքն տէր և արարիչ իմասցիս . և զուչ  
 գիտելն զօրն հանդերձեալ և զժամն՝ ար-  
 նօրէնու թեանն ազագաւ բարբառեալ  
 և ոչ անգիտութեան . զի նա հայր և  
 տէր և գիտողէ հանդերձեւոյ աշխարհին  
 և մերձակայիս իբրև զհայր և ընդ հօր :  
 Եւ թէ հայր բերանով Դաւթի ասաց  
 առ որդին իւր միածին . « Ընդքեզ է ինձ  
 սկիզբն աւուրոց զօրութեանց », մի այսու  
 համարեացես՝ թէ և հայր սկիզբն ունի  
 զայլ ոք ինքեան, և ինքն ՚ի նմանէ սկսեալ  
 է և ծնեալ, և հայր և որդի միասցէս  
 սկսեալ են յայլմէ սկզբանէ : Ի բաց լեր

յայսպիսի կարծեացս , այլ իմա՛ զի այ-  
 սու զանժամանակաբար սկսանիլն որդ-  
 ւոյ յանսկզբնականն հօրէ յայտարասցէ ,  
 վասն որոյ 'ի վերայ ածէ՛ թէ « Յառաջ  
 քան զարուսեակ ծնայ զքեզ » , այսինքն  
 թէպէտ սկսեալ ես յինէն ծննդեամբ ,  
 այլ յառաջ քան զարե է անուն քո , և  
 սկիզբն քո ընդիս է մշտնջենաւոր , որ ա-  
 նրակիզբն եմ : Աչ թէ որդին անսկիզբն  
 է , քանզի սկիզբն ունի զհայր , այլև ոչ  
 յետոյ կամ կրտսեր քան զհայր , այլ ընդ  
 անսկիզբն հօր՝ է և սկսեալն 'ի նմանէ մի-  
 ածինն էու թք և մշտնջենաւորու թեամբ  
 սկզբանն ընդ անսկզբանն դուրով : Ալ թէ  
 ինքն Քրիստոս որ ըստ մարմնոյ ծննդեա-  
 նրն և ըստ հոգևորականին խօսէր առ  
 Նիկողիմոս և ասաց , թէ « Ճնեալն 'ի մար-  
 մնոյ մարմին է , և ճնեալն 'ի հոգւոյն  
 հոգի » , մի դու զնա հոգի համարիցիս  
 դու վասն ճնանեւոյն 'ի Մարիամոյ հո-  
 գւով սրբով , որպէս ասաց հրեշտակն՝  
 թէ « Ճնեալն 'ի նմա 'ի հոգւոյն սրբոյ է » ,  
 զի զոյս ոչ յազագս իւր՝ այլ վասն մը-  
 կրքտեւոյն ասաց , թէ 'ի ջրոյ և 'ի հո-

ԳԼՈՅ ՏՆԵԱԼՔՆ ՀՈԳԼԵՈՐՔ ԵՆ Ե ԱՍՏՈՒԱ  
 ՏՁԱՅԻՆՔ : ԱԵԼ ԹԷ ՂՐՐԴԻՆ ՄԻԱԾԻՆ ՂԾԸ  
 ՆԵԱՂՆ 'Ի ՀՕՐԷ՝ ԳՎԵԼԻԹ 'Ի ԴԷՄՍ ՀՕՐ ԲԸԸ  
 ԽՈՒՄՆ ՂՆԱ ԿՈՇԷ , ԱՅՍԻՆՔՆ՝ ՀՕՐ ԱՍԵԼՈՒԼ  
 “ԲԴԼՆԵՍԵՅԷ ՍԻՐՈՒ ԽՄ ՂԸԱՆ ԲԱՐԻ ”, ՄԻ ԱՅ  
 ՍՈՒ ՈՐ ՂՐՐԴԻՆ ՀՈԳԻ Ե ԲԴԼՈՒՄՆ ՀԱ  
 ՄԱՐԵՍԵՅԻ , ՔԱՆՂԻ ՈՐԴԻ ԾՆՈՒՆԴ Է 'Ի ՀՕ  
 ՐԷ , ԱՂ ԱՍԷ ՂՆԱ ՂԻՐՆ՝ յՁԱՐԱԿԱՆ ԱՂԸ  
 ՄԵ ՀՕՐ ԲԴԼՆԵԱԼ ՂԸԱՆ ԲԱՐԻ : ՅԱՂԱԳՍ  
 ԱՅՍՐ ԱԳԱՄՃԱՌԻ՝ ՂԻ ԾՆՈՒՆԴ ԱՆՈՒՆ ԹԷ  
 ԱԷՄ 'Ի ԲՆՈՒԹԵՆԷ Ե յԷՈՒԹԵՆԷ ԾՆՈ  
 ՂԻՆ ՂԾՆԵԱՂՆ ԿՈՒՍԱՆԷ , ՍԱԿԱՅՆ ԱԽԱՄԱ  
 ԼՈՐ ՄԱՍՅ 'ՆԻԼԹԱԿԱՆ ԻՄՆ Ե ԱԽԱՄԱՅԻՆ  
 ԿԱՐԾԻԱ ՄԱՅ , ՎՄԱՆ ՈՐՈՅ Ե ԱՆԱԽԱՄ Ե  
 ԱՆՆԻԼԹ ԾՆՆԴԵԱՆ ՈՐԴԵՈՅՆ ՈՐ 'Ի ՀՕՐԷ՝  
 ՂԸԴԼՈՒՄՆ ԱՆՈՒՆ ՄԵՐՃ ԴՆԷ , ՈՐ ԱՆԱԽԱ  
 ԻՄՆ Է : Օ՛ Ի ԱՆԱԽԱՄԱՐԱՐ ԲԴԼՈՒՄՆ 'Ի  
 ԲԴԼՈՒՄՆ ԵԼԱՆԷ՝ ՍՐԱԷՍ ԶՈՐ յԱՂԸԵՐԷ  
 Ե ԱՄՈՒՂ 'Ի ՏՈՒՈՅ , ՍՐԱԷՍ ՂԻ ԾՆՐՆ  
 ԴԵԱՄՔՆ ՂՐՐԴԻ յԷՈՒԹԵՆԷ Ե 'Ի ԲՆՈՒ  
 ԹԵՆԷ ՀՕՐ ԽՄԱՍԵՅԻՍ , Ե ԲԴԼՄԱՄՔՆ Ա  
 ՆԱԽԱՄԱՐԱՐ ՂՆԱ ԾՆԵԱԼ ՀՄԱՄԱՐԵՍԵՅԻՍ :

1 ՅՕՐԷ՝ԱԷՆ . Ի Հայրականն որոտ բղիեալ բան  
 բարի :

Այսպէս և հողին սուրբ որ բղխու-  
 մըն է 'ի հօրէ, ճնուեող զնա գիրն կոչէ,  
 զի Սողոմօն ասէ վասն հօր, թէ « Ըմե-  
 նեցուն ճարտարասեան իմաստութեան  
 սւտոց ինձ, զի գոյ 'ի նմա հողի մտա-  
 ւոր, սուրբ, միածին », ոչ թէ այսու-  
 զհողին ճնուեող յայտ առնէ, զի նա բլղ-  
 խումն է 'ի հօրէ, այլ զայն կամի նշա-  
 նակել՝ թէ զի բղխումն 'ի բղխողէն թէ-  
 պէտ անախտաբար ելանէ, այլ ոչ զէակ-  
 ցութիւն և զմիութիւն իսկապէս ցու-  
 ցանէ, ըստ որում ջուր յականէ և յաղ-  
 բերէ բղխեալ իբրև հասումն և այլայ-  
 լումն իմն յայտ առնէ : Օ, ի թէ 'ի ջը-  
 րոց անտի զջուրն բղխեալ առցես, զայս  
 երևեցուցանէ միանգամայն, և ոչ անձն  
 սու անձն յատկացեալ գտանի. իսկ թէ  
 յերկրէ զբղխումն առցես զջրոյն, այլ  
 եութիւն իմն է բղխողին և այլ բղխելոյ  
 ջրոյն : Սպասէս և զպատու ճառոց 'ի յե-  
 տութենէ նոցին համարեցիս գոլ, սա-  
 կայն այլ և այլ իմն են նորա ըստ համոց  
 և ըստ որակութե՛ն : Վասն որոց զի սակաւ  
 այս օտարութիւն գտանի 'ի բղխումն և

'ի բղխողն , սակս այնորիկ բղխեցելոյն  
 յէու թենէ հօր հոգւոյն սրբոյ մերձ դնէ  
 գիրն զմիածինն անուն , զի ցուցցէ՝ թէ  
 հոգին սուրբ իբր զճնունդ է բղխեալ 'ի  
 բղխողէն իւրմէ 'ի հօրէ , որպէս զի բղխե  
 մամբն զանախտաբար ելու մն 'ի հօրէ հո  
 գւոյն սրբոյ իմասցիս , և ճննդեամբն ան  
 դուստ յէու թենէ և 'ի բնու թենէ հօր  
 բղխեալ զնա հաւստաացես : Յաղագս  
 այնորիկ 'ի բնու թենէ հօր ճնեալ սրգ  
 ւոյ զբղխումն մերձ դնէ՝ զանախտաբար  
 ճնունդն յայտնելով , և անախտաբար  
 բղխելոյն 'ի հօրէ հոգւոյն զճնունդն յա  
 բաղրէ՝ զառ 'ի յէու թենէ և 'ի բնու թէ  
 հօր հոգւոյն զբղխումն ցուցանելով :

Փառաւորեալ և սրաշտելի սուրբ Եր  
 բորդու թեանն և միոյ աստուածութեն  
 այսբան և որ սոցին համազօր աստուա  
 ծաշունչ գիրբ գիտութի մեզ ընծայե  
 ցին , և զառաւելն քան զայս անհասու  
 թեան ամսյով յեղականաց թադուցեալ  
 քարողեցին . զյառաջ ճանապարհաւ բա  
 րերարութիւն և զներգործութիւն նո  
 բին յարարաձս մասնաւորաբար նշանօք



ծանուցին , և զճանօթութիւն էութե  
 նորա և բնութեան ամենեին անձառ  
 փակեցին . սակայն գոյութիւն և անհաս  
 էութիւն զնա հռչակեցին , որով հա  
 ւատամք՝ թէ է Աստուած վկայեալ յօ  
 բինաց և ՚ի մարգարէից և ՚ի նորոց կր  
 տակարանաց : Այլ և ՚ի բնական քննու  
 թենէ յերեւելեաց աստի է իմանալ զա  
 ներևոյթան նորա իսկզբանէ , զաստուա  
 ծութիւն նորա և զմշտնջենաւորութի  
 և զզօրութիւն : Այս՝ յայնմանէ , զի ե  
 ղեալքս ամենայն ՚ի պատճառէ իմեմ  
 նէ են , որպէս մասունք ՚ի բոլորէ , ըստ  
 որում զգալիքս ամենայն ՚ի չորից տարե  
 ըացն : Արդ յորժամ գտցի որ ՚ի վերայ  
 սոցին կացեալ անպատճառ , ոչ զոր ու  
 նելով ՚ի վերայ ինքեան սկիզբն և պատ  
 ճառ , յայտ ահա՝ է նա արարիչ և պատ  
 ճառ ամենայնի , որպէս Պղտոն ասէ՝  
 թէ զհայրն և զպատճառն ամենայնի գը  
 տանել գործ է , և գտեալ պատմել ան  
 հնար է : Այլ դարձեալ թէ մի է պատ  
 ճառ ամենայնի , և ինքն անպատճառ է :  
 Այլ երկրորդ զայս գիտել , զի ամենայն

էակքս միմեանց ներհակք են և ՚ի բաց  
 բարձօղ, որպէս ջուր հրոյ, և այլն և ս,  
 սրով ՚ի հոսման և ՚ի ծորման են: Այսն  
 որոյ գոյ այլ որ զատ ՚ի սոցուանց, որ ըզ  
 սոսա ՚ի միշտ հոսելն և ՚ի ծորելն ան  
 կորուսանելի և անսպառելի յինքեանս  
 պահէ. և այն որ զայս առնէ, զներհա  
 կրս զայստիկ և զսպականացուս ՚ի գոյ  
 ութիւն և ՚ի միաբանութիւն պահելով,  
 յայս է՝ եթէ նա ինքն է արարիչ սոցա  
 և նախախնամիչ, մասն որոյ աստուած  
 այլն գիրք աստուածութիւն անուանել  
 զնա մեզ հաւատալ ուսուցին, և անուն  
 նմին բնութեան բոլորովին հետազօտել  
 հրաժարեցուցին: Քանզի անտես զնա  
 միշտ հռչակեն ասելով, թէ « ՂԱստուած  
 ոչ որ ետես երբէք ». և Պօղոս ասէ, թէ  
 « Զոր ոչ որ ետես, և ոչ տեսանել կա  
 լողէ »: Ս ՚ի թէպէտ և Մովսէս տե  
 սանել ասի ՂԱստուած և խօսել ընդ նը  
 մա և օրէնս ընկալեալ ՚ի նմանէ, սա  
 կայն ոչ զնա ետես որ ասացն, թէ « Ոչ  
 որ տեսցէ զերեսս իմ և ապրի », այլ  
 ձևս իմն և նմանութիւնս, ասլա թէ « Չ

ընդէր գրեալ է, թէ “ Երևեցաւ Մովսէսի հրեշտակ տեառն բոցով հրոյ ի մութնւոջն ”, և թէ “ Առէք զօրէնս ՚ի հրբամանս հրեշտակաց ”. “ Եւ կարդեալ հրեշտակօք ՚ի ձեռն միջնորդի ” : Սապէս և զԵսայեայն, թէ “ Տեսի զտէր նստեալ յաթոռ բարձրութեան ”. և զՄանովէին, թէ “ Կորեաք սլ կին դու, զի զԱստուած տեսար ”. և զՅոբայն, թէ “ Տեսի զԱստուած գէմ յանդիման և ապրեցաւ անձն իմ ”, և զԵղեկիային և զՄիքիայն, զԱբրահամուն և զայլոցն մի բնութեանն և էօլութեանն իսկապէս երևումն համարեցիս, այլ նմանութիւն և երևոյթ իմն : Վանզի թէ զնա տեսնէին, ընդէր արդեօք ոչ յարմարագոյնքս զնմանէ զերևումն ասէին պարզաբաժն՝ անպարունակելի, այլ նիւթական և թանձր իրս իմն զնմանէ ճառելին, մարդ երևեալ և յաթոռ նստեալ, և գազան և անասուն զնա վերագրեալ : Տեսանեա զի այս ոչ է բնութեան նորա երևումն, քանզի զիարդ յաթոռ պարունակի այն որ ասաց. “ Զերկին և զերկիր

Ես ընումս, և կամ զխնորդ 'ի լոյս անմա-  
տոյց բնակել զնա ասէ Պօղոս, միթէ նա  
'ի տեղւոջ բնակեալ ժողովի՞, և ապա ան-  
մատոյց լոյսն՝ յորում նա բնակեալ է,  
մեծագոյն է քան զնա և նմին սլարունա-  
կող:

'Կարձեալ և անտի յայտ է, զի զբնու-  
թիւնն նորա ոչ տեսանէին արդարք, քան  
զի այլ և այլ զնմանէ ճառէին, ոմն զայս  
ինչ և ոմն զայն: Իսկ որ զբնութիւնն ի-  
րայն տեսանէ, յամենայն ժամ և ամե-  
նայն որ միտայէս զնա նշանակեն, որպէս  
զմարդ բնութեամբ տեսանելով՝ ամե-  
նայն որ զնա մարդ տեսանէ, և յամե-  
նայն ժամ ինքն մարդ երևի, իսկ զան-  
տեսանելի է ութիւնն, զի ոչ զբնութիւնն  
նորա տեսին, վասն այն այլ և այլ զնմա-  
նէ ճառեցին, ոմն ծեր և հինաւուրցն  
զնա ասոյց, և այլ ոմն մանուկ զնա վե-  
րագրեաց, ոմն քահանայ, և ոմն սլատե-  
րազմող արիւնազդեատ, ոմն յոան, և ո-  
մն նստեալ, և երբեմն առիւծ, և այլ  
երբեմն յովազ, և ինձ տարակուսեալ,  
որ ոչ բնութեանն նորին են յոյցք, այլ

պիտոյից իմն յազադաւ , որպէս ինքն ա-  
 սաց՝ թէ “ Ի տեսիլս յաճախեցից , և ՚ի  
 ձեռն մարգարէիցն նմանեցայց ” , այս  
 ինքն թէ ոչ որպէս եմն նմանեցայց ,  
 զի և ոչ իսկ ատօանել կարէ որ , այլ  
 որպէս պէտք իրացն և ժամանակն պա-  
 հանջեցեն՝ զձև և զնմանութի մասէ յա-  
 ճախեցից երևեցուցանել : Քանզի սրբա-  
 մտեալ Իսրայէլի՝ առիւծ երևէր և այլն ,  
 և սրատերազմ վանելով՝ զինուոր , և քա-  
 լել կամելով՝ քահանայ , զանակղճնութի՝  
 ՚ի ձեռն հին աւուրց երևելոյ ցուցանէր ,  
 և մանկութեամբ զանթառամ և զան-  
 վախճան բարերարելն յայանաբանելով :  
 Յոտն կալն՝ առ թիկունս հասանելն նա-  
 ցա և օգնելն ցուցանելով , և յաթոռ  
 նստելով՝ դատաստան իմն ուղղել կամե-  
 լով : Այլ և նստելն զյարամնայութին  
 և զմշտնջենաւորութիւն նորին էութե-  
 յայտնէ , որպէս գիրս ասէ՝ թէ “ Դու  
 նստիս յաւիտեան , և մեք կորստականք  
 յաւիտենից ” : Տեսանէս զի ոչ զնստիլն  
 վասն նստելոյ ասէ , ապա թէ ոչ՝ ասե-  
 լովն թէ դու նստիս , ըստ կարգի էր ա-

սել՝ թէ և մեք յամն կամք, այլ զմեզ  
 հորատական ասելովն՝ զյարակոյութիւն  
 նորին էութե՛ն նստմամբն եցոյց : Այս  
 պէս և մարմնական գէմս նմա դնելով,  
 աչս, « Բաց տէր զաչս քո և տես » . և  
 ունկն, « Խոնարհեցո տէր զունկն քո » .  
 և ձեռն, « Ձբեաց տէր զձեռն իւր, և  
 մերձեցոյց ՚ի բերան իմ » . և անգուհք,  
 « Հոտտեցաւ Աստուած ՚ի հոտ անու-  
 շից » . և ոտս, « Լսան զձայն գնալոյ  
 տեառն Աստուծոյ ՚ի դրախտին » . և բե-  
 րան, « Ձի բերան տեառն իօսեցաւ  
 զայս » : Եւ զայլ ամենայն տյապիօի վս-  
 սըն մերոյ թանձրութեան և նիւթակա-  
 նութեան իմա աստուածաշունչ գրոյ  
 հարկաւ որեալ, և գէմս և ձեւ անվայ-  
 րափակ և անմարմին էութեանն եղեալ  
 աչօք՝ զտեսողական նորին զօրութիւն  
 յայտնելով, և ունկամբ՝ զաստուածայ-  
 նաբար լսողութիւնն, և ձեռօք՝ զամե-  
 նակարող ներգործութիւնն : Սպայէս և  
 զայլ նշանակաբար ասացեալն զնմանե-  
 վասն մերոյ տկարութեան՝ աստուածա-  
 վայելչապէս առնել է ՚ի վերոյ նորա ու-

զիղ մտայ : Նմանապէս և զայն զոր Թա-  
 օրս իմն յանախտ զօրու թիւն նորա մա-  
 կադրեն գիրք , այսինքն՝ « Բարկացաւ  
 տէր ՚ի վերայ ժողովրդեան սրտմտու-  
 թեամբ » . և թէ՛ « Բնակեալն յերկինս  
 ծիծաղեսցի զնորօք » . և թէ՛ « Զարթեաւ  
 որպէս ՚ի քնոյ տէր » . և թէ՛ « Զզնա-  
 ցաւ տէր, զի թագաւորեսցոյց զՍաւուղ » .  
 և թէ՛ « Ո՛ւր ես Աբամ » , իբրև զան-  
 դէս սք . և այլ այսպիսիս որք մարդկան  
 են յարմարողոյնք , որք ոչ են՝ և ասին  
 ՚ի վերայ Աստուծոյ :

Արդ գիտելի է , զի յամենայն իրո-  
 շու թիւս զչորսս զայսոսիկ սպարտ է խընդ-  
 րել զգլուխս , իբր թէ առաջի կայեալն  
 յորմէ իմեքէ հանդիպեսցի գոլ , որք  
 են այսոքիկ , ոչ են՝ և ասին . են՝ և ոչ  
 ասին , են՝ և ասին . ոչ են՝ և ոչ ասին :  
 Այլ նախ ՚ի վերայ արարածոցս վարեա-  
 ցուք զբանս , և ապա յաստուածարա-  
 նու թիւ արարչին՝ որ ՚ի սք գիրս վերլու-  
 ծու թիւ առցուք : Աչ են՝ և ասին , որպէս  
 եղջերու արաղն և յարալէզն և յու շկա-  
 ռարիկն , և այլ ոմանք այսպիսիք անդոյք ,

որք գոյութիւնն ոչ ունեւով՝ զի ոչ են, և  
անուան առեալ ասին առ 'ի մէնջ : Այլ են՝  
և ոչ ասին, որպէս յուր կենդանիք 'ի  
ծովու և 'ի ցամաքի կացեալ և ենթա-  
կացեալ, և վասն ոչ գիտելոյ մեր զնո-  
սա՝ ոչ ասին անուամբ առ 'ի մէնջ, սա-  
կացն ինքեանք կան և յաշխարհի են : Այլ  
են՝ և ասին, մարդ և առիւծ և արծիւ  
և այլք որ գոյացեալք են, և ասին և  
անուանին առ 'ի մէնջ վասն գիտելոյ մեր  
զնոսա : Այլ ոչ են՝ և ոչ ասին, որպէս  
խող ոչ է արծիւ՝ և ոչ ասի արծիւ, և  
մարդ ոչ է ուղտ՝ և ոչ ասի ուղտ, և ան-  
մուրս գունդն ոչ են մուրսականք՝ և ոչ ա-  
սին մուրսականք :

Արդ զայսոսիկ 'ի վերայ սուրբ և աս-  
տուածաբան գրոց առ յուր : Անջեւ ա-  
սեն գիրք զԱստուած և զարթնուլ և ծի-  
ծաղիլ և բարկանալ և զղջանալ և ան-  
գիտանալ. այսոքիկ ամենայն և այսպի-  
սիք ոչ են՝ և ասին 'ի վերայ Աստուծոյ  
'ի գէմս պիտոյից ինչ իրաց. ասլա թէ  
ոչ զխմրդ հնար է 'ի քուն ասել զԱս-  
տուած, որ ոչ ննջէ և ոչ 'ի քուն երթայ



պահասարանն Իսրայէլի : Օ ի քուն է ախտանդողող խաղաղանալ ՚ի մարմնի զգայութեանց . արթնութիւնն նորին հակառակ՝ լուծումն քնոյ , կենդանւոյն շարժութիւնն ՚ի բնաւորականն իւր ներգործութիւնն : Ալ ըսողն անբան շնչոյն ընդարձակութիւնն է ՚ի մեզ ջլովք և մլկանամք կատարեալ , և նորին հակառակն արտօսը ժողովեալ հեծեծատեսակ շնչոյն նեղոյ զխոնաւ գոլորչիանն ՚ի խելսպատակն՝ որ իբրև ընդ ազուգայս իջանեն յաչան , որպէս սելից և նորին նմանեաց ընդ կոթունան առեալ զջուրսն : Ալ բարկանալն է եռանդն շուրջ զսրտիւն արեանն ՚ի վերածխութենէ մաղձոյն : Արդ զայսոսիկ ախտս զխնրդ առնուցումք բնաւորապէս ՚ի վերայ պարզ և տարածեալութեանն Աստուծոյ , այլ այսպէս իմասցիս : Յորժամ մեղանչէր Իսրայէլ և տիրէին նոցա թշնամիքն , և նորա ազաղակէին ՚ի վեր և ոչ լինէր լսելի , զայն՝ քուն անուանէին Աստուծոյ , որ ոչ է նա ՚ի քունն : Քանզի Հեղիաս այսպանէր ըզԲահաղիմսն , թէ պնդագոյն աղաղակե-

յէք . միթէ 'ի քունն իցէ Աստուածն :  
 Այլ այդ գրոց իսկ սովորութիւնն է , զլու  
 առութիւնն քարեգործութեանն՝ քունն ա  
 նուանել , զերկայնմտութիւնն՝ արթնու  
 թիւն , զարհամարհելն և այսպնեքն՝ ծա  
 զոր , զքարերարելն՝ քաղցրութիւն , լլ  
 վրէժխնդրութիւնն՝ քարկուծիւն , և  
 այլ այսպիսիքս , և ոչ ենն Աստուած և  
 ասինն սակայն :

Այլ ենն և ոչ ասինն , որպէս անմահ և  
 անսկիզբն և անապական , զի ենն այսու  
 քիկ Աստուած՝ և ոչ ասինն որպիսութիւն ,  
 այլ միայն բացականաւ՝ անմահ , անըս  
 կիզբն . զի վասն ոչ ինչ յառաջ քան լլ  
 նա լինելոյ՝ ասի անսկիզբն , և զի ոչ ու  
 նի կատարումն՝ կոչի անմահ և անա  
 պական : Այլ այս ոչ 'ի դրութենէ՝ այլ  
 'ի բոց բառնալոյ ասի , որպէս յորժամ  
 ասէ որ , թէ երկու հինգ՝ ութ ոչ է  
 և քսան ոչ է և յիսունն ոչ է , 'ի բոց  
 բառնալով զնա յայանէ՝ թէ այս ինչ չէ  
 և այն չէ . իսկ 'ի վերայ գնելով՝ այն է  
 յորժամ ասէ որ , թէ երկու հինգ՝ աս  
 ոլն է : Այսպէս ասել զԱստուած ան

մահ, անսկիզբն, անապական . այս ճիշ-  
 մարիտ է, զի է Աստուած սյսպէս . այլ  
 թէ զինչ է՝ ոչ ասէ, միայն զայն ասէ՝ թէ  
 մահացու չէ, սկիզբն չունի, ապականա-  
 ցու ոչ է . վասն որոյ այս է այն՝ զի է և  
 ոչ ասի, զի բառնայ զոչէսն, և ոչ դնէ  
 զինչէն : Այլ են՝ և ասին, որպէս Աստուած  
 արարիչ, բարի . քան զի է այս, և ասի այս-  
 պէս : Այլ ոչ է՝ և ոչ ասի, որպէս անգոյ  
 և չար ոչ է Աստուած, և ոչ ասի երբէք :  
 Այնպէս և աստուածային անուանք որ  
 ՚ի սուրբ դիրս են, ոչ են էութեան և  
 բնութեան նորա յայտնիչք, որպէս ա-  
 նուէն մարդոյ յայտնէ զբնութիւն մար-  
 դոյ, և անուէն առիւծոյ յայտնէ զբնու-  
 թիւն առիւծոյ, քանզի համազօր է սահ-  
 մանի անուէն, ըստ որում իմաստասէրքն  
 ասեն, թէ անուէն է սահման համառօտ,  
 և սահման է անուէն ծաւալեալ . քանզի  
 միապէս յայտնէ զբնութիւն մարդոյ ա-  
 նուէն և սահմանն, զի թէ ասէ որ՝ կեն-  
 դանի, բանական, մահկանացու, մտաց  
 և հանճարոյ ընդունակ, այս զբնութիւն  
 մարդոյ յայտնէ, և թէ ասէ կարճ և

համառօտ՝ թէ մարդ է, և այս զքնու-  
 թիւն մարդոյ յայտնէ: Իսկ անունն զոր  
 կոչէ գիրն Աստուծոյ, ոչ երբէք զքնու-  
 թիւն նորին ցուցանէ, այլ զներգործու-  
 թիւն և զնորհաբաշխու թիւն յարա-  
 րածս, որպէս կոչի Աստուած՝ վասն հաս-  
 տատելոյ զմեզ և կամ վասն յաստիս ա-  
 ծելոյ, և աէր՝ վասն տիրելոյ երկնաւորաց  
 և երկրաւորաց, և ամենակալ՝ զի զամե-  
 նեսեան կալեալ և սնդեալ ունի յան-  
 քակտելի միութիւն և խաղաղութի, և  
 այլն ամենայն սոյնպիսիք յառաջ ճանա-  
 պարհաց բարութեանորա են կոչմունք և  
 ոչ անճառութեան յայտնաբանիչք: Կա և  
 զոր ինքն անուանեաց ընդ Մովսէսի խօ-  
 սելով, յասելն՝ թէ « Ար էն անուն իմ »,   
 թէպէտ և քան զայլ անուանսն պանծու-  
 լի և մերձաւորադոյն է Աստուած, սա-  
 կայն ոչ զքնութիւն նորա նշանակէ,  
 բայց զայն միայն՝ թէ անսկիզբն և ան-  
 վախճան է աստուածութիւն, քանզի  
 զայս ցուցանէ որ էնն անուն, զի ունի  
 զոչ սկսեալն և զոչ դադարեալն:

Արդ՝ յաղաքս սցսոցիկ բոցբարձա-

Կան անարանու թիքն գերադոյնք են և  
 հպաւորագոյն ՂԱտուած՝ քան զվերա-  
 գրահանան, և են վերագրականք որպէս  
 յորժամ ասեմք զՂԱտուած՝ թագաւոր,  
 ՚ի վերայ նորին գնելով զամենայն, և տէր  
 և բարի և լոյս և իմաստութի և զօրու-  
 թիւն և բարձրեալ և հզօր, և այլ այս-  
 պիսիքս որք նուագադոյնք են քան զբաց-  
 բարձականան: Եւ բացբարձականք են որ-  
 պէս յորժամ ՚ի վեր առնելով զնա ասեմք՝  
 անսկիզբն, անմահ, անհաս, անճառ, ա-  
 նեղ, աներբ, անուր, անկէտ, զի այսօրիկ  
 թէպէտ ՚ի բաց բառնալով ասեմք, թէ  
 Ատուած այս ինչ չէ, և այն ինչ չէ, ճա-  
 ւելի ոչ է, հասանելի չէ, ՚ի տեղի չէ,  
 և թէ զինչ է՝ ոչ է կար ու մեք յայտնել,  
 սակայն գերագոյն է քան զորս ՚ի վերայ  
 գնելով ասիցէ, թէ Ատուած այս ինչ է  
 կամ այն ինչ. քանզի յայսպիսեացս է  
 երբէք և պատրիլ տկարամտացն և ախ-  
 տաւորաբար խրիլ, և կարծել զԱտուած  
 թագաւոր՝ որպէս զորս մեք տեսանեմք,  
 և տէր՝ իբրև որ առ մեզս են, և բա-  
 ըի՛ զոր մեք ճանաչեմք, և լոյս այսպէս

որ մեզս երևի, և իմաստութիւն՝ որում մեք հասանեմք: Այլ այս անմտութիւն մեծ է այսպիսի ինչ կարծել զԱստուած՝ յորոյ առ մեզս են. զի թէպէտ վասն ճանաչելոյ զԱստուած՝ թէ է էութիւն, և հաւատալոյ զնա յերևելեացս պատուականագունից՝ անուանեցին զնա աստուածաբանքն եկեղեցւոյ և սբ գիրք, տակայն՝ ի վեր է քան զամենայն անուն և զհասումն: Այն որոյ լաւագոյն է զնա բացբարձականաւն աստուածաբանել՝ քան վերադրականաւն, այսինքն ասել զնա անուր անտեղի, քան ասել՝ նստի յերկինս երկնից, և բարձրեալն ՚ի բարձունս բնակեալ, զի այս իբր ՚ի տեղ ոջ պարունակէ զանվայրափակ էութիւնն, և տկար մտաց իմանալ տայ թէ յերկինս երկնից նստեալ է և ժողովեալ, այն որ չտիէ զերկինս թզաւ և զերկիր քլաւ, որպէս ասէ Եսայի: Ար և այս թանձրագոյն իմն է ասացուած զԱստուծոյ. զի զհարդ քիլ իմանալի է նմա՝ որ մարմնոց է պատշաճելի, այլ զանբաւ և զանչափ մեծութիւն նորա կամելով ասել մար-

դարէս , ոչ այլ ինչ եգիտ ցուցանել ,  
 թիզ և քիւ եդ Աստուծոյ , միանգամայն  
 և զերկնից մեծութիւնն եցոյց աւելի  
 քան զերկրի , զի զնա թզաւ և զերկիր  
 քլաւ սասց չափել :

Արդ այսպէս տկարագունիցն թանձ-  
 րագոյն իմացուածոց պատճառք են այս-  
 պիսի կոչմունք զԱստուծոյ : Իսկ բաց-  
 բարձականքն անսկիզբն , անմահն , ան-  
 հասն և այլն , թէպէտ զբնութիւնն Աս-  
 տուծոյ ոչ յոյանեն , և իրս ինչ զնմա-  
 նէ ոչ ճառեն , զի և անձառ զնա ասեն ,  
 սակայն ՚ի զգալեացս զմիաս լսողացն վե-  
 րացուցանեն , և ախտաւոր ինչ և թանձ-  
 րագոյն ոչ տան իմանալ զԱստուծոյ :

Այլ և զայս գիտել արժան է , թէ  
 յորժամ ասեմք զնա անհաս և զայլն ,  
 պարտէ խոստովանիլ զնա գոյութիւն և  
 էութիւն , և ապա զայսպիսիս ասել :  
 Քանզի և այնորիկ և ս որ ոչ են էութիւնք  
 և ոչ գոյութիւնք , ասին անհաս՝ անեղ՝  
 անպատու՝ անուր , զի ոչ են և ոչ հա-  
 սանելի են և ոչ պատմելի : Իստ որում  
 անեղն յերիս բաժանի . է անեղ՝ որ

չէ եղեալ և ոչ կայ, որպէս եղջերու ա-  
 քաղն և այլ անդոյք, և է անեղ՝ որ չէ  
 լեալ ներգործութեամբ, այլ զօրութի  
 կայ, որպէս ՚ի կաւն կարաս, և ՚ի պղինձն  
 անդրի, և ՚ի փայտն արկղ, և է անեղ՝  
 որ կայ և է, սակայն եղեալ ոչ է, որպէս  
 Աստուած՝ որ կոչի անեղ էութիւնն :  
 Վասն որոյ խօստովանելի է զերիս անձ-  
 նաւորութիւնսն և զմի աստուածու-  
 թիւնն՝ էութիւն անեղ, կատարեալ,  
 անհաս, անճառ, անխմանալի երկնա-  
 ւորաց և երկրաւորաց, արարիչ բոլ-  
 րից, և նախախնամօղ բնաւից, Աստ-  
 ուած ՚ի վերայ ամենեցուն, օրհնեալ  
 յաւիտեանս :

Այսորիկ աստուածաբանական բանք  
 շարադրեալ ՚ի մերս նուաստութենէ  
 Վահրամայ վարդապետի, ՚ի հրամանէ  
 մեծի թագաւորին Աւետի, վասն որոյ  
 եթէ ինչ արժանաւոր և պիտանացու-  
 յասացեալս դոցի, Աստուծոյ շնորհ, որ  
 կամելն ետ մեզ և զառնելն, իսկ եթէ  
 նուաստագոյն և դուզնաբեայ ՚ի շահս  
 օգտութեան, քանզի սխալագոյն և կամ



Թիւր ինչ ոչ ունիմ՝ ասել գտանիլ ՚ի գը-  
 րեցեալքս, որպէս զանձն իմ և զայլս  
 հաւանեցուցանել աստուածային գրոց  
 վկայութեամբ՝ որ են ՚ի սոյն շարագրու-  
 թեան առագրեալ: Սակս որոյ զայնքան  
 Թիւրու Թիւն իմոյ տկարութեանս վար-  
 կանիջիք, որ վասն երկրաքարչ և մեղա-  
 սէր գողոյ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ՝  
 ոչ կարացի ՚ի բարձրագոյնսն և յաստ-  
 ուածային խորս մտանել, և յայնմանէ  
 փարթամութիւն բարձրագունից մտաց  
 ընծայել. վասն որոյ բարեսէր մաօք՝ չա-  
 վաւոր այս աշխատութեան՝ Թողութի  
 անչափից մեղաց իմոց հայցեօջիք յան-  
 բաւաբաշխն բարեաց Աստուծոյ, որ է  
 օրհնեալ յաւիտեանս, ամէն:

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ  
ՎԼՂՐԱՄԱՅ ՎԼՐԴԼՊԵՏԻ  
Ի ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օրհնի ճառից անճառելի տէրու  
թեանն՝ որ յերբեակ փառաւորեալ անճ  
նաւորութիւնն, կարգեցցուք և զքանս  
բանին հօր մարդեղութեան, զմիոյն ե  
րիցն անճնաւորութեանցն, զքանչեւիս  
ի սքանչեւիս յարելով, և զանպատմելիս  
քնդ անհասանելին առադրելով: Աւ  
յայտոսիկ ժպրհելով մեր՝ ի խորագու  
նիցն ի բաց կացցուք ի խնդրոց, և պար  
զագուենիցն չափաւորապէս հանդիպես  
ցուք: Քանզի յոլովս այսոքիկ բերին ի  
մեզ բանք և տեսութիւնք ի ճերագ  
գեացն մերոց յանձաղդեստից հարցն, զս  
րլս անհնար է զբաւանդակն աստանօր  
ժողովել, մանաւանդ որ յայլ և այլ տե  
սակս բանիցն զմի և զնոյն տրամադրե  
ցին, սակս այնորիկ յամենեցունց զհա  
մազօրն միեղինաբար համառօտ բանիւ  
արտադրեսցուք զտեսութիւն:

Կարդկային բնութիւն սահմանեալ  
 յերանաւէտ բարութեանցն յորում էր,  
 անհնազանդութեամբն դժբող եղեալ  
 պատուիրանի արարչին, գրեցաւ ընդ  
 յանցանացն մահու և ապականութեան.  
 Վասն որոյ գթացեալ արարիչն սորա Բա-  
 նըն Աստուած, տեսանելով զիւրն պառ-  
 կեր յանդունդս մեղաց տառապեալ և  
 ժանիւք գաղանաց խածատեալ և օձ-  
 տեալ, ասաց Տէրն. « Ի խորոց անդնդոց  
 դարձուցից, և ՚ի միջոյ ժանեաց զայն ՚ի  
 դուրս կորզեցից » : Ի լուամս օրինացն և  
 մարգարէիցն խոնարհեցոյց զերկինս Ու-  
 դին միածին, և էջ աւետեօքն Գարբի-  
 էլի յարգանդ Աուօին, լի գոլով երկինք  
 և երկիր նովաւ, և յորովայնն Մարիա  
 մու բաւանդակ իւր անսպաբադբելին. ՚ի  
 նորին բնութենէ առեալ ինքեան մար-  
 մին՝ բանական հոգւով և մտօք, եղեալ  
 ամենայն որ ինչ է ՚ի մարդ՝ բաց ՚ի մե-  
 ղաց, նոր խառնմամբ և սքանչելի խառ-  
 նուածով. ճնաւ ըստ ժամանակի ՚ի Աու-  
 սէն անժամանակաբար ճնեալն ՚ի Հօրէ,  
 գործակիցս և ոչ մարմնակիցս ինքեան.

ունելով զՀայր և զՀոգին :

Արդ բանն մարմին եղև , այսինքն մարմնացաւ՝ և ոչ թէ 'ի մարմին յեղաւ փոխեցաւ . քանզի եղև որ ինչ ոչն էր , մնալով որ ինչ էրն : Բանն թանձրացաւ , այլ 'ի բանն գոլոյ ոչ շփոթեցաւ , որպէս ընդ անմարմինն մարմինն միացաւ , և 'ի մարմինն գոլոյ ոչ ունայնացաւ . քանզի բանն կայ մնաց որպէս նախ քան զմարմնաւորութիւնն և յետ մարմնանալոյն , բայց միայն զի անմարմին յառաջնումն և մարմնացեալ յերկրորդումս . Աստուած մարդացեալ և նոյնպէս մարմնացեալ , և մարմինն աստուածացեալ և ոչ փոխեալ յանմարմնութիւն . և թէ պարտ է հաւատալ ասել՝ ոչ փոխեալ և ոչ փոխադրեալ : Այսն որոյ ըստ նիկիական դաւանութեան՝ խոստովանիմք զաէր մեր Յիսուս Քրիստոս յառաջ քան զյաւիտեանս ծնեալ 'ի Հօրէ , 'ի վախճան աւուրցս 'ի սրբոյ Աուսէն ըստ մարմնոյ ծնեալ Հոգւով սրբով . մի դէմ՝ շարադրեալ յերկնային աստուածութենէն և 'ի մարդկոյին մարմնոյն , ըստ որում մար-

դրն էր ամենևին Աստուած, և ամենեւին մարդ. բոլորովին մարդ հանդերձ աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստուածութեանն մարդ: Այսպէս բոլորովին երկրպագելի է հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյ երկրպագելի. և բոլորովին երկրպագէ՛ և հանդերձ աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստուածութեանն միայն երկրպագող է: Բոլորովին անստեղծ՝ և հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն անստեղծ, բոլորովինք և ստեղծելի է հանդերձ աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստուածութեանն ստեղծանելի է: Բոլորովին համագոյակցութիւն Աստուծոյ հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն համագոյակցութիւն Աստուծոյ, որպէս և ոչ ըստ աստուածութեանն համագոյութիւն մարմնոյ. և սակայն աստուածութեամբն էացեալ ըստ մարմնոյն՝ մեզ է համագոյակցութիւն:

Յազադս այնորիկ զմիաւորեալն ընդ սրբոյ մարմնոյն հոգի ունողի իմանալի և միտս անճառապէս, և ՚ի վերքան ըղ

խորհուրդս, զոր Աստուծոյ հօրէ բանն՝  
մէք անշիտթաբար անփոփոխապէս մի  
որդի և Քրիստոս և տէր խոստովանիմք :  
Օնոյն ինքն Աստուած՝ համանդամայն  
և մարդ : ոչ ոմն և ոմն, կամ այլ ոք և  
այլ, այլ մի և նոյն զայն և զայս գօլ ի-  
մանալ : Ար և երբեմն որպէս զմարդ առ-  
նօրինաբար մարդկօրէն խօսէր՝ ոչ գի-  
տեւ զօրն և զժամն, և սէր եղիք զԱս-  
տուծոս, և արտում է անձն իմ մինչև ՚ի  
մահ, և այլ սցսպիսիս, զի ճշմարիտ մարդ-  
էր միացեալ Աստուածն բան :

Ի արձեալ՝ և ոչ շփոթեալ կամ փո-  
փոխեալ, այլ մի և նոյնպէս ՚ի միաւո-  
րութիւն անդ մնացեալ : Իսկ երբեմն  
որպէս զԱստուած իշխանութեամբ զաս-  
տուածավայելուչս առնէր բանս, յայտ-  
նելով զճածուկս սրտից, թողլով զմեղս՝  
զի ճշմարիտ Աստուած էր . որ և զան-  
ճառ միաւորութիւնն ՚ի ներդործու-  
թեանցն ցուցանէր, որպէս յորժամ  
ճնէ կուրին թքովն լոյս շնորհէր, զի  
թուքն մարդկութեանն էր իսկապէս,  
և զօրութիւնն որ ՚ի թուքն էր՝ աստ-

ու ածու թեանն , և լուսաւորու թիւն ՚ի  
միաւորու թենէ անտի կատարէր : Վնայր  
՚ի վերայ ծովուն երևելի մարդկու թին  
վասն ընդ իմանալի աստուածու թեանն  
միաւորու թեան : Քաղցեալ , և զբիւրս  
կերակրեաց . խառնեցաւ յոգի իւր , և  
նոյն ժամոյն զՂազարոս կոչեաց . ծարա  
ւեցաւ , և կենաց ջուր հաւատացելոց  
խոստացաւ : Քանզի իբրև Աստուած  
գալով զմարդկային կիրս զդեցաւ , և ըզ  
նորին զամենայն կիրս կրեաց զբնաւորա  
կանսն և ոչ զաւելորդսն , այսինքն եկեր ,  
էարբ , ննջեաց և աշխատեցաւ , և այլ  
որ ինչ բնական և անանգոսնելի կիրք են :  
Սակայն ոչ ՚ի հարկէ որպէս մեք , զի  
յորժամ ոչ կամիմք՝ քաղցնումք , և ՚ի հար  
կէ ծարաւիմք և ննջեմք , և զայն ևս  
համակրեմք . այլ նա յորժամ կամէր և  
թոյլ ասցր մարմնոյն , յայնժամ մարմինն  
կրէր զիւր բնաւորական կիրան , ըստ ու  
րում վերայ գիրն՝ թէ յաւուր պահոյն  
կատարելն՝ ապա քաղցեալ , նոյնպէս և  
զայլսն յորժամ կամէրն կրէր : Քանզի  
ոչ յողթիւր ՚ի կրիցն աստուածախառն

այն մարմին , այլ յաղթու թեան զէնս  
 զնա մեզ կազմեաց , զմերս առնլով և կը-  
 րելով , զի նմանեաւ զնմանն սրբեացէ :  
 1 Աստ կրել հաւաստապէս ոչ զայլոյ ու-  
 ռուք զկիրս՝ այլ զմերս , զի մարդ եղև .  
 և 1 աստ դարձեալ գեր ՚ի վերոյ մնաց կը-  
 րիցն՝ զի Աստուած էր : Մայց յարժամ  
 կրէրն զկիրսն , տառգապէս զմարդկան  
 կիրս կրէր և ոչ առաջօք կամ այլաբար  
 իմն . զի որպէս մարդ ստոյգ եղև , նոյն-  
 պէս և զամենայն կիրս մարդկային ա-  
 ռանց մեղաց կրեաց կամաւորապէս :  
 Այլ կամաւորապէս և ոչ հարկաւորա-  
 բար իբրև զմեզ . զի մեք մարդ միայն ,  
 իսկ նա Աստուած մարդացեալ , իսկա-  
 պէս զմերս մարմին առեալ , և ոչ յաս-  
 տուածայնոյն բնութի՛ զսրբազանն զոյն  
 ստեղծադորձեաց զօրութի՛ , այլ ՚ի Աու-  
 սէն առեալ զնա . և ոչ օտար ինչ մար-  
 մին ընկալեալ , կամ ՚ի յերկնից ընդ ին-  
 քեան մարմին վայրաբերեալ . և ոչ մար-  
 մին յառաջ ՚ի Աոյսն ստեղծեալ , և ինքն  
 իբրու բաղին ՚ի նմա բնակեալ . և ոչ



տոսկ մարդ ՚ի Կուսէ ճնեալ, և ՚ի վերջոյ  
 Բանն ՚ի նմա ազդեալ իբր ՚ի մարդ որ,  
 կամ ՚ի շնորհօք որդիացեալսն, և ոչ Բա-  
 նըն մարմնոյն առ ընթեր կոցեալ, և յեր-  
 կուս որդիս առանձնացեալ, զի այսորիկ  
 սկզբնաչարին են դիւտք : Այլ հաւա-  
 տով զմտաւ ածեալ՝ զմարդանալոյն յե-  
 զանակ տեսանեմք, զի երկու բնութի  
 եկեալ առ միմեանս ըստ անբաժանելի  
 միաւորութեն անշփոթաբար և անփո-  
 փոխապէս, քանզի մարմինն մարմին է՝  
 և ոչ Ատուած, որ թէպէտ եղև Ա-  
 տուծոյ մարմին, նոյնպէս և բանն Ա-  
 տուած է՝ և ոչ մարմին, թէ և իւր ա-  
 բար զմարմինն տնօրինաբար :

Արդ յորժամ զմտաւ ածեմք զայս,  
 ոչ ինչ մնասիմք ՚ի միութիւն զընդակցու-  
 թիւն երկուց բնութեանցն ասացեալ,  
 իսկ յետ միաւորութեանն՝ ՚ի միմեանց  
 ոչ յերկուս որդիս հատանեմք զմինն և  
 զանբաժանելին, այլ մի ասեմք որդի որ-  
 պէս և սուրբ հարբն ասացին՝ մի բնու-  
 թիւն բանին մարմնացելոյ : Այլ յոր-  
 ժամ միայն եկեալ ՚ի մտածութիւնս և

միայն տեսեալ հոգւոյ աչօք՝ եթէ զինչ  
 օրինակաւ մարդացաւ Միածինն, երկուս  
 Կող ասեմք զբնութիւնն և մի՝ կատար  
 եալ մի Քրիստոս, որդի և տէր, բանն  
 Աստուած մարդացեալ և մարմնացեալ :  
 Եւ եթէ՝ բարւոք թուեսցի, ընկալցուք  
 յօրինակ զմեր ինքեանց շարադրութի,  
 ըստ որում եմք մարդիկ, քանզի շարա  
 դրեալ եմք ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ, և  
 տեսանեմք երկուս բնութիւնս՝ այլ հո  
 գւոյ և այլ մարմնոյ . բայց մի յերկուց  
 ըստ միութեան մարդ, և ոչ յերկոցունց  
 շարադրեալ բնութեանց երկուս մար  
 դրս իմանի, այլ մի մարդ ըստ շարա  
 դրութեան որպէս ասացաւ՝ ՚ի հոգւոյ  
 և ՚ի մարմնոյ : Այնպէս յերկոցունց և  
 ՚ի գանազանից բնութեանց մի և միայն է  
 Քրիստոս՝ անանջատելի Կողով յետ միա  
 ւորութեանն, մինչ զի ոչ երբէք զմիա  
 ւորութեանն բան ՚ի վերայ նորա էբա  
 նեն սուրբ գիրք : Օ՛ի և ինքն իսկ ըզ  
 մարմինն՝ որ յերկրէ աստի ՚ի Ալուսէն է  
 առ, սակս անճառ միաւորութեն ընդ  
 ՚ի յերկնից իջեալ բանին՝ և զնոյն ՚ի յեր-

կնից իջեալ ասաց, ըստ այնմ. « Ոչ որ  
 ել յերկինս՝ թէ ոչ որ էջն յերկնից Որ-  
 դին մարդոց որ էն յերկինս » : Եւ հայր  
 'ի վերայ նորին վկայելով՝ չասաց թէ դու-  
 քա, կամ որ 'ի դա, այլ թէ՝ « Դա է  
 որդի իմ սիրելի », որ և 'ի մարմին մի-  
 ացեալ ընդ բանի : Եւ Յովհաննէս ա-  
 սէր, թէ « Ձեռք մեր շոշափեցին 'ի վե-  
 րայ բանին կենաց », տես զի զանշոշա-  
 փելի բանն շոշափելի մարմնովն շոշափել  
 ասաց : Վասն որոյ մի է նորա դէմ և մի  
 բնութիւն յերկուց, մի Որդի՝ Աստուած  
 և մարդ դուրով, այլ զգոյն մարդ Աստ-  
 ուածն բանի միաւորութեանն 'ի կու-  
 սէն ծնեալ, վասն որոյ և Աստուածածին  
 ծնողն և ծնեալն 'ի նմանէ Աճ ճշմարիտ :  
 Արարիչն բոլորից լինի 'ի կնից, զի  
 յորմէ սրտբանացն լուծիչ յանդուստ  
 ծննդեամբ յառաջեալ, և մերովս տե-  
 սակաւ և ապականալոյժ կրիւք յամենայն  
 իրաաս չարին ընթացեալ, ցանկ արկեաց  
 զնովին ճանապարհօք. զհետ անբժշկու-  
 թեան մերոյ եկեալ վարէր առ 'ի բժըշ-  
 կել զխորտակու մն ժողովրդեան իւրոյ .

և զարմանալի իմն հրաշագործիւր, նը-  
 մանական իրօք 'ի վերայ ելեալ, աննման  
 զվախճանն հատուցանէր: Օնաւ՝ և ըզ-  
 դատակնիք ճննդեանն մերոյ ելոյժ, ա-  
 ճեաց՝ կատարեալս զմեզ առնելով, ըն-  
 ծայեցաւ 'ի տաճարին, և զընու թիւնս  
 մեր ընծայեաց Հօր 'ի յերկինս: Վկրտե-  
 ցաւ՝ և զմեզս մեր մօքքեաց, և զհոգին  
 մեզ պարգևեաց, և յորդեգրու թի՛ Հօր  
 հրաւիրեաց: Փորձեցաւ՝ այլ և յաղ-  
 թեաց, և զմեզ քաջալերեալ յորդորեաց:  
 Կարօտացաւ՝ և զկարօտեալքս ելից բա-  
 րու թեամբ, աղքատացաւ՝ այլ զմեժա-  
 տունն արձակեաց յունայն, և զխոնարհս  
 բարձրացոյց յանկողնալուս ճոխու թի՛:  
 Արտասուեաց՝ և եհան զամենայն ար-  
 տօսք յամենայն երեսաց: Արկեաւ՝ ան-  
 կրկեզս զմեզ կազմելով առ 'ի կօխել  
 զօձս և զկարիճս և զամենայն զօրու թի՛ս  
 թշնամւոյն: Անգիտացաւ՝ զի 'ի մեզ  
 դարձուցէ զառաջին գիտութեան շը-  
 նորհս: Ակն 'ի չարչարանս խաչին կա-  
 մաւորաբար, ըստ որում անաց, «Իշխա-  
 նութիւն ունիմ դնել զանձն, և իշխա-

նութիւն ունիմ առնուլ զնա ։ Օհա  
րուածս ընկալաւ՝ և զյաւս մեր վերա-  
ցոյց ։ Թաւք էառ՝ և ՚ի նախնի ամօթոյ  
անախ զմեզ աղատեաց ։

Արդ աստանօր խնդիր իմն է ՚ի մեջ  
առնելի, թէ փրկել կամելով զմարդիկ  
բանն Աստուած, ընդէր ոչ սցլով յեղա-  
նակաւ՝ որոյ ամենայն ինչ կարելի է՝ տը-  
նօրինէր զայս, բան մարդ լինելով ։ Վի-  
տել արժան է, զի զմարդն զոր ստեղծ  
յանեղծ ութիւն և ՚ի պատկեր իւրոյ բա-  
րերարութեն, նախանձով իւրով բան-  
սարկուն և նորին անձնիշխան կամքն է-  
արկ ընդ մեղաց և ընդ ծառայութեան  
մահու, և ապա չարախօս լինէր Աստու-  
ծոյ, իբրու թէ ՚ի բնութենէ և ոչ յիւ-  
րոց պատրանաց անկաւ մարդկան բնու-  
թիւնս ՚ի չարիս, զսորին պատճառն յա-  
րարիչ բնութես վերաբերեալ՝ որ այն-  
պիսի իմն ստեղծ զնոսա ։ Ալ զայս չա-  
րախօսութիւն երեւցուցին առ Յովք,  
զոր և ՚ի փորձ մարտի խնդրեցին, և յետ  
սաստիկ փորձին յարդարութի զանմեզն  
գտին, զայն Դաւիթ յայտ առնէ, «Նրա

տան, ասէ, իշխանքն և չարախօս կային  
 զինէն ։ և Յովհաննէս ՚ի Յոյանու  
 Թեանն ՚ի հրեշտակոց լուտւ՝ որ ասէր,  
 « Ուրախ ընթուք երկինք և երկիր, զե  
 անկաւ չարախօսն եղբարց մերոց ։ Այս  
 քն որոյ արարիչն Աստուած բանն կա  
 մելով զիւր սան զծուածն երկեցուցա  
 նել ՚ի բարի դործս՝ Թէ յինէն հաստա  
 տեալ, ըստ իմաստնոյն բանի՝ Թէ « Ա  
 բար զմարդն յանմեղու թեան, և նորա  
 խնդրեցին զխորհուրդս չարու թեան ։  
 յայտ է՝ խորհրդով խորամանկ թշնամ  
 ւոյն, դայ յաշխարհ՝ յորմէ անմեկնելի  
 էր, և եղև մարմին բանական հոգւով  
 որ յառաջն ոչ էր մնացեալ ՚ի միաւո  
 ղու թեան անգ՝ անմարմինն, որպէս և ՚ի  
 սկզբանն էր կացեալ ՚ի բնաւորական կի  
 ըս մարդկան գերաբնասպէս և ՚ի վերջան  
 զկիրս ։ Այսու յինքն յայանեալ զբնու  
 թեանս զանմեղու թի, որովք իրաւամբք  
 և արդարու թեամբ զչարախօսն մեր ըն  
 կեց յաթուոյ նա՝ որ ՚ի դատաստան եկն  
 յաշխարհս յայս, և ասաց՝ Թէ « Այժմ  
 դատաստան է աշխարհիս սյտորիկ, և իշ

խան սորին ընկեացի արտաքս 7: Ալ այն որ աստուածաբար և զօրեղապէս կարող էր զամենայն ինչ առ ՚ի բարին մեղանաեսել և հրաշագործել սակա անբաւ իւրոյ բարերարութեանն որ առ մեղքս մեղ լինելով, և տկարութեամբ ըզփրկութիւն մեր և զդարձ շահի վերբատին, միանգամայն և զի մի մեծաբան պարծեացի հակառակորդն՝ թէ յազթեցայ մերկ Աստուծով:

Արդ եթէ մարդ յազտօս զընութեանս որպիսութիւնն հրատարակելոյ յանձն էառ լինել, վասն էր արդեօք մահաւամբ իւրով զառ ՚ի մահուանէ ՚ի կեանս փոխակերպիլն մեր՝ կազմակերպեաց: Ալ զայս ևս ըստ առաջնոյն սարասի իրաւամբ տնօրինել ախորժէր, քանզի օրէնք էին ՚ի նմանէ՝ թէ « Անձն որ մեղիցէ՝ նայն և մեռցի 7, և զի « Ամենեքեան խոտորեցան, և ոչ որ է որ առնէ զբարի՝ և ոչ մինչև ցմի 7, յամենեցուն վերայ շարժէր ստիսն զգատակիլք վճիռն: Ի վտանգի էին մեր իրքն, և յեր-

կուց մեզ առաջի կայր զմի իմն առնել . կամ ամենայնց մեռանիլ , և կամ զմի ոք այնպիսի տալ փոխարէն , որ անմեղութեամբ մահուն զամենեցուն իրաւացի զմահու կարողանայր լուծանել զսարսուրն : Սարգոյ անհնարին էր իրն , հրեջ աակք տկարանային առ այս . վասն որոյ որ արարն ողորմեցաւ , և որ ստեղծն գլթացաւ , զմեռանիլն յանձն էառ , և ըզբնաւ իցն կենդանութիւն նովաւ շահեցաւ :

Հետեաբար ասացելոցս և զայն խընդրելի է , թէ մեռաւ սակս 'ի մահուանէ զմեզ վերականգնելոյ , ընդէր ոչ այլովքան խաչիւ զմահ ճաշակէր 'ի վերայ հօտի իւրոյ՝ զոր ստացաւ արեամբն իւրով : Արի իմն իմաստնապէս և անձաւոյն ելչաբար զայս սքանչելադործէր , վասն որոյ և նախատեսօք զսոյն իրագործութիւն 'ի կանուխ հետէ հռչակէր . յարմարագոյն ցաւոյ մեր և հիւանդութիւն զբժշկական դեղ փրկութեան պատշաճեցուցանէր նոյն ինքն , որ զհիւանդութիւնս մեր եբարձ և վերացոյց , զոր



և համեմատելով յոյժ հաւասարագոյն  
 դոցես : Փայտիւ մեղաւ առաջինն Ադամ :  
 'ի փայտի բարձրացաւ երկրորդն Ադամ :  
 շնորհելով ամենեցուն զփայտ փրկու թէ  
 և կենդանու թեան : Պտղոյն ճաշակմամբ  
 'ի սրտուոյ անտի սրտրեալն 'ի նախ  
 նու մն անկաւ , լեղւոյն ճաշակմամբ կե-  
 նարարին էառ զճաշակ անմահու թեան  
 սրտոյն վերստին : Արդածնաւն կործանե-  
 ցաւ նախնին մարդ . յանարաա կողս իւր  
 ընկալաւ զվէրս Որդին Հօր միածին , որ  
 էառ 'ի տանէն Ադամոյ զմարմին , զի  
 յազնուականութիւնն կանգնեցէ դար-  
 ձեալ զանկեալսն յառաջինն : 'ն թացաւ  
 առաջնաստեղծն 'ի ծառն կթել ձեռօքն  
 զսրտուզն մահածին , տարածեաց զձեռս  
 իւր 'ի խաչին և բեւեռմամբ ոտին՝ որ  
 եղև 'ի զաւակէ նորին մարմին , արձա-  
 կեաց 'ի կապանաց զիւրն սրտակեր , և  
 ըստ մարդն գոլոյ՝ զիւր նախնին : Ահան  
 յայնժամ զԱդամ յադեհաց , եմոյժ այ-  
 ժըմ 'ի դրախտ անդր զգոլ որդի նորա  
 ընդ նորա : Անէծս եղ 'ի վերայ մեղան-  
 չտականին Ադամոյ . յինքն ընկալաւ զա-

նէճս վասն նորա, զի այնու օրհնեացէ  
 յօրհնութիւնս հոգևորս զճնունդս նո-  
 րա: Ի փուշ դատաստարակաց զփշաբեր  
 սխտից վանողն, զնոյն փուշ եբարձ յաս-  
 տուածային գլուխն, զի մեզ բողորեացի  
 սլասկ հոգևոր ՚ի քարանց պատուակա-  
 նաց և յիմանալեաց: Օ քիրան երեսաց  
 վճռեաց ՚ի յամօթոյ սղալման՝ քիրան ըզ-  
 գետտեալն, բրտունքն ոլուն ոլուն իջա-  
 նէին ՚ի նմանէ, զի զքիրան մեղացն ջն-  
 ջեացէ կենդանական շնչամբն օր յինքե-  
 նէ: Սերկացաւ՝ օր յանցեալն յետ ճա-  
 շակմանն, որ և զթղենւոյն ծածկոյթ ին-  
 քեան սխտաւ, մերկացաւ լոյս փառա-  
 ցըն Հօր յատեանն Պիղատոսի, և ըզ-  
 գեցաւ զքղամիթն նախատանաց, զի  
 մեզ զգեցուցէ զանապտականութեան  
 զգեստ և զանմահութէ: Սեռաւ Ագամ  
 րատ անհրաժեշտ հրամանին. ՚ի մահ-  
 ուան իւրում միշտ կենդանին ցօղեաց  
 ՚ի վերայ նորին զարիւն իւր զաստուա-  
 ծային, կենդանութիւն շնորհելով նո-  
 բին. զի կենդանութիւն ամենայն մար-

մնայ զարիւնն իւր ասաց առ օրէնս հիւ  
նրս : Հուր վառեցաւ յեւայէ ընդ բո-  
վանդակ ծագս աշխարհի . ջուր ել 'ի կու-  
ղից Փրկչին և շիջոյց զբոց ցաւագին ար-  
աին : Եւ այսպէս ամենայն փրկական ար-  
նօրինական գործք նորա որ 'ի մահուա-  
նրն՝ էին մեզ նախնի տկարութեանն կե-  
նագործողք 'ի բռնացելոյն 'ի վերայ մեր  
մահուանէն :

Իայց հաւատա զչարչարանն Փրկչին  
ոչ աստուածութեանն միայնոյ՝ զի ան-  
չարչարելի է ըստ բնութեանն , և ոչ  
մարդկութեանն միայն՝ զի ընդունայն է  
փրկութիւն մարդոյ , այլ անճառ միա-  
ւորութեւ աստուածութեանն և մարդ-  
կութեանն հաւատասցես գոլ զչարչա-  
րանսն : Իարձեալ՝ և ոչ բնութիւն մար-  
դոյն համարեալ զչարչարանոցն լինել  
ընդունակ , վերաբերութեամբ միայն  
առնուլ 'ի Բանն զչարչարանսն , զի այս  
երկաբնակացն և երկու որդւոցն ասու-  
ղացն են չորութեան դիւտք : Օ ի ա-  
հա յայանի է՝ ամենայն վերաբերութիւն  
իբագործութիւնք օտարաբար լինել առ

այն յոր ասին . ըստ որում Սամուէլ ա-  
նարդեալ՝ այլ վերաբերու թեամբ Աս-  
տուած յինքն ընկալեալ, « Բչ զքեզ, ա-  
սէ, այլ զիս անարգեցին » : Կէ զարհա-  
մարհանս և զպատիւ աշակերտացն Քր-  
րիստոսի յանձինս կրեալ և վերաբերու-  
թեամբ յինքն Բանն ընկալեալ, « Եւ որ  
զձեզ անարգէ՝ զիս անարգէ, և որ ըզ-  
ձեզ ընդուենի՝ զիս ընդուենի » : Իսկ Բանն  
ոչ այսպէս ընդուենէր զորս իւրն մարմնոյ,  
այլ որպէս իսկզբանն միաւորութեան յո-  
րովայնէ Կուսին ամենայն ինչ ներգոր-  
ծութիւն մարմնոյն՝ Բանին էր, և Բա-  
նին՝ մարմնոյն, այսպէս և չարչարանքն :  
Բանզի ոչինչ ՚ի կամաւորականն կրից իւր  
կրելով, կամ յապարասանից ոմանց ՚ի վե-  
րայ նորին ածելով, երկուց իմացեալ լի-  
նի՝ աստուածութեանն կամ մարդկու-  
թեանն, այլ անճառ միաւորութեանն,  
քանզի Աստուած Քրիստոս և մարդ-  
է Քրիստոս, վասն որոյ զմարդկայինն  
մարդկութիւն կրէր հանգերձ աստուա-  
ծութեամբն՝ այլ ոչ ըստ աստուածու-  
թեանն, որպէս և զաստուածայինն աս-

ասուածու թիւն դորձէր հանդերձ մարդ-  
 կու թեամբն՝ այլ ոչ ըստ մարդկութենէ  
 Քանզի չարչարեցաւ անչարչարելի Բանն  
 չարչարելեաւն մարմնով, ըստ որում ա-  
 սի նորա՝ իւր չարչարելի մարմինն, և  
 մնաց ինքն անչարչարելի, զի դարձեալ  
 իւր՝ նորա է անչարչարութիւնն, զի ոչ  
 եթէ ՚ի մարդկութեանն է չարչարանքն  
 ՚ի Քրիստոս, ապա թէ ոչ՝ զի՛նչ փառք  
 մարդոց չարչարիլ, այլ զի անչարչարելի  
 աստուածութեանն է չարչարանքն չար-  
 չարելի մարդկութեանն նորա, այնր ա-  
 զագաւ ՚ի չարչարանս եկեալ՝ զնոյն իւր  
 փառս կոչէր, «Այժմ փառաւորեցաւ,  
 ասէ, որդի մարդոց», և թէ՛ «Հայր փա-  
 ռաւորեալ որդի թո, զի և որդի թո փա-  
 ռաւորեցէ զքեզ»: Տես՝ զի մի և նոյն  
 Քրիստոս որդի մարդոց և որդի Աստու-  
 ծոց զինքն կոչէ, զի մի և նոյն ինքն էր  
 որդի մարդոց և տէր դարով, վասն որոց  
 չարչարեալ ասի Քրիստոս անչարչարելի  
 աստուածութեամբն՝ այլ ոչ ըստ աս-  
 տուածութեան, զի ոչ է չարչարելի աս-  
 տուածութիւնն, այլ չարչարի իւրովն՝

անչարչարելի աստուածու թեամբն . սր-  
 պէս անչարչարելի ասի Քրիստոս անչար-  
 չարելի մարդկու թեամբն՝ այլ ոչ ըստ  
 մարդկու թեանն , զի չարչարելի է մարդ-  
 կու թիւնն , այլ անչարչարելի ասի ընդ  
 անչարչարելի աստուածու թեանն միա-  
 ւորու թեամբ : Նոտ որում մարդ ՚ի հո-  
 գւոյ և ՚ի մարմնոյ միացեալ յորժամ չար-  
 չարի , ոչ լոկ մարմնոյն է չարչարանքն , զի  
 ահա անհոգի և մեռեալ մարմին ոչ ըզ-  
 դայ զչարչարանսն . և ոչ միայնակ հոգ-  
 ւոյն է չարչարանքն , զի անմարմինն հո-  
 գի բնու թեամբ է անչարչարելի , այլ մի-  
 աւորու թբ նոցին չարչարանքն . քանզի  
 չարչարի անչարչարելի հոգին չարչարե-  
 լի իւր մարմնովն , և ընդունի զչարչա-  
 րանսն չարչարելի մարմինն իւրով անչար-  
 չարելի հոգւովն : Արպէս և երկաթ հրա-  
 ցեալ չարչարի ուռամբ հարկաներով ,  
 յայտ է զի ոչ լոկ երկաթն տանջի , այլ  
 և հուրն ընդ նմա չարչարի . և ոչ հուրն  
 ըստ բնու թեան չարչարի , զի հուրն ա-  
 ւանց նիւ թոյ ինքն ըստ ինքեան անբմ-  
 բունելի է , վասն որոյ և անչարչարելի .

այլ 'ի նոյն ինքն 'ի նիւթ երկաթին ըմբռնեալ և միացեալ՝ չարչարիլ ասի անչարչարելի հուրն վասն ընդ չարչարելի երկաթն միաւորութեան :

Այսպէս անչարչարելի հուրն Աստուած չարչարիւր ընդ իւրն չարչարելի մարմնոյ, և մնայր անչարչարելի ըստ աստուածութեն իւրոյ, և չարչարելի նորա մարդկութիւնն չարչարեալ՝ և ասի անչարչարելի վասն ընդ անչարչարելի Բանն միաւորութեանն : Քանզի որ նըմանն էր մեզ ըստ նիւթական մարմնոյն ասմանն, նոյն ինքն աննման մեզ ըստ Բանին միաւորութեան, և որ նման մեզ ըստ առ 'ի մէնջ եղեւոյց, աննման մեզ աստուածանալովն և Աստուծոյ յատուկն ելլալ. վասն որոյ մեռանիլ ասի նա անմահ աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստուածութեանն՝ որ յաւէտ անմահն է, այլ մահկանացու իւրով մարմնովն անմահն էութեան զմահ ճաշակեաց. վասն որոյ և մահկանացու նորա մարդկութին զմահ կրեալ՝ և անմահ մնացեալ ընդ անմահին միաւորութեամբ, քանզի Քրիստ

տաս մեռաւ ճշմարտապէս, և էր անմահ  
ստուգապէս : Աւստի և 'ի նմանէ բխե-  
ցին կոյլակն արեան և ջրոյ . ջուր ել  
իրբև ստուգապէս մեռելոյ, և արիւնն  
բխեաց որպէս ճշմարտապէս կենդանուոյ,  
զի անշնչացեալ մարմինն կենդանի էր սու-  
տաւածու թեանն միաւորութեամբ :

Արդ մեռաւ մարմնով կենդանին յա-  
ւիտենից յերկուս տեղիս, որ զիս բռնա-  
ցեալ սրահէին . վաղելով բանական հո-  
գւովն և շնչովն առ դժոխաբնակ մարդ-  
կան հոգիսն աղատել զնոսա, և մարմնովն  
'ի մարմնածածուկ ներքսագոյն դժոխսն  
'ի գերեզման . և յերկնայինն անբաժա-  
նաբար մարմնով, զի նոյն ինքն աստուա-  
ծութիւնն որ զամենայն յամենայնի լը-  
նու, լիով էր ընդ Հօր և ընդ Հոգւոյն  
'ի միաւորութիւն աստուածութեանն,  
և էր բաւանդակ յիւրում մարդկային  
մարմինն որ 'ի գերեզմանին, և ընդ բա-  
նական իւր հոգին բաշտումին՝ յաւերու-  
մին դժոխոց : Ալ զայս հաւատասցես  
յարդեանցն իրաց, զի մարմին նորա 'ի  
գերեզմանի անդ ոչ ետես զասպականու-



Թիւն՝ որպէս վկայէ Քաւիթ, վասն ընդ-  
 անապականին միաւորու թեանն, և հոգի  
 նորա ոչ թողաւ ՚ի դժոխս՝ սակս ընդ-  
 աւերողին դժոխոց միաւորու թեանն,  
 որպէս վկայէ Պողոս՝ թէ կենդանին հո-  
 գւով երթեալ քարողեաց ՚ի դժոխսն :  
 Եւ յորժամ ելից զոնորէնու թիւնն, ա-  
 զատեաց զամենեօին յապականու թեհէ  
 և ՚ի դժոխոց, յայնժամ աստուածու-  
 թիւնն՝ որ ՚ի մահու անտի բաժանեալ  
 հոգւոյ իւրում որ ՚ի մարմնի իւրում՝  
 որ բովանդակէր ՚ի մարմինն իւր և լիով  
 ՚ի հոգի հոգին իւր, դարձեալ յերկո-  
 սին գոլ անբաժանաբար բովանդակու-  
 թեամբ զնոսին միաւորեալ՝ ՚ի դուրս  
 գայր եւօրեայ ՚ի գերեզմանէն՝ ստու-  
 դասէս նովին մարմնովն որ մեռաւ, և  
 հոգւով և մտօք կատարեալ Աստուած  
 և մարդ, որպէս և ՚ի Առսէն ծնեալ՝ նոյն  
 ինքն և ՚ի գերեզմանէն յարուցեալ՝ ծը-  
 նօղն կոյս մնացեալ, և գերեզմանին կը-  
 նիք ոչ լուծեալ : Ար և թէպէտ ՚ի բազ-  
 մու թեանն տեսիլ ոչ արար զյարու թին  
 և ոչ զհամբառնալն յերկինս իբրև ըզ-

խաչելու թիւնն և զմահն՝ վասն անար-  
 ժանու թեան ժողովոյն , զի և յարժա-  
 նուսրէն 'ի Մարիամայ արդեւոյր զինքն ,  
 « Մի յիս մերձենար ասէ » . իւրոց և զ-  
 բարցն սրբազան զնգին միայն զինքն  
 յայտնապէս երևեցուցանէր . Սակայն  
 որպէս 'ի տօնի պարսոյին կատարեաց  
 զչարչարանսն իւր , նոյնպէս և 'ի սկեւ-  
 տակոստէին՝ որ էր տօն առչու թեան  
 օրինացն , և տ զհոգին սուրբ յառաքեալ-  
 սն , որք 'ի նոյն հոգւոյ զօրացեալք զս-  
 կայեցին զյարու թիւնն Քրիստոսի և  
 զհամբարձումն յերկինս :

Ու երիս տօնս հրամայեցաւ Պատու-  
 ծոյ 'ի տարւոջ կատարել համանման մի-  
 մեանց գող բազմաժողով , տօն Զատիկին  
 և Պենտակոստէին և տօն Տաղաւորա-  
 հարացն , վասն այն բազմաժողով մար-  
 դիկ որ 'ի տօն բաղարջակերացն տեսին  
 զխաչին Քրիստոսի և զմահն , նոյն բազ-  
 մաժողով մարդիկ 'ի միւս ոյլ տօն տե-  
 սին զիջումն Հոգւոյն յառաքեալսն , և լը-  
 ւան զյարու թիւնն Քրիստոսի և զփա-  
 ռաւոր համբարձումն յերկինս , և երեք

հազարքն և հինգ հազարքն հաւատա-  
ցին ՚ի Քրիստոս :

Բայց մի ոք յայն հայելով զի յեւ-  
յառնելոյն ՚ի մեռելոց Քրիստոս եկեր և  
էարբ ընդ առաքեալն, համարեացի թէ  
յեւ յարութեանն զգալի կերակուրք  
դոն . քանզի Քրիստոս զայն յաղագս հաւ-  
տատելոյ զյարութիւնն արար, զի յայտ-  
նի լիցի՝ թէ ստուգապէս յարեաւ ՚ի մե-  
ռելոց, և ոչ է առաջօր . վասն որոյ ա-  
ռաջի առաքելոցն եկեր՝ զի վկայք եզի-  
ցին ճշմարիտ նորա յարութեանն, որ-  
պէս ասէ Պետրոս՝ թէ « Կերայք և ար-  
բայք ընդ նմա յեւ յարութեան նորա » :  
Քանզի և զայլս զորս յարոյց Քրիստոս  
՚ի մեռելոց վասն ստուգելոյ զյարութի  
նոցա ասէր՝ ուտել և ընթանալ, որպէս  
զազջիկն մեռեալ իբրև յարոյց՝ ասոց  
տալ նմա ուտել . և զՋողար հրամայէր  
՚ի կապիցն արձակել և թողուլ և դնալ,  
զի երևեսցին ստուգապէս յարուցեալք .  
նոյնպէս և լուծանելոյն անդամօք յեւ  
բժշկելոյն հրամայէր զմահիւնն բառնալ :

Իարձեալ վասն ունելոյն ՚ի ձեռան

և յստան զնշան բևեռացն , և 'ի կողմն  
 զխոցումն գեղարդեանն , մի որ կարծի-  
 ցէ թէ և 'ի մերն յարու թեան վիրօք և  
 ցաւօք լինիցին յառնել որք այնպէսն մե-  
 ռան , այլ գիտասցէ՝ զի թէ ճշմարտա-  
 պէս զգալի մարմնով և իւրաքանչիւրօք  
 իւր մարմնովն յառնէ 'ի մեռելոց : Սա-  
 կայն ամենայն ախոք մարդկայինք 'ի բաց  
 բարձեալ լինին , զի ոչ ծերն ծեր՝ և ոչ  
 տղայն 'ի տղայ մարմին յառնէ , և ոչ ե-  
 րևի անդ այր և կամ կին , նոյնպէս և  
 ոչ որ խոցեալ և անդամօք հատեալ , ար-  
 գեղ կամ վիրաւ որեալ յառնէ , այլ հա-  
 ւասարակերսլ ամենեքեան 'ի կերպարա-  
 նրս հրեշտակաց յառնեն , որպէս Քրիս-  
 տոս ասաց՝ թէ հաւասարք հրեշտակաց  
 են , զի յարու թեան որդիք են : Այլ Քր-  
 իստոսի վասն այնորիկ 'ի մարմինն կայ-  
 ին տեղիք բևեռաց և խոցումն տիգին  
 ոչ կցեալ , զի յայանի՝ թէ որ մեռաւն՝  
 նայն ինքն է որ յարեաւն , այն որ 'ի խա-  
 ջին բևեռեցաւ և խոցեցաւ , որ և 'ի  
 միւսանգամ դալտեանն նովին նշանա-  
 կու թեամբք յառնելոց է 'ի դատարար-

տու թիւն անհաւատից հրէից, զի հայ-  
 եացին ՚ի նա զոր խոցեցին և կոծեցին,  
 որպէս զՔրիստոսէ ստէ. որպէս երևեալ  
 հրեշտակքն վկայեցին՝ թէ «ՉՅիսուս նա  
 զովրացին զխաչելեալն խնդրէք, նա յա-  
 րեաւ » : Այն օյնորիկ ՚ի յարու թեանն  
 ցուցանէր զնշան խաչելու թեան, թէ  
 խաչեալն յարեաւ, և խաչեալն գալոց  
 է դատաւոր, ըստ որում և ՚ի համբառ-  
 նալն նորա յերկինս՝ երկու արքն երև-  
 եալք որք էին հրեշտակք, ասէին ցա-  
 ռարեալսն, թէ « Այս Յիսուս որ վե-  
 րացաւ ՚ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեա-  
 ցէ » : Օր և յետ յարու թեանն խնդրեա-  
 ցէ որ թէ՛ սուր լինէր, զի երբեմն երբեմն  
 երևէր աշակերտացն. թէ պէտ աւելորդ  
 է խնդրել անզի այնմ՝ որ ընդ ամենայն  
 անդիս է տէրու թիւն նորա, և ընդ փա-  
 կեալ դրունսն մտանէր, և ընդ մէջ  
 հրէիցն անցեալ ՚ի վերայ օդոյն գնայր,  
 ՚ի վերայ ջրոյ որպէս ՚ի ցամաքի շրջէր .  
 սակայն ոմանց պատշաճ համարեցաւ ա-  
 սել, թէ զաւուրս քառասուն՝ որ ՚ի յա-

բութենէն մինչև ՚ի համբառնան իւր՝  
յոզն եկաց ՚ի վեր քան զերկիր, զի և  
զայն մաքրեսցէ ՚ի ճենճերաց զոհիցն  
կոոց և յամենայն դարչահասութենէ  
մեզաց:

Եւ ցր արդեւք լցեալք երևին երեք  
տիւք և երեք գիշերք թաղման նորա ՚ի  
սիրտ երկրի: Բայց Յովհան Ոսկեբերա-  
նըն այսպէս ասէ, թէ յերեկոյէ հինգ  
շաբաթուն՝ յորում ճաշակմամբ զիւրն  
մարմին աստքելոցն թաղեցաւ յերկրե-  
ղէն սիրտ նոցա, համարեալ զերեք տիւն  
և զգիշերն: Կարձեալ և մեծն Եփրեմ  
զմիջեալ ուրբաթուն խաւարմամբ լու-  
սաւորացն զայն երկու օր համարեալ,  
և այսպէս թուեն զերիս տիւն և զգիշեր:  
Եւ այսպէս և մեծն Գիորնէսիոս աշակերտ  
սր աստքելոցն Պողոսի՝ մի յեւթանաս-  
նիցն սրբազան դասուցն, այսպիսի ասէ,  
թէ զթաղումն աստուածպետականին ՚ի  
սիրտ երկրի երիս տիւս և գիշեր ասեմ:  
Տես՝ զի ընդ տիւն և ընդ գիշերն երիս  
ասէ, և յայսմ ճշմարտի յարութիւնն  
Քրիստոսի յաւուր շաբաթու՝ զոր աւե-

տարանիչն Մատթէոս ասէ , թէ « Յե-  
րեկոյի շաբաթուն յորում լուսանայր  
միաշաբաթին » : Այն բանիւ առ Նոյիւ  
և լիսն յաճախելոյ չարեացն զքսան ամն  
կարճեաց . և չորեքհարիւր ամ տաց  
որդւոցն Իսրայէլի կալ յԵգիպտոս , և  
գթութեամբն զերկերիւրն բաւականա-  
ցոյց <sup>1</sup> վճիռն : Այսպէս արագագոյն ի-  
մըն սուարտել զմերն փրկութիւն ստու-  
գապէս մահուամբն և թաղմամբն՝ կան-  
խագոյն արար զյարութիւնն իւր քան  
զնախնի պայման հրամանն , զի թէ ա-  
ռաւելեալ էր՝ այնոքիկ էին խտրանաց ,  
իսկ զի համառօտեցան՝ քաջութեան  
հզօրին և մարդասիրութեան մերոյ փրկ-  
կողին են ցոյցք :

Աւ ընդէր զյարութիւնն նախ քան  
արանց՝ կանանց արար յայտնի զնոյն : Օ ի  
որոց այսպանութիւն նախ հնչեալ բողո-  
քեաց ՚ի բնութիւնս , և ՚ի նոցանէ և  
՚ի նորոգութիւնն աւետեալ հռչակեաց  
՚ի մարդկութիւնս . միանգամայն զի և  
կանանց ազգ աւելի իմն և զօրագոյն քան

<sup>1</sup> Յօրէն . 24 հաւն :

զարս համբաւել զտեղեկացեալն և ոչ  
 թաղուցանել, և ևս՝ զի որ տքնի, վա-  
 ղադոյն ժամանէ որում փափաքէ, և  
 նորա յաւելադոյն իմն հողածեցին վասն  
 կենարարին թաղման սրտուոյ, վասն ո-  
 բոյ յառաջագոյն վայելեցին ՚ի տեսիլ յա-  
 բուցելոյն: Իսկ այլք խնդիրք որ վասն  
 իւղաբեր կանանց, երևման հրեշտա-  
 կոյ և այլոյ, և խորհրդական տեսու-  
 թէց ՚ի սոյն յարմարեցելոյ, կանխադոյն  
 քան զմեզ իմաստնոցն ճառեալ զնոյն:

Իայց մեզ աստանօր խնդրելի է, թէ  
 ընդ էր Հողին սուրբ ոչ եկն յառաքեալ  
 սըն մինչ Քրիստոս յաշխարհի էր: Իան-  
 զի ինքն բաւական էր ՚ի մխիթարութի-  
 նոցա ընդ նոսին լինելովն, և ևս՝ զի ինքն  
 մարդեղութեն դաստիարակեալ կրթու-  
 ցէ զողայամիտսն զնոսին, և ապա Հո-  
 գին եկեալ իբրև առ կատարեալս՝ զա-  
 մենակատար զօրութիւնն իւր ՚ի նոսին  
 առատապէս լցուցէ, ըստ որում ասէր  
 Քրիստոս. «Լաւ է ձեզ եթէ ես երթամ,  
 զի՝ թէ ես ոչ երթայց մխիթարիչն ոչ  
 եկեացէ առ ձեզ», իբր թէ մեծագոյն



չահն և վարդապետութիւնն նմա է պահեալ ներդործել առ ձեզ :

Եւ թէ յօր իջման Հոգւոյն 'ի նոսա ընկալան զհոգին, ապա զի՛նչ է այն որ յետ յարութեն իւրոյ ինքն Քրիստոս մտեալ առ նոսին փչեաց 'ի նոսա զհոգին ասելով. « Առէք հոգի սուրբ » : Յայնժամ մասնաւորաբար ետ 'ի նոսա 'ի շնորհաց հոգւոյն , զի ընդելեալք և կրթեալք, կարողացին զառաւելագոյն տանել, և մի վնասեցին յահաւոր զօրութենէ երևեցելոյն . քանզի թէ հրեշտակ երևեալ Դանիէլի հանդերձեալ էր մեռանիլ՝ թէ ոչ 'ի նմանէ էր օժանդակեալ, որչափ և ս առաւել առաքեալքն՝ որ ըզՏէրն հրեշտակաց հանդերձեալ էին ընդունել : Այսն որոյ նախնի փչմամբն կազմ և պատրաստս դործեաց զնոսա Քրիստոս ընդունել զէակիցն իւր :

Եւ ընդէր ոչ իսկոյն 'ի համբառնալն Քրիստոսի առաքեցաւ Հոգին , այլ աւուրք ինչ ընդ մէջ անցին : Օ, ի արամեսցին և ախրեցին որք մնացեալք 'ի վարդապետէն, և զմտաւ ամեալ զխոտաւ մն

աւետեացն առսքման՝ սիրով և յուսով  
հայցեսցեն զգալուստ նորա, և ՚ի սէտս  
պարգևին հասեալ մեծաւ փառագմամբ  
ըղձանայցեն նմա :

Եւ էր վասն աւուրք ինն եղեն ՚ի  
համբառնալոյ անտի Փրկչին մինչև յի-  
ջումն մտիթարչին : Վիտելի է, զի ա-  
մենայն սլարգևք աստուածայինք ՚ի վե-  
րուստ երկնաւորացն սպասաւորութքք  
յերկրաւորս իջանեն . իսկ մարդեղու-  
թեանն Քրիստոսի տնօրէնութիւնք զան-  
խուլ յերկնաւորացն առ երկրաւորս  
կատարեցաւ, ներքնագոյն դասուցն նո-  
ցա միայն տեղեկութք հրեշտակական  
գնդին : Իսկ վեհագոյնք ամ իշխանու-  
թիւնքն, հրեշտակապետքն և պետու-  
թիւնքն, զօրութիւնքն և տէրութիւնքն, սերով  
բէքն և քերովբէքն և աթուքն յերկրա-  
ւորս եկեղեցւոյ ուսան զբաղմապատիկ  
իմաստութիւնն Քրիստոսի, որպէս յայտ  
առնէ Պօղոս : Վասն որոյ ըստ ինն դա-  
սուցն աւուրս ինն յամեաց իջումն աւե-  
տեացն, իբր թէ համբարձեալն առ իւ-  
րաքանչիւր դասս երկնայնոցն օր մի ե-

զեալ, առ ՚ի խորհրդազգածս առնել  
 զնոսս՝ որպէս ցուցանեն Եսայիաս և Դա-  
 ւիթ. զի վերինք հարցանելին ՚ի տեսա-  
 նելն զՔրիստոս, թէ այս սկէ որ գայ  
 արիւնազգեստեալ. և ներքինք պատաս-  
 խանելն, թէ Տէր կարող ՚ի պատերազ-  
 մի, որ եհար զթշնամին և վերկեաց զա-  
 րարածս. և այսպէս ուսուցանեն զերկ-  
 նայինսն :

Ըստ որում է իմն աւանդութեամբ  
 առ մեզ հասեալ, թէ մերն Ղուսաւորչի  
 հրեշտակ գոլով սպասաւոր ՚ի չորրորդ  
 դասու երկնաւորացն, և յամենայն ա-  
 ւուր երևէր նմա. իսկ ՚ի չորրորդ աւուր  
 որ յետ համբառնալոյն Քրիստոսի, որ է  
 կիրակէ օրն, ոչ եկն զուարթունն առ  
 սուրբն, որ ՚ի գալն իբրև հարցեալ ե-  
 ղև, պատասխանեաց՝ թէ տօն մեծ էր  
 իմոյ դասուն որ յերկինս : Ասան որոյ ի-  
 մացեալ լուսատուն հողոց, եթէ յամ  
 ամի երկնաւորքն զօր ելանելոյն Քրիս-  
 տոսի առ նոսա տօնեն, և ինքն զայն օր  
 կարգեաց յեկեղեցիս տօն գալստեանն  
 Քրիստոսի, զոր ցմանք վասն ոչ գիտելոյ

զխորհուրդն՝ տօն ծագկաղարդի կոչեն, և երգ և եղանակ զարմաւենեաց տօնին կատարեն: Այս աղագաւ աւուրքս այս ընդ մէջ անցին: Աւ յորժամ մարմնովն նստաւ Տէրն ընդաջմէ Հօր, առաքեաց զՀօգին, զի սարս էր յերկինս քրեւել մերոյ բնութեանս, և հաշտութեանցն աւարտեալ լինել, և ապա գալ Հոգւոյն և յարդարել հաշտ զգիտութիւնն:

Արդ այսօրիկ՝ յիջմանէ Բանին յարգանդ Կուսին մինչ ՚ի համբառնալն յերկինս՝ սակաւուք բաւականացին, և վարն միւս անգամ գալստեանն Մատթէոս աւետարանիչն լուսապայծառս իմն ճառէ ահաւորապէս և յայանբարբառ լինել ըստ արեգականն ծագման, զխաչն ընդ ինքեան ունելով ՚ի պարծանս հաւատացելոց և ՚ի դատապարտութիւն անհաւատից, և փողով հրեշտակաց ժողովէ առ ինքն զամենայն ծագս երկրի, զի ինքն է գալոց գատաւոր ամենայն արարածոց, զբարեգործսն մշտնջենաւոր հանգստեան վիճակելով, և զչարսն անձամբ անձին դատապարտել ՚ի սան,

Զանսն արտասահմանելով յաւիտենա-  
կան և անսահման տանջանօր : Այլ սյ-  
սօքիկ այսքան :

Իսցց եկեացուք ՚ի կոչմունս Արդւոյ  
յաղաքս անախտ ծննդեան . քան զի որ  
բան էր ՚ի հայրականն սրտէ Հօր բըղ-  
խեալ Ատուած , և ՚ի սկզբանէ առ Ա-  
տուած , նոյն ինքն վասն մերոյ փրկու-  
թեան մարդ եղեալ , և ՚ի բաղմաստաթիկ  
բարերարութեանցն որ առ մեզ յաշնա-  
կի անուամբ անուանեալ լինի յատուա-  
ծաբանիցն բանիւք : Սիւսին՝ որպէս ՚ի  
միայնոյ Հօրէ անմայր ծնեալ անժամա-  
նակ , նոյն և ՚ի Աուսէ ծնեալ անհայր ՚ի  
ժամանակի : Վասն՝ վասն զի պատարա-  
գեցաւ և զմեզս եբարձ զաշխարհի , և  
զի զգեստ եղեալ մերկութեան մերոյ :  
Ազն՝ զի զբանն կենաց սերմանեաց յաշ-  
խարհի . և նոյն է եզն պարարակ՝ որ զե-  
նաւ ՚ի դարձ անառակին : Առիւծ՝ զի  
թագաւոր էր և առանց մեղաց և առ-  
տուածախառն մարմնովն : Արծուի՝ զի  
հանդերձ մարմնովն սլացաւ ՚ի ծոց Հօր :  
Բաղէ՝ զի որսալոց է զհոյլս արդարոցն :

Միեղջերու՝ զի միածինն ՚ի Հօրէ և միա-  
 հեծանն աստուածութեամբն : Չի կոչե-  
 ցաւ , զի զօրեղապէս և կամաւ գիմեաց  
 ՚ի չարչարաննն : Յիւ՛ զի աղատ էր ՚ի  
 մեղաց : Աքաղող և նոխազ՝ զի գալոց  
 է յաւուրն յեանում : Մեղու՛ զի ճար-  
 տարապետ էր և արարիչ քաղցրութիւն :  
 Մրջիւն՝ զի պատրաստեաց մեզ կերակուր  
 հոգևոր յամարայնոյն : Արդն՝ զի զթա-  
 դաւորական մետաքսն լուսեղէն զգես-  
 տունն ծնաւ մեզ : Հեծեալ իշու և ուղ-  
 տու , զի ճանապարհաւ հեզութեամբ ե-  
 կրն և բարձրացոյց զանկեալս : Հատ՝ զի  
 մեռանելոց էր , որով և բազում արդիւ-  
 նըս արար : Աէմ՝ զի հաստատուն էր  
 աստուածութեամբն ընդ Հօր , մարմին  
 լինելովն եղաւ ՚ի գլուխ անկեան հո-  
 գևոր շինուածոց մարդկային բնութեւ :  
 Օտա՛ զի պտղով նորա լցան ամենայն  
 տիեզերք : Ասկի՛ զի ամենապատիւ էր ,  
 արծաթ՝ զի անբիծ էր և սուրբ : Հաց՝  
 յերկնից իջեալ և յերկրէ յայտնեալ , զի  
 կերակուր կենաց քաղցելոց պարգևե-  
 ցաւ : Պղբ՝ զի հաւատարիմ է , և հա-

ւատացելոցն անծարաւ ըմպելի : Գետ՝  
 զի յորովայնէ ՚ի նա հաւատացելոցն բը-  
 խելոց էր ջուր կենդանի : Որթ՝ զի ըզ-  
 կենաց բաժակ արեան իւրոյ մատուռա-  
 կեաց մեզ, որով և ուռ զմեզ հաւատով  
 յինքն պատուաստեաց : Օտայ՝ զի հը-  
 նազանդ էր Հօր կամաւ : Ասող ՚ի Յա-  
 կոբայ՝ զի սրայծառ՝ էր տեսլեամբ : Սար-  
 գարիտ ծովածին՝ զի լոյս էր աշխարհի :  
 Քահանայ՝ զի քաւիչ և միջնորդ է : Հո-  
 վիւ՝ զի եկեղեցւոյ գլուխ է : Ղանա-  
 պարհ՝ զի առաջնորդ էր դրախտին վայ-  
 ելման : Վուռն առ Հայր մօից : Սորան  
 չորեքիւսի՝ մարմին խաչապէս . թա-  
 փանցիկ պարզունակ՝ անքննելի որովայն .  
 թիթեղն նուիրեալ՝ հայեցուածք սքան-  
 ճելի աչաց , և վերնափեղկ մազեղէն՝  
 գադաթն գլուխն գովեալ . գործ ան-  
 կուածոյ՝ աճումն աստուածացեալ մար-  
 մնոյն . բեհեղն և ծիրանի՝ մարմինն եր-  
 կնագոյն . խարիսխ հաստատուն՝ գար-  
 շասպարն երկնակոխ . լծակ ոսկեպատ՝ ձե-  
 ուրն աշխարհաստեղծ . զանգակն ոսկի՝

լեզուն վորդապետութեան զուգաստուած առեցելովն : Արդ զչարս բանիս սյուսէս տեսցես և զայլս յաւելցես, զի աներևոյթք նորա արարածութիւնս տեսանին :

Իսկ զխոնարհագին ձայնս վասն մարդանալոյն իմա ասացեալ ՚ի վերայ Փրօղիչին մերոյ Աստուծոյ, զայն թէ՛ « Ոչ կարեմես առնել յանձնէ և ոչինչ », և թէ՛ « Զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ », և թէ՛ « Որդւոյ ետ ունեւ կեանքս յանձին » . և զառաքելոյ ասելն . « Թէպէտ որդի է՛ ուսաւ ՚ի չարչարանաց անտի զհնազանդութիւն » . և ինքն ասէր . « Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն », և թէ՛ « Աստուած զնա առաւել բարձրացոյց » : Իսկ զի որ ընդ Հօր իւրում ունէր զկեանս և զիշխանութիւն և զփառս և զբարձրութիւն, յորժամ միացոյց ընդ ինքեան զճառայական մարմինն՝ այնր ազագաւ և այս ձայնք ՚ի վերայ նորին խօսեցեալք յարադրեցան : Եւ զայն թէ՛ « Տէր և օծեալ զնա Աստուած սրար », և թէ՛ « Զնա Աստուած



յարոյց 'ի մեռելոց », մի փաբրիու թիւն  
 Որդւոյ համարեացիս՝ իբրև 'ի Հօրէ զօ-  
 րացեալ, այլ մարդեղու թեանն զայս կա-  
 չու մն իմացիս : Քանզի թէ Աստուած  
 Հայր յարոյց զնա 'ի մեռելոց, և մի է  
 աստուածու թիւնն՝ իւրն և Հօրն, և ան-  
 բաժանելի է յաստուածու թեան, յայտ  
 է զի ինքն զինքն յարոյց . քանզի Հայր 'ի  
 նա՝ և նա 'ի Հայր, որպէս ինքն ասէր :  
 Այնպէս և ինքն էօծ, զի և օծու թքն  
 'ի Հայր էր, և ասի՝ թէ զնա էօծ, և  
 ասելն թէ՝ տէր և օծեալ արար, այսինքն  
 թէ՝ յայտնեաց եցոյց : Ալ վասն ժամա-  
 նակին և տկարու թեան լսողացն սյսպի-  
 սի թաքնաբար բանք զնմանէ ճառէին :  
 Այսպէս առցես և զասելն իւր իսկ ըզ-  
 բանին, թէ « Տէր ստացաւ զիս 'ի սկիզբն  
 ճանապարհաց իւրոց 'ի գործս » . քան-  
 զի ոչ է թէ նորոգ ինչ ստացաւ Հայր զՈր-  
 դի յանգոյից իբրև զգործի իւր, ըստ ո-  
 բում զօղանջեաց ժանդն Արիոս, այլ զի  
 իսկզբանէ էակիցն իւր և զհամագոյ բա-  
 նըն կամօք և հաճու թեամբ ստացաւ 'ի  
 գործ փրկու թեան մերոյ տնօրէնու թք

իւրով : Քանզի ստանալ ոչ միայն 'ի վե-  
 րայ նոր և յոչէից գոյացելոցն ասի ,  
 այլ և 'ի վերայ էիցն եղելոց , և յայլ  
 գործ պատրաստելոցն ասացեալ լինի ,  
 ըստ այնմ թէ՛ « Զժողովուրդ զոր ստա-  
 ցեալ է , օրհնեսցէ զնա » , որ ոչ թէ  
 զնոր ստեղծանելն ասէ , այլ զստեղծեա-  
 լն 'ի կռոց պաշտամանէն վերստին իւր  
 ժողովուրդ առնուլ ստանալ ասէ : Եւ  
 Դաւիթ հայցէ , թէ « Սիրտ սուրբ ըս-  
 տացիր յիս Աստուած » , զիւր գոյացեալ  
 սիրտն յայլ իմն գեղեցկու թիւն ստանալ  
 ինդրէ յԱստուծոյ : Եւ յայէս և այն ձայն  
 և որք յայսմ յարմարին , քանզի յաղագս  
 անձառ և անքակ միաւորութեան բը-  
 նութեանցն միշտ մարմնականք՝ Բանին  
 տսին , և աստուածայինքն՝ մարմնոյն .  
 զի մի որդի էր Աստուածն մարդացեալ  
 և մարդն աստուածացեալ , մի տէր Յի-  
 սուս Քրիստոս փրկիչ մեր և տէր փառա-  
 կից Հօր և Հոգւոյն , օրհնեալ յաւիտեա-  
 նքս . ամէն :

